Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

203
G.77

676

Ե-2008
2013
203
4035
123970

ԵՐԳՔ ՀՈԳԵՒՈՐՔ

ՀԱՄԱՀԱՒԱՔԵԱԼՔ ՑԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՑՈՑ·

Խմբագրեաց

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՑ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՑԿԱԿԱՆ ՁԱՑՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀԱՑՈՑ
ԵՐԵՒԱՆԱՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՑԱՒԵԼԵԱԼ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻՍ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
1893—ՌՃԽԲ

ՀԱՅ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. Ալիշանի անվ. Գրադարան
ՀԱԽՀ-ՍՍՀ
Ակադ. Մատենադարան
Ս. Մաշտոցի անվ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

44-99

(1977-91)

VI

V-223

203/Ս-22

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՎԵՂԱՄԵԼԻՈՒ ՈՐԴԻՈՅ ԽՄՈՅ

ՍՈՒՐԷՆԱՅ

ՈՐ Ի ԾԱՂԻԿ ՀԱՍԱԿԻ ՆՆՋԵՑԱՅ Ի ՔՐԻՍՏՈՍ.

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽՀ-ՍՍՀ
Ա. Մասիսյան անվան

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հանաձայն մեր եկեղեցական-ծիսական ուսումնարանների և հոգևոր դպրոցների կանոնագրութեան և ծրագրին՝ պարտադիր է ամէն մի աշակերտի և աշակերտուհոյ համար սովորել նաև եկեղեցական երգեցողութիւն, որը իբրև արուեստ (ձայնագրութիւն) սկսւում է հազիւ առաջին դասարանից, այնպես ոչ օրիորդաց, այլ միայն տղայոց ուսումնարաններում։ Բայց ի նկատի ունենալով որ մինչև այդ արուեստի սկիզբը և աշակերտների նոյն արուեստում փոքր ի շատէ զարգանալը՝ տարիներ են հարկաւոր, դորա համար իբր օժանդակ միջոց կազմեցի սոյն փոքրիկ եկեղեցական երգարանը, որի մասին աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել։

Մանուկներին բերանացի սովորցնել և կամ ստիպել, որ նոքա մտքումն պահեն աւանդածը, եթէ ոչ անհնարին՝ գոնէ աւելի դժուար է. ուրեմն՝ մնում է միակ միջոց արտագրել տալ՝ կամ թելադրել նրանց նոր աւանդելի կամ արդէն աւանդած նիւթը։ Եթէ թէ այդ միջոցով էլ որքան դժուար է նպատակին հասնիլը, այդ աւելի շուտ կը հասկանայ իւրաքանչիւր բանիմաց ուսուցիչ՝ որը ունի կամ ունեցել է գործ փոքր աշակերտների հետ։ Բաւական է յիշել, նախ՝ որ արտագրել տալով՝ աշակերտները ժամավաճառ են լինում՝ այն ինչ՝ նոքա կարող էին այդ միջո-

ցում իրենց մասաւոր զարգացման նպաստող այլ և այլ առարկաներով գբաղուիլ։ Երկրորդ՝ գրութեան ժամանակ զանազան աղաւաղութիւններ են առաջ գալիս, որովհետև նոքա ձգտում և աշխատումեն՝ որքան կարելի է՝ շուտ գրել և շուտով ազատուիլ այդպիսի մի ձանձրալի աշխատութիւնից՝ որպիսին է արտագրութիւնը։ Այդպիսով էլ անտարակոյս նոքա տգեղացնումեն իրանց գործը, սխալներով զարդարում տեսրակները և նորից սրբագրութեան համար մի նոր աշխատանքի դուռ բաց անում։

Գրքոյկիս առաջին տպագրութեան մէջ նշմարած թերութիւններն ուղղելով և մի քանի նոր յաւելուածներ անելով, աւելացրի նաև եկեղեցական-ծիսական ուսումնարանների ծրագրում յիշատակուած բոլոր շարականները։

Ուստի՝ մասամբ հայ մանուկներին օգնելու, նրանց գործը հեշտացնելու և սխալներից ազատ պահելու նպատակով, վստահացայ կազմել սոյն փոքրիկ եկեղեցական երգարանը։ բայց թէ որքան ինձ յաջողուեց հասնիլ իմ նպատակին, այդ թողնումեմ ընթերցող հասարակութեան անաչառութեանը, որը ի նկատի ունենալով վերոյիշեալ օգուտները, ներողամիտ կգտնուի ձեռնարկութեանս թերութիւններին։

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ։

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Որ կատարի ի մէջ զիջերի

Սղ.—Գ.—Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վերայ իմ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր։

Այլ դու, Տէր, օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Զայնիւ իմով ես առ Տէր կարգացի, և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է։

Ոչ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա՝ զոր շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս։

Արի՛, Տէր, և փրկեա՛ զիս Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան, զոր էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց և զատամունս մեղաւորաց փշրեսցես։

Տեառնդ է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քոյ, օրհնութիւն քոյ։

Սղ.—Զէ.—Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարգացի և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, խոնար-

հեսցի ունկն քո ի խնդրուածս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ՝ և կեանք իմ ի դժոխս մերձեցան։ և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք իջանեն ի գուբ։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի՝ և ի մեռեալս ազատ։

Որպէս զվիրաւորս՝ որք ննջեն ի գերեզմանս։

Զորս դու ոչ յիշեցեր՝ նոքա՝ ի ձեռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ի գբի ներքնումն՝ ի խաւարի և ի ստուերս մահու։

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո՝ զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ։

Հեռի արարեր յինէն՝ զծանօթս իմ՝ և եդին զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի՝ աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ՝ և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Մի թէ մեռելոց առնիցես զսքանչելիս քո՝ կամ բժիշկք յարուցեալ՝ խոստովան առնիցին առ քեզ։

Մի թէ պատմեսցէ՞ ոք երբէք ի գերեզմանի զողորմութիւնս քո՝ կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան։

Մի թէ ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո՝ կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ։

Ես առ քեզ Տէր՝ աղաղակեցի՝ առաւօտու ա՛ղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէ՞ր Տէր՝ մերժես զանձն իմ՝ կամ դարձուցանես զերեսս քո՝ յինէն։

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ։ ի բարձրութենէ խոնարհեցայ և ափշեցայ։

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո՝ արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինև որպէս ջուր՝ զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ՝ վասն թշուառութեան իմոյ։

Սղ. — ՃԲ. — Օրհնեա՛՝ անձն իմ զՏէր՝ և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա։

Օրհնեա՛՝ անձն իմ զՏէր՝ և մի մոռանար զամենայն տուրս նորա։

Ո՞՝ քաւէ զմեղս քո՝ բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։

Ո՞՝ փրկէ յապականութենէ զկեանս քո՝ պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։

Ո՞՝ լնու ի բարութենէ զցանկութիւն քո՝ նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո։

Առնէ ողորմութիւնս Տէր՝ և իրաւունս ամենայն զրկելոց։

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի՝ և որդւոցն Իսրայէլի զկամս իւր։

Գթած ողորմած է Տէր՝ երկայնամիտ և բազումողորմ։

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր՝ և ո՛չ յաւիտեան պահէ ոխս։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր՝ և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ՝ այնպէս

զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արևելք յարևմտից, այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացի Տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի։

Շնչէ ի նմա հողմ, և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութիւն Տեառն՝ մնայ յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչև յորդիս։

Այք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէք զՏէր, ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ՝ այք առնէք զբան նորա, ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէք զՏէր, ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա։

Օրհնեցէք զՏէր, ամենայն գործք նորա, զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա։ օրհնեա՛ անձն իմ զՏէր։

Սղ.—Ճ՚Խբ.—Տէր, լուր աղօթից իմոց, ունկնդիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս ի խաւարի, որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո։ յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ, Տէր, զի նուազեցաւ յի նէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ այք իջանեն ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ի քեզ, Տէր, յուսացայ։

Յոյց ինձ ճանապարհ յոր և գնացից, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց, Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո, Տէր, կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ, և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

ԵՐԳ

Տէրունական Նէրսէսի (Շնորհալի) Կաթողիկոսի Հայոց։

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր։
Բղխեսցեն սիրտք մեր զքան բարի։ և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ։
Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ Տէր։
Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո ի մէջ նոր Երուսաղէմի։
Ի գիշերի հմբորձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր։
Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր։

Փոխ.— Զարթիք փառք իմ, զարթիք, և ես զարթեայց առաւօտուց։ ալէլուիա։
Զարթիք ընդ զուարթունս։ մանկունք վերինն Սիօնի։ ալէ։
Զարթիք որդիք լուսոյ։ ի յօրհնութիւն Հօրն լուսոյ։ ալէ։
Զարթիք փրկեալք արեամբ, և տուք զփառս փրկողին։ ալէ։
Զարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նո՛ր բոգոյին։ ալէ։

Զարթիք հարսունք հոգւով։ սպասեալք գալոյ սուրբ փեսային։ ալէ։
Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն։ ալէ։
Զարթիք պատրաստեցէք իւղ լապտերաց ձեր արտասուս։ ալէ։
Զարթիք և մի՛ հնջէք, նման յիմար կուսից ներհէք։ ալէ։
Զարթիք երկիրպագցուք, և արտասուօք զայս ասասցուք։ ալէ։

Փոխ. Զարթիր ընդէ՞ր հնջես, Տէր, մի՛ մերժեր զմեզ խսպառ։
Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ։ տացուք անուանդ քում զփառս։
Այժմ և յաւէտ։ Հօր և Որդւոյ, և Սուրբ Հոգւոյն, ամէն։

Փ. Զարթուցեալքս ի զբաղմանէ գիշերային հանգըստենէ։
Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր միխիթարութիւն և ի սփոփանս եկեղեցւոյ։
Ահիւ և դողութեամբ կացցուք ի յաղօթս։
Եկեալ խոստովանեսցուք զյանցանս։
Եւ գայցուք ի Քրիստոսէ զքաւութիւն և զմեծ զողորմութիւն։
Ամէն։ ալէլուիա։ ալէլուիա։ ալէլուիա։
Ամէն։ ալէլուիա։ ալէլուիա։ ալէլուիա։

Նորին տէառն Նէրսէսի Հայոց Կաթողիկոսի երգ։

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար
Առիս լոյս ծագեա։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գրտող զիս արա։

Երբեակ միութիւն,
Եղելոց ինամող,
Եւ ինձ ողորմեա։

Էդ Հայր անըսկիզբն,
Լակից Որդի՝
Ի միշտ Սուրբ Հոգի։

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ ըզ յանցանս։

Ի քէն Տէր հայցեմ,
Ի մարդասիրէդ,
Ինձ ըԺըշկութիւն։

Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա՝
Խորհուրդ լուսաւոր։

Կենարար փրկիչ,
Կեցո՛ ըզմեռեալս,
Կանգնեա՛ զգլորեալս։

Բղխումն ի Հօրէ
Բղխեա՛ ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս։

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց՝
Դասեցո՛ վերնոցն։

Զարթիր Տէր՝ յօգնել՝
Զարթո՛ ըզ թմրեալս՝
Զուարթնոց նմանիլ։

Ընկալ զիս գթած՝
Ընկա՛լ ողորմած՝
Ընկա՛լ մարդասէր։

Ժողովող բարեաց՝
Ժողովեա՛ և զիս՝
Ժողովս անդրանկաց։

Լեր կեանք մեռելոյս՝
Լայս խաւարելոյս՝
Լուծանող ցաւոյս։

Ծնունդ Հօր-ծոցոյ՝
Ծածկելոյս ստուերաւ՝
Ծագեա՛ լոյս փառաց։

Հաստեա հաւատով՝
Հաստատեա՛ յուսով՝
Հիմնեցո՛ սիրով։

Ձայնիւս աղաչեմ՝
Ձեռօքս պաղատիմ՝
Ձիր բարեաց շնորհեա։

Ճառագայթ փառաց՝
Ճանապարհ ինձ ցոյց՝
Ճեպել ի յերկինս։

Յարժամ գան փառօք՝
Յահաչին աւուրն՝
Յիշեա՛ զիս Քրիստոս։

Շնորհատու բարեաց՝
Շնորհեա՛ զքաւութիւն՝
Շնորհեա՛ զթողութիւն։

Չար մշակողին՝
Չար սերմանց նորին՝
Չորացո՛ զպտուղն։

Ջուր շնորհեա՛ աչացս՝
Ջերմ հեղուլ արտօսր՝
Ջընջել ըզյանցանս։

Սէր անուն Յիսուս՝
Սիրով քով ճրմլեա՝
Սիրա իմ քարեղէն։

Տենչալոյդ տեսլեամբ՝
Տուր ինձ յագենալ՝
Տէր Յիսուս Քրիստոս։

Յօղ արեան քո Տէր՝
Յօղեա՛ ի հոգիս՝
Յընծասցէ անձն իմ։

Ղամբարամբ լուսոյ՝
Ղեկավար ճարտար՝
Ղօղեալս ամրացո՛։

Մեծինըդ Հօր՝
Մոյծ զիս յառագաստ՝
Մաքուր հարսանեացդ։

Նորոգող հնութեանց՝
Նորոգեա՛ և զիս՝
Նորոգ զարդարեա։

Ուրախացո՛ Տէր՝
Ուրախութեամբ՝
Ոյր վասն եմ ի սուգ։

Պարգևիչ բարեաց՝
Պարգևեա՛ իմոյ՝
Պարտեացս թողութիւն։

Ռեռինըդ քաղցու՝
Ռամ հոգւոյս արբո՛՝
Ռահ ցոյց ինձ լուսոյ։

Վասն գրթութեան՝
Վասն ողորմութեան՝
Վերստին կեցո՛։

Բարունգ երկնաւոր՝
Բոտեա՛ զաշակերտս՝
Բամից երկնայնոց։

Խիւծեալս մեղօք՝
Խիւծեալ աղաչեմ՝
Խիւսել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից՝ Քաւիչ յանցանաց՝
Փութա՛ զիս փրկել՝ Քաւեա՛ զօրհնաբանս՝
Փորձութեանց մեղաց։ Քեզ երգել ըզփառս։

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ։
Ցիշեա՛ Տէր՝ և ողորմեա՛։

Նոր էն պէտք Նէրսէսի Հայոց կաթողիկոսի երգ։

Աշխարհ ամենայն՝ Բանամ զշրթունս՝
Առիս նայեցեալ՝ Բարբառիմ լեզուաւս՝
Ախտակից լերուք։ Բողոքեմ զանձնէս։
Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛։

Գող եղէ մեղաց՝ Դաւեցի զանձն իմ՝
Գտող կորստեան՝ Դաւաճանեցի՝
Գուբ ինձ փորեցի։ Դարան գործեցի։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Երբեմն էի լոյս՝ Զխարդ պատմեցիս՝
Եւ այժմ եմ խաւար՝ Զթիւ մեղաց իմոց՝
Եւ ստուերս մահու։ Զի բազում են յոյժ։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Երկինք և երկիր՝ Ընտրեցի զչարն՝
Եկայք ողբացէք՝ Ընկալայ կամաւ՝
Եղկելի զանձն իմ։ Ըզհոյլս մեղաց։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Թաթաւիմ ողմով՝ Ժանտ ախտիւ լցեալ՝
Թաւալիմ ի մեղս՝ Ցահահոտ եղէ՝
Թօթափիլ չկարեմ։ Ցամենակս բազումս։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Ի բաց մեկնեցայ՝ Լաւ վարկաւ անձն իմ՝
Ի սուրբ խորհրդոց՝ Լուսոյն հեռանալ՝
Ի բարեաց գործոց։ Լինել ընդ խաւար։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Խորհուրդքք չարին՝ Ծածկեն անդնդոք՝
Խաբեն զհոգիս՝ Ծիծաղին գլորմամբս՝
Խորաստոյգ առնեն։ Ծանակ զիս առնեն։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Կամաւ կորացայ՝ Գուբ մեղաց կիզող՝
Կարկամեալ անձամբ՝ Հրդեհեաց որ յիս՝
Կանգնիլ ոչ կարեմ։ Հոգևոր բարիս։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Զաղկեցայ մեղօք՝ Ղեղի դառնութեան՝
Զաղեցին տեսողք՝ Ղօղեալ ի սիրտ իմ՝
Զանձրացաւ հոգիս։ Ղամպար իմ շիջաւ։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Ճաշակմամբ մեղաց՝ Մեռեալ եմ հոգւովս՝
Ճաշեցի ըզմահ՝ Մոլորեալ մտօքս՝
Ճոխս ողբատացայ։ Միայն կամ մարմնովս։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Յորոգայթ մահու՝ Նեափց թշնամւոյն՝
Յորսողին անկայ՝ Նշաւակ եղէ՝
Յաղթեցայ յաղտից։ Նոր միշտ խոցոտիմ։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Շուրջ պատեալ զինև՝ Որս եղէ չարին՝
Շունք բազումք եղեն՝ Ուռկանաւ մեղաց՝
Շաղախին արեամբս։ Որսացաւ անձն իմ։
Տէր ողոր. Տէր ողոր. Տէր ողոր.

Զարաչար վրշտօք՝ Պարտական գլխոյ՝
Զարչարի անձն իմ՝ Պարտուց յանցանաց՝
Զունիմ դադարումն։ Պատրեալս ի մեղաց։
Տէր ողոր՝ Տէր ողոր՝ Տէր ողոր՝

Զանամ զըղջանալ՝ Ռաբբի կոչեցեալ՝
Ջեռանիմ գարձեալ՝ Ռակայ անուանիմ՝
Ջեռնում հրով մեղաց։ Ռամկական վարուքս։
Տէր ողոր՝ Տէր ողոր՝ Տէր ողոր՝

Սիրով ցանկութեան՝ Վիրօք յանցանաց՝
Սատիկ բարկութեան՝ Վշտանայ հոգիս՝
Սիրտ իմ խոցեալ է։ Վտրանեալ շըրջիմ։
Տէր ողոր՝ Տէր ողոր՝ Տէր ողոր՝

Տիրեցին ինձ չարք՝ Բարուն-ուղղն բարւոյ՝
Տարագիր հանին՝ Բախճական ձայնին՝
Տիրական գլրկացն։ Բոռենս ոչ լուայ։
Տէր ողոր՝ Տէր ողոր՝ Տէր ողոր՝

Ցանկութիւն չարեաց՝ Խիւրաքանչիւրոց՝
Ցանկալի գիմօք՝ Խիւսմամբ խուռն ախտից
Ցաւեցոյց զաչս իմ։ Խիւծեալ է հոգիս։
Տէր ողոր՝ Տէր ողոր՝ Տէր ողոր՝

Փութացիր անձն իմ՝ Քեզ միշտ մերձ ծանիլ
Փախչիլ ի չարեաց՝ Բուն մահու եկեալ՝
Փափագիլ բարեաց։ Քրննող դատաւոր։
Տէր ողոր՝ Տէր ողոր՝ Տէր ողոր՝

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ։

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛։

Նոր ոգեաւոր Նէրսէսի Հայոց կաթողիկոսի երգ։

Յառաւօտեան ժամերգութեան Կիւրակէից մեծի պահոց եւ ի տօնս Խաչի երգել փոխանակ Հանգստեան շարականի։

Դկ. Այսօր անճառ լուսոյն ծագումն
Ի փրկութեան մեր կատարումն՝
Խոնարհի ի վերնատունն՝
Ի սառերական ասնիդ լըրումն։
Նախքան զընթրիսըն խորհրդոյ՝
Սփածաւ ղենջակ արկղն լուսոյ՝
Եւ ջուր առեալ ծառայաբար՝
Զոտքս լուանայր զաշակերտացն։

Բանին հօր փառաց լուսոյ՝
Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր՝
Այնմ ձեռաց՝ որոյ են գործք
Երկնից երկինք և երկրաւորք։
Որով կուրաց աչքք բացան
Խուլք և համերք արձակեցան՝
Որ վերաձեաց զինքն ի ծովէն
Սառոեաց ալեացն և լռեցին։

Գըլխոյն ընարեալ հօտին փոքու
Սատէր զխորհուրդն ոչ գիտելոյ՝
Որով դառնայր և հնազանդէր
Զոտս և զգլուխս մաքրել մաղթէր։
Գըլխոյդ ասէ՝ չէ ինչ պիտոյ
Լուացումն ջրոյ՝ զի լուացեալ է
Ոտիցըդ պէտք են մաքրութեան
Յօդիլ ի գլուխս սրբութեամբ։

Գասուց իւրոց աշակերտաց
Զոր նախ բանիւ վարդապետեաց,
Այսօր գործով ըզծայրագոյնն
Եցոյց յինքեան զխոնարհութիւն.
Սպասաւորեալ հողեղինաց
Այն որ անտեսն է հրեղինաց,
Տարեալ պաշտօն իւր ծառայիցն
Այն որ պաշտին ի սրովբէից։

Եթէ Տէրս, ասէ, էիր
Եւ վարդապետքս բոլորիս,
Զաշակերտացդ և զծառայիս
Զոտքս լուացի ի հնոյ աղտից.
Միմեանց և դուք համաբնութեամբ
Յուցէք ըզնոյն խոնարհութիւն,
Բարձրացելոյն ի կործանումն
Եւ անկելոյ բնութեանդ կանգնումն։

Զոր մաքրեցեր յաւազանին
Մաքուր ձեռօք զոտքս նոցին,
Եւ ուսուցեր խոնարհութեամբ
Յաղթող լինել չար հպարտին.
Եւ զիմ լուա զոտիզմն մեզաց
Աղաչանօք սրբոյ գընդին,
Եւ ըզգնացս ուղղեա զոտին
Խոնարհութեամբ ելիւք յերկինս։

Էիր զօրէնսդն Մովսէսի
Զոր խօսեցաւն ի Սինայի,
Եկեր ըզգառն օրինակին
Եւ զքաղաքն ընդ եղեգին.

Ըզհինն ի նորքս փոխելով
Զբաստուերն ի լոյս ճշմարտելով,
Փոխան գառինն ինքքն գոլով
Գառն Աստուծոյ նըւիրելով։

Ընդ բաղարջին հաց անխմոր
Եւ ըզմարմինն իւր զերկնաւոր,
Ըզկուսածինն անսերմնաւոր
Զանապականն և զհոգեւոր.
Ընդ ոչխարին արեան ուխտին
Եւ մեզ զԱրիւնն իւր ուխտ կրկին,
Եւ եղեգան գառնագունին
Փոխան ըզվարս աստուածային։

Թագաւորն արարածոց
Զհացքն կենաց եւ քաղցելոց,
Եւ զբաժակն ուրախարար
Որք յԱդամայ տրրտմեցելոց,
Այս նոր ուխտ է իմոյ Արեան
Փոխան հընոյ ուխտին արեանց,
Զոր յիշատակ իմ առնիցէք
Մինչև եկիցս ես միւսանգամ։

Ժողովեալքս ի քէն հայցեմք
Ընդ ժողովեալ Մեսսիային,
Որ զկենարարդ քո Մարմին
Բաշխեալ ետուր ընդ Բաժակին.
Շնորհեա և մեզ Տէր ընդ նոսին
Հաղորդ լինել քում սեղանին,
Կենաց Հացիդ յոր փափագիմք
Եւ Ըմպելոյդ ում ծարաւիմք։

Ի յընտրելոց աշակերտացն
Յուդաս մեկնեալ ի սուրբ գառանցն,
Զքարձող մեղայ զԳառն Աստուծոյ
Մատնէր ի մահ ընդ արծաթոյ.
Ի յընթրիսըն հոգևոր
Մերձի ժըպիրհն և նենգաւորն,
Ուտելով ընդ Վարդապետըն
Յաճախէ զիսաբէութիւն։

Լոյսըն խօսէր աղերսալի
Խաւարելոյն վասն դարձի,
Մի ոմն ի ձէնջ, ասէ, եղբարք
Զիս մատնելոց է առ ի մահ.
Պետրոս լուեալ զայն զարհուրէր
Եւ ակնարկէր առ Յովհաննէս,
Հարցանել թէ ո՞վ իցէ
Դաւաճանող Վարդապետին։

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն
Ըզորտմութիւնըն վարատեաց,
Թացեալ պատառ տայ Յուդայի
Նըշաւակեալ զգողըն մատնիչ.
Զոր առեալ և մերկացաւ
ՅԱստուածային հոգւոյն շնորհաց,
Մատնեցաւ նախաչարին
Ընդ մատնութեան Վարդապետին։

Տայրագոյն լուսոյն զըրկեալ
Խաւարասէրն արտաքս ելեալ,
Տէրըն յայտնէր լոյս եղելոյն
Ըզգայթակղին ի գիշերին.

Պետրոս խօսէր խրախուսելի
Եւ կշտամբիւր հաւախօսի,
Զիւրն յաշխարհէ զփոխիլն ասէր
Եւ զգալուստ Հոգւոյն պատմէր։

Կեդրոնեան յայնկոյս Զորոյ՝
Ի վերնատունն ել խորհրդոյ,
Էմուտ պարտէզ ընդ պարտիզի
Էմոյծ զԱդամ յԱդին դրախտին,
Մուծցես և զմեզ Տէր ընդ նմին
Ուստի հաներ նախ զառաջինն,
Զի ժառանգել զհայրենին
Արժանասցուք մեք վերըստին։

Հոգայր ըզկրիցն տըրտմաբար
Երիւքն եղեալ առանձնաբար,
Փըրկել զաշխարհս հոգիս յօժար
Բայց է բնութիւն մարմնոյս տըկար.
Ո՛չ ոմն ուժեղ և զօրաւոր
Եւ ոմն անզօր վըտանգաւոր,
Այլ մի և նոյն գոլ միաւոր
Կըրէր ըզկիրսըն կամաւոր։

Զայնիւ մաղթէր աղօթական
Վասն իմ առ Հայր իւր էկան,
Ծունըր դընէր խոնարհական
Որում կըրկնի ծունր ամենայն.
Եթէ փըրկիլ մարդկան հնար է
Առանց մահու իմ որ գրեալ է,
Բաժակ մահուս յինէն անցցէ
Ոչ իմ կամաւ, այլ քոյդ եսցէ։

44-99
123990
3
Հայաստանի ազգային գրադարան

Ղօղեալ յերկիւղ քրոանց հոսման
Ղառնաձեւ կայլակ վիժման,
Ի զօրանալ Հրեշտակ մերձեալ
Զօրինական գիրքն լրցեալ,
Զի կատարեալ էառ զընութիւն
Աստուածքն Բան ըզմարդկութեան,
Պարտէր զերկիւղ և զտրտմութիւն
Ցիւրումքն կրել անօրէնութեան։

Ճառագայթ փառաց էին
Որ ըստ ընութեանս մարդկային,
Տագնապեցար ի գիշերին
Աղօթեցեր առ Հայր յերկին.
Ծագեա՛ ի մեզ զլոյսդ երկնային
Եւ փարատեա զերկիւղ չարին,
Մասունք հոգւոց մեր և մարմին
Յերկիւղ քո սուրբ բեւեռեսցին։

Մերձեալ Յուդաս որ մատնելոյ
Հանդերձ դասուն փարիսեցւոյ,
Անկան նըման ստորանկելոցն
Որք յաւիտեան չեն կանգնելոց,
Յուդաս նենգաւ համբուրելով
Առիթ մահու նըշան տալով,
Փոխան սիրոյ զնա մատնելով,
Զար ընդ բարւոյ վրճարելով։

Յայնժամ՝ առ գութ սիրոյն Պետրոս
Ըզծառային անուն Մաղքոս,
Եհատ սուսերբ գականջն աջոյ
Որ ոչ լուաւ Տեառըն իւրոյ.

Իսկ Տէրըն մեր արագապէս
Յունկըն մերձեալ բըժշկապէս,
Առողջացոյց Աստուածապէս
Զոր ոչ տեսին կուրացն հանդէս։

Նոր հօտին փոքու ցըրուեալ
Բանդի զՀովիւըն քաջ հարեալ,
Պետրոս միայն ըզհետ երթեալ
Ի յաղջկանէ վիմին շարժեալ,
Նըշանակեալ հաւըն խօսէր
Առ ի Պետրոս Տէրն ակնարկէր,
Զբանըն յիշէր դառն արտասուէր
Ի գլորմանէն դարձեալ կանգնէր։

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ
Զոր պահեցեր ի հոսելոյ,
Եւ կանգնեցեր ի գլորելոյ
Վասըն սրտին արտասուելոյ.
Կանգնեա՛ և զիս Տէր ընդ նմին
Ի գլորմանէ սայթաքողին,
Տալով աչացս յորդ արտասուս
Եւ ջուր նման ծովու գրկոցս։

Ո՞վ կամաւ զանկապելին
Կապեալ ըզձեռս արձակողին,
Ի յապարանսըն տանէին
Կայիափայ և Աննային.
Ծառայն զերեան այն ապտակէր
Յորմէ սրովբէն թեւասքողէր
Թուք արձակեալ պիղծ բերանովն
Յայն որ կուրին լոյս ծագեայ թքովն։

Զար կապանաց մարդկան լուծիչ
Որ կապեցեր ընդ կապելոյն,
Զիս արձակեա՛ յինքնակապէս
Մեղաց կապից դըժոխայնոյն.
Որ ընդ մեղօք պարտաւորին
Կացեր անմեղդ ի յատենի,
Յորժամ վառօք գաս հայրենի
Մի՛ դատեսցես զիս ընդ նոսին։

Պատկառանօք հինն Ադամայ
Որ ձաղեցար վասըն նորա,
Զընչեա՛ զամօթ մեղաց լըրբին
Որով զերեսս իմ ծածկեցին.
Որ ներեցեր չար ծառային
Ածել ձեռօք քեզ ապտակին,
Հա՛ր ուժգնակի զդէմքս չարին
Որպէս և զիս եհար ուժգին։

Զահըն լուսոյ յառաւօտին
Ի յուրբաթու հընոյ զատկին,
Կայր առաջի դատաւորին
Ծառայն նատէր ի յատենին.
Ի հարցանել Պիղատոսի
Տէրն ոչ առնէր պատասխանի,
Զի կանխասաց Գիրքն լըցցի
Եղէ ես մարդ որ ոչ խօսի։

Բամկական դասք զինուորացն
Արկին հանդերձ նախատանաց,
Ա՛նմ որոյ զգեստն է լոյս փառաց
Իբրև զօթոց զինքեամբ արկած.

Ի Ծունր իջեալ կատակէին
Զգլուխն եղեգամբ հարկանէին,
Պսակ ի փշոց բոլորէին
Ըզփուշ մեղացըն բարձողին։

Սոսկալին քերովբէից
Բառնայր ինքեամբ զփայտ խաչին,
Մինչ ի տեղի Գողգոթային
Յորում եղեալ մարդն առաջին.
Եռուն ըմպել գինի զմըռսեալ
Եւ կերակուր լեղեաւ խառնեալ,
Որով զպըտղոյն դառըն ճաշակ
Փոխեաց մեզ քաղցր և ախորժակ։

Վերնականքըն զարհուրեալ
Տեսին զՏէրըն մերկացեալ
Եւ զհանդերձըն բաժանեալ
Պատմուճանին վիճակ արկեալ.
Ըզձեռն և զոտսըն ծակեցին
Ըստ յայտնապէս Դաւթեան ձայնին,
Ընդ փայտ խաչին բեւեռեցին
Զմատուռնան որ գրեաց ի ախտակին։

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց
Ոսք ընդ ոտից ընթանալեաց,
Փայտ ընդ փայտի դառըն պըտղոյ
Կեանք ընդ մահու փոխարկելով.
Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուռղն օրինաց,
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց
Բայց ի միոյն յաւազակաց։

Բոպէից արեգականն
Ըզտիւն արար գիշերանմանն,
Զբստուերքն քօղ արկ մերկութեան
Զի մի տեսցէ ակն անարժանն.
Ի միջօրեայն նըսեմացաւ
Յորժամ Ադամ մեղօք մեռաւ,
Ի յիններորդն ի լոյս դարձաւ
Յորժամ մահուամբ մահըն լուծաւ:

Յողէր արտօսրը ցաւագին
Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին,
Յորժամ լսէր ըզծարաւին
Բարբառելոյ իւր Միածնին.
Եռուն քացախ խառնեալ լեզի
Անմ որ բըխեաց գետ յԱդենի
Եւ ի վիմէն վրտակ բարի
Արբոյց տոհմին դառնացողի:

Խիւծեալ յերրորդ ժամու օձին
Զմիտրս նախնւոյ մօրն Եւայինն,
Ի վերջն անկեալ մարդն առաջին
Հաւանական բանիւ նորին.
Ի սոյն ժամու Տէրն ի խաչին
Զի քաւեսցէ զմեղրս նոցին,
Եւ յորժամ եկ Ադամըն հին
Եդ զաւազակն ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ
Էլի Էլի առ Հայր գոչէր,
Զհոգին կամաւ Հօր աւանդէր
Զհոգիս մարդկան նոյն ընծայէր.

Երկիր հիմամբք սասանեցաւ
Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ
Վէմք ի յինքեանց պատառեցան
Եւ գերեզմանք մահու բացան:

Քարոզի ի սքանչելեացս
Աստուած մարմնով վասն իմ խաչեալ,
Մերով բնութեամբքս մեռանի
Աստուած անմահ խոստովանի.
Կըրկնավըտակ կողին աղբերքք
Եկեղեցի իւր հաստատի,
Ջրովքն մաքրի զԱրիւնն ըմպէ
Զորդի ընդ Հօր փառաւորէ:

Սաղմոս առաքելական ընդ Այսօր անճառին:

Ալէլուիա. ալէլուիա. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորր արարեր, ողորմեա՛ ինձ և լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն,

Ծաներուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում, և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք և մի մեղանչէք, զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարութեան և յուսացարուք ի Տէր:

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն.

նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պողոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք։

Զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Ալէլուիա օրթի։

Ն՞ՐԷՆ ՊԷՏՔՆ ՆԵՐՈՒՆԻ ՀԱՅՈՑ ԿԱՐՈՂԷԿՈՒՆ ԵՐԳ.

Զկնի խաչելութեան աւետարանին։

ԲԿ. ԴԿ. Նորոգող տիեզերաց
Որ զգեցուցեր մեզ լոյս վառաց,
Արկար ըզքեզ ի զինուորաց
Քղամիդ կարմիր նախատանաց.
Մերկեա՛ յինէն ըզքուրձ մեղաց
Ըզոբրամագինն արեամբ ներկած,
Եւ ըզգեցո՛ զուրախալին
Ըզպատմուճանն իմ զառաջին։

Երկնաւոր թագաւորիդ
Ի ծունր իջեալ խաղ առնէին,
Ծածկեալ ըզգլուխդ կրուփէին
Եւ եղեգամբ հարկանէին.
Եւ զիմ անկեալ մինչ ի գետին
Ի հնազանդիլ կամաց յարին,
Մի թողուցուս խաղալ սովին
Այլ կանգնեսցես զիս վերստին։

Բամեալ բոլորըդ քո մարմին
Յետ վրձրոյ դատաւորին,
Սաստիկ էառ զհարուած գանին
Վասն գանից նախաստեղծին.
Զիս որ յոտից մինչև ցըգլուխ
Յաւօք նեղիմ անհնարին,
Առողջացո՛ դարձեալ կրկին
Որպէս շնորհօք յաւազանին։

Սրբափայլ պըճնեալ զարդուն
Զոր զգեցուցեր Ահարոնին,
Փոխան պըսակ ի փշոց եղին
Մշակք այգւոյն Իսրայէլին.
Ըզփուշ մեղաց հանցես յինէն
Զոր յիս եհար իմ թշնամին,
Եւ ողջացո՛ զխայթուած վիրին
Զի սպիք մեղացըն ջընջեսցին։

ԲՁ. ԴՁ. Եռուն ըմպել քեզ ըզլեղին
Եւ զքացախն ի ծարաւին,
Արբեր կամաւ զի քաղցրասցին
Ճաշակք պըտղոյն դառնագունին.
Ըզդառնութիւն թիւնաւորին
Զոր ի մասունս հոգւոյս արկին,
Հերքեա՛ ի բաց հանդերձ սովին
Եւ քաղցրասցի սէր քո ի սին։

Ստեղնեալ ծառոյ մահաբերին
Այնմ որ բուսաւ ի մէջ դրախտին,
Փոխան բարձեր ըզփայտ խաչին
Ի գողգոթա հաներ տեղին.

Զիմ առ ի մեղս անկեալ զոգի
Եւ ծանրագոյն բարձող բեռին,
Բարձ ի յուսոյդ ըստ ոչխարին
Հան ի յերկինս յուխտեալ տեղին։

Ի յուրբաթու ժամ երրորդին
Բեւեռեցար Տէր ի խաչին,
Լուծեր զկապանս նախաստեղծին
Եւ կապեցեր ըզթշնամին.
Զիս ամրացո՛ ընդ հովանեաւ
Կենդանարար քո նշանին,
Եւ ի ծագելն յարևելից
Լուսաւորեա՛ լուսով նորին։

Երանեալ Աւազակին
Բացեր ըզդուռն Ադին դրախտին,
Ըստ հաւատոյ սրբոյ նորին
Կատարեցեր ըզխնդրելին.
Տո՛ւր և ինձ Տէր ընդ նմին
Լսել ըզնոյն պատասխանին,
Այսօր ընդ իս իցես յԱդին
Ի հայրենիս քո առաջին։

Ակ. Գկ. Բարբառելով զնվի նլին
Հիմունք երկրի տատանէին,
Եւ վարագոյր հին օրինին
Վերուստ ի վայր պատառէին.
Արդ ընդ վիմանցն շարժէին
Շարժեա՛ զանշարժ սիրտս ի բարին,
Ընդ պատառել վարագուրին
Զիմ պատառեա՛ ըզգիր պարտին։

Արեգական լոյս քօղ արկեալ
Խաւարանայր միջօրէին,
Եւ գերեզմանքք բանային
Մարմինք սրբոցըն յառնէին.
Ընդ խաւարիլ լուսաւորացն
Մաքրեա՛ յինէն զգործ խաւարին,
Ընդ մեռելոցն որք յառնէին
Կանգնեա՛ զմեղօք մեռեալ հոգիս։

Նոր սիրոյ պատուիրանին
Գործով լրցող եղեր բանին,
Աղօթելով առ Հայր յերկին
Թողուլ զմեղս որ ի խաչին,
Ինձ որ հոգւովս հաւատացեալ
Երկրպագեմ քեզ Միածին,
Թող զլուծումն հրամանին
Մի՛ յիշեսցին մեղքն առաջին։

Սարսեցին սանդարամետք
Ի յաւանդել առ Հայր զհոգիդ,
Որ ի գրժոխս իջեր ներքին
Ի բանդ մահու և խաւարին.
Կապեալ զիշխանքն մահածին
Հաներ զհոգիսն որ ի բանտին,
Եւ զիս հանցես, Տէր, ընդ նոսին
Բանդէ մեղայ աղջամղջին։

Աղ. Գզ. Աղբերայն անապական
Որ յետ մահուն անմահարար,
Բղխեալ ի քէն վրատակ կրկին
Ի նորոգումն կողածնին.

Բաց զբերան իմ յարբուցումն
Քո արեան կենարարին,
Լուսա՛ դարձեալ յաւազանին
Թէ ոչ շնորհօք այլ արտասուօք։

Յանմահիդ մեռանելոյ
Զմեռեալ հոգիս կենդանացո՛,
Թաղմամբ ի նոր գերեզմանի
Զթաղեալս ի մեզս վերածեա՛
Ի գբի ներքնումն իջանելով
Ի գբոյն մեղաց վերաբերեա՛,
Ի ստուերս մահու քո բնակելով
Լուսաւորեա՛ և զիս հոգւով։

Սիրտ իմ առ քեզ աղաղակէ
Բանդ որ ընդ Հօր խօսգբանէ,
Որ կամաւոր վասըն մարդկան
Կրեցեր մարմնով զայս ամենայն։
Ինձ լսելի արա՛ ըզձայն
Յաբբայութեանըն քո կոչման,
Ընդ ժողովոցն անդ անդրանկացն
Օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան։

Տէ՛ռ Նէրսէ՛ս Հայոց կաթո՛ղիկոսի երգ։ (Վառ ՀՀՁեցելոց։)

Զկնի հանգստեան աւետարանի։

Բկ։ Դկ։ Մատ։

Ստուած անեղ անժամանակ
Հայր անըսկիզբն և անքանակ,
Որդւոյ պատճառ ծննդեան անճառ
Հոգւոյն բըխմամբ անքննաբար։
Աղաչեմք ըզքեզ դըթած,

Երկայնամիտ և ողորմած,
Ողորմեա՛ քս ստեղծուածոյս
Ի քեզ յուսով նընջեցելոյս։

Բանդ որ ի ծոց Հօր միածին,
Եւ կերպարան սկըզբնատըպին
Որով երկինքք գոյացան
Աշխարհ լրիւ հաստատեցան։
Հայցեմք ի քէն Տէր և փրկիչ
Ամէնողորմ և կեցուցիչ։ Ողորմ։

Գերագոյն շնորհաց բաշխող
Երկնաւորաց և երկրայնոց,
Կեանք և կենաց տըւող Հոգի
Հօր և Որդւոյ սրարչակից։
Խնդրեմք ի քէն աղբիւր բարեաց
Արբուցանողդ ծարաւեաց։ Ողորմ։

Գաւանիմք ընդ սրովբէից
Զկենդանարարըդ համայնից,
Երեք սրբեան մի Տէրութիւն՝
Զհայր և զՈրդի և սուրբ զՀոգի։
Յոր հանգուցեալս մըկըրտեալ
Եւ հաւատով խոստովանեալ։ Ողորմ։

Երրակի թիւ կատարեալ
Յերիս անձինըս բաժանեալ,
Երրորդութեամբ միաւորեալ
Միով բնութեամբ հաւասարեալ։
Յորմէ կապեալք և արձակիմք
Եւ վերըստին անլոյծ կապիմք։ Ողորմ։

Զէակիցըդ Հօր զՈրդի
Փառաւորեմք անլքռելի,
Որ իջեր յարգանդ կուսին
ԶԱդամային առեր մարմին.
Աղաչանօք Աստուածածնին
Անապական քում ծընողին. Ողորմ:

Երեւեցար մարմնով յերկրի
Որ ի Հօրէ անմեկնելի,
Ընդ հողեղէնս բնակեցար
Ի հրեղինաց երկրպագեալդ.
Պաղատանօք երկնաւորաց
Փառաբանիչ քոց հրեշտակաց. Ողորմ:

Ըստ օրինացն Մովսիսի
Ընծայեցար ի տաճարին,
Զի ըզբնութիւնս մարդկային
Ընծայեսցես Հօր ի յերկին.
Խնդրուածովք սուրբ Ծերունւոյն
Քեւ ի կապիդ արձակելոյն. Ողորմ:

Թագաւորըդ հրեղինայ
Որ ընդ մարդկան հողեղինայ,
Շրջեցար անօրինաբար
Կրեցեր զկիրս մարդկաբար.
Որ վասն մեր զայս ամենայն
Ի յանձն առեր խնարհութեամբ. Ողորմ:

Բզ. Դզ.
Մրկ.

Ժողովեալս ի հրաժարումն
Ծառայի քո յաշխարհէ,
Հայցեմք ի քէն արտասուելով

Եւ պաղատիմք զայս ասելով.
Ճանապարհ ընդ քեզ ելից
Ընջեցելոյս լեր ուղեկից,
Ի յօթեւանս Հօր քոյ լուսոյ
Ըզննջեցեալս մեր Հանգո:

Ի փրկութեան մերոյ սկըզբան
Մրկըրատեցար ի Յորդանան,
Զոր շնորհեցեր նոր աւազան
Ի մաքրութիւն մեզաց մարդկան,
Հայցմամբ կըրկին կարապետին
Մեծին ի ծնունդս Մրկըրտչին. Ի յօթ.

Լուսաւոր ձայնիւ յերկնից
Զքեզ դաւանեաց Հայր էակից,
Աղաւնակերպ Հոգին իջեալ
Առ համագոյդ իւր Հանգուցեալ.
Ըզմրկըրտեալս նովին Հոգւով
Յորդէգրութիւն Հօր հաւատով. Ի յօթ.

Խաւար մեզաց հալածեցաւ
Լոյս գիտութեան քեւ ծագեցաւ,
Խայթուած օձին բրժըշկեցաւ
Չիւանդութիւն մեր ողջացաւ.
Կենդանարարըդ մեռելոց
Եւ լուսատուդ խաւարելոց. Ի յօթ.

Դագումն անուն առ ի Հօրէ
Որ ընտրեցեր ի յաշխարհէ,
Լուսաւորիչ տիեզերաց
Ըզդասս ընտրեալ աշակերտացն

Աղաչանօք Առաքելոցն
Փող յարութեան մեր եղելոց. Ի յօթ.

Կեանք ի կենաց լոյս ի լուսոյ
Որ ստեղծեր զմեզ ի հողոյ,
Նորոգեցեր դարձեալ կըրկին
Ծնընդեամբ սրբոյ աւազանին.
Զոր կեցուցեր շնորհիւ քոյին
Ի մահուանէն այն առաջին. Ի յօթ.

Հոգւով լցեր զմարդն առաջին
Զոր կորուսեալ խաբմամբ չարին,
Ըզնոյն հոգի բանիւ քոյին
Հեղեր յոգիս մեր վերստին.
Նովին հոգւով սուրբ և բարի
Առաջնորդեա՛ հոգւոյ սորին. Ի յօթ.

Զայնեցեր առ Ղազարոս
Որով ետուր մեռելոց յոյս,
Կենդանութեամբ չորեքօրեայն
Կենդանացան որք յԱդամայն.
Կենաց ձայնիւ վերջին փողոյ
Կոչեա ըզսա յայսըմ հողոյ. Ի յօթ.

Ղօղեալ սարսեաց պահակ մահու
Ի կենարար ձայնին լըրոյ,
Արագապէս զոյգ ընդ բանին
Եւ ըզմեռեալն ըստ հրամանին.
Իշխանք օդոյս այս սարսեցին
Զհոգի սորա մի արգելցեն. Ի յօթ։

Ակ. Գկ.
Ղուկ.

Ճանապարհ մոլորելոց
Եւ ճառագայթ խաւարելոց,
Հրաւիրեցեր զորդիս լուսոյ
Ի յերկնային հարսանիս քո.
Ընդ զուարճալից անդ ժողովոց
Արժանացո՛ ըզսա դասուց,
Լի լապտերօք մոյծ յառագաստ
Ընդ խմաստուն սուրբ կուսանացն։

Մերով բնութեամբ զոր ըզգեցար
Ի փայտ խաչին բեւեռեցար,
Լուծանելով զմեզ ի մեղաց
Ի նախահօրըն կապանաց.
Լոյծ և ըզսա ի յանցանաց
Վասն քո սուրբ չարչարանաց. Լի լապ.

Յետ կամաւոր մահու խաչի
Եդար ի նոր գերեզմանի,
Երեքօրեայ թաղմամբ յերկրի
Նոր ըստեղծեր զմեզ կենդանի.
Զիջեալս ընդ քեզ ի հող մահու
Վերակոչեա՛ ձայնիւ փողոյ. Լի լապ.

Ընստեալ կանանցն իւղաբերից
Եւ ողբային արտասուալից,
Իբր ըզմեռեալ անյուսալից
Ըզկենդանիդ յաւիտենից.
Վասն նոցին սուրբ արտասուաց
Մաքրեա՛ ըզսա ի յանցանաց. Լի լապ.

Շարժեալ հիմանցըն դըժոխոց
Ի տեսանել ըզքեզ ներքնոց,

Հաներ զՀոգիսն որ ի բանտին
Կապեալ զիշխանքն մահաձին.
Ընդ հանգուցեալ Հոգիս սրբոց
Հանգո՛ զՀոգիս նընջեցելոց. Լի լապ.

Ուրախութեամբ զօրք երկնային
Յերկնից յերկիր իջանէին,
Յորժամ յարեար ի մեռելոց
Լոյս ծագեցար արարածոց.
Սուրբ յարութեամբ քո կենարար
Յարո՛ ըզսա ի կեանս անմահ. Լի լապ.

Ընհանգուրժեալ պահապանացն
Ի յերկիւղէ երկնաւորացն,
Որք աւետիս տային կանանց
Թէ մահ լուծաւ մահկանացուաց.
Սո՛ որ մահու քո տընկակից
Լիցի կենացդ հաղորդակից. Լի լապ.

Պարակցեալ անմարմնականքն
Առ կենսատու սուրբ գերեզմանն,
Տան աւետիս աղգի մարդկան
Վասն կենացն յաւէժական.
Դասաւորեա՛ պարուց նոցին
Ըզնընջեցեալս յօրըն վերջին. Լի լապ.

Հահաւորեալ նըշան խաչին
Յարեւելից փայլեալ ծագին,
Հաւատացեալքն ի քեզ բերկրին
Եւ ուրացողքն կոծեսցին.
Ցերկրրպագուս սրբոյ Խաչին
Պայծառացո՛ լուսով նորին. Լի լապ.

ԱՁ. ԳՁ. ՅՈՎՀ.

Ահ գործեալ երկնաւորաց
Դան առաջի քո նախընթաց,
Զընտրեալըս քո ժողովելով
Քեզ ընդ առաջ բերեն ամպով.
Ընդ աղաւնեաց օդապարից
Խառնեա՛ ըզսա սուրբ երամից,
Դասաւորեա՛ ըզսա վերնոցն
Երգել ըզփառս ընդ զբարթնոցն։

Սարսափին տարերք երկրի
Յորժամ փառօք գաս հայրենի,
Արեգական լոյս խաւարի
Լուսինն աստեղքքն նըւազին.
Ըզսա յաւուրն աներեկի
Լուսաւորեա՛ լուսով քոյին. Դասա.

Վերնական զօրացըն պետ
Փողէ բարբառ աւետաբեր,
Արիք մեռեալք որք Ադամայ
Քանզի ահա՛ եկըն փեսայ.
Ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց
Կարգեա՛ ըզսա ի թիւ սրբոց. Դասա.

Տիրական յաթոռ նրստիս
Յարարածոց երկրրպագիս,
Արդարութեամբ զաշխարհ դատես
Վարձս ըստ գործոց հատուցանես.
Յայնժամ շնորհեա՛ ողորմութիւն
Նընջեցելոյս մեր թողութիւն. Դասա.

Բամեալ մարդկան աղգ ժողովին

Որք յԱդամայ ծընեալք լինին,
Եւ հրեղինաց դասք երկնային
Համանգամայն վայրաքերին.
Ի յայնմ ահեղ հրապարակին
Ցիշեա՛ ըզսա յօրն ահագին. Դասա.

Յուցանին գաղտնիք մարդկան
Իւրաքանչիւր որ գործեցան,
Բարեաց գործողքըն պըսակին
Չարեացն ի հուրն անշէջ մատնին.
Յայնժամ յիշեա՛ զսորա բարին
Գործըք մեղացըն ջընջեսցին. Դասա.

Իւսին պըսակք զանազանեալք
Եւ պատմուճանք լուսափայլեալք,
Սուրբ վկայիցն ի գլուխ եդեալ
Եւ արդարոցըն զարդարեալ.
Հաղորդս արա՛ հայցմամբ նոցին
Ըզսա՛ լուսոյ փառաց նոցին. Դասա.

Փառաց ի փառըս բարձրանան
Աջակողմեանքըն վերանան,
Յորժամ լըսեն զերանական
Զայն օրհնութեան ի քէն կոչման.
Ընջեցելոյս մեր լըսեցո
ԶԱստուածային բարբառըդ քո. Դասա.

Քահանայք և ժողովուրդք
Հայցեմք ի քէն տէր բարեգութ,
Ընդ ընջեցեալսըն հաւատով
Ընկա՛լ ըզմեզ նովին յուսով.
Ցերուսաղէմ քաղաք վերին

Յորում արդարքըն ժողովին,
Փառս վերերգել միշտ ընդ նոսին
Երրորդութեանդ երրեակ անձին:

ԵՐԳ.Բ

Ծննդեան:

Կուսածին մարդացեալ Աստուած իմ Յիսուս, յայնմ աւուր ահեղ ատենին, զգինս արեան քո մի դատապարտեր. Օգնեա՛ և ինձ Քրիստոս այսօր, յառաջին ճանապարհին. և ի միւսանգամ գալստեանըդ քո օգնեա՛ ինձ:

Վ. Ս. Առաքելոց: Լը:

Աստուածածին անարատ Մայր Տեառն և կոյս սուրբ. բարեխօսեա՛ առ Որդիդ քո Միածին. զի փրկեսցէ զմեզ իսպառնալեաց գեհենոյն. և պարգևեսցէ մեզ զերկնից զարքայութիւնն. և հանգուսցէ զհոգիս մեր ընջեցելոցն. Օգնեա՛ և ինձ.

Զայնիւ առ քեզ տէր պաղատիմք
Եւ առաջի քո անկանիմք,
Աղաչանօք Աստուածածնին
Շիջո՛ ի մէնջ ըզբոց հնոցին.
Տո՛ւր արտասուօք զմեղքս ջնջել
Եւ վերստին զմեզ նորոգել.
Ողորմած տէր ողորմեա
Հոգւոցն մեր ընջեցելոց:

Ի պօնչ Առաքելոց յղ-ընեան Լը:

Զէակիցըդ Հօր զՈրդի
Փառաւորեմք անլռելի,
Որ իջեր յարգանդ կուսին

Զ Աղամային առեր զմարմին.
Աղաչանօք Աստուածածնին
Անապական քում ծընողին. Ողորմած.

Քառասնօրեայ գալստեան:

Ըստ օրինացըն Մովսէսի
Ընծայեցար ի տաճարին,
Զի. ըզբնութիւնըս մարդկային
Ընծայեսցես Հօր ի յերկինս.
Խընդրուածովք սուրբ ծերունւոյն
Քև ի կապից արձակելոյն. Ողորմած.

Յարու-նեան:

Ուրախացան ազգըք մարդկան
Յորժամ լուան զքո յարութիւնդ,
Նորափեսուր զարդարեցան
Ի յարութեան սուրբ Միածնիդ. Ողորմած.

Ուրախութեամբ զօրք երկնային
Յերկնից յերկիր իջանէին,
Յորժամ յարեար ի մեռելոց
Լոյս ծագեցար արարածոց.
Սուրբ յարութեամբ քո կենարար
Յարս և զմեզ ի կեանս անմահ. Ողորմած.

Մաղխաղարդի և համբարձման:

Թագաւոր փառաց Քրիստոս
Որ ժամանեալ գաս ի յերկնից,
Ի վերայ թևոց հողմոց
Քո հայրենի կերպարանօք

Եւ առնես հրաշորձութեամբ
Զքրննութիւն որդւոց մարդկան. Ողոր.

Հոգեգալստեան:

Դաւանիմք ընդ սրովբէից
Զկենդանարարըդ համայնից,
Երեքսրբեան մի Տէրութիւն
Զհայր և զՈրդի և զՍուրբ զՀոգիդ.
Յոր հանգուցեալըս մըկրտեալ
Եւ հաւատով խոստովանեալ. Ողորմած.

Թագաւոր թագաւորաց
Առատաբուղխ Հոգիդ շնորհաց,
Ժողովելոցն ի վերնատանն
Առաքելոց երկոտասան.
Ի հրոյ լեզուս երևեցար
Յոգիս նոցա վերանըստար,
Լուր յանուն քո ժողովելոցս
Եկ և առ մեզ յերրորդ ժամուս:

Վարդավառի:

Ի վերինն Երուսաղէմ
Ի բնակարանըս հրեշտակաց.
Ուր ենովք և Եղիաս
Կան ծերացեալ աղաւնակերպ.
Ի դրախտին Եդեմական
Պայծառացեալ արժանապէս. Ողորմ.

Մովսէս Աստուածախօս
Եւ Ահարոնը Ղևտացին,
Մարգարէքն Իսրայէլի

Եւ քահանայք հին օրինին.
Յառաջագոյն մեզ ծանուցին
Եւ ըզգալուստ Սուրբ Միածնին.
Ի վերկութիւն մեզ յայտնեցին
Յանապատի կերակրէին. Ողորմ.

Խաչ:

Տրտմահաղորդ չարչարանօք
Ի յանձն առեր ըզմահ խաչին,
Եւ փայտին բարձող եղեր
Վասն Ադամայ Նախաստեղծին. Ողորմ.

Չարհուրեցան զօրք երկնային
Յորժամ տեսին զՏէրդ ի խաչին,
Արեգական լոյս քօղարկեալ
Եւ լոյս լուսնին նըւազեցաւ.
Յահեղ փառաց Աստուածորդւոյդ
Խաւար եղև ընդ տիեզերս. Ողորմ.

Առաքելոց:

Արարիչ և մարգասէր
Անոխակալ և բարեգութ
Որ գովիսդ ի սրովբէից
Տէր դատաւոր արդարութեան.
Ընդ սրբոց առաքելոց
Տէր պըսակեա զմեր նընջեցեալսն. Ողորմ.

Մարգարէից:

Յորժամ գըրեալքըն կատարին
Որ զայնմ աւուր մեզ պատմեցին,

Մարգարէից բանքըն յարգին
Առաքելոցըն վըճարին. Ողորմ.

Ի գնել բեմին բազմի փեսայն
Եւ առագաստըն զարդարի,
Գաբրիէլեան փողըն գոչէ
Սուրբք ամենայն անդ հաւաքին.
Արդարոց դասքըն բերկրին.
Իսկ մեղսասէրքըն թախանձին. Ողորմ.

Յորժամ հնչիւն փողոյն լինի
Եւ ղևտական գիրքն յայտնի,
Ճառագայթ Սրբոյ Խաչին
Յարևելից փայլեալ ծագի.
Հրեշտակաց գունդք ծաւալին
Հրեշտակապետք պարունակին. Ողորմ.

Մարգարէից, Հայրապետաց, կուսանաց Լն:

Աղաչանօք սրբոյ Խաչին
Եւ անքարբառ բարեխօսին,
Եւ սրբոյ Աստուածածնին
Եւ Յովհաննու Կարապետին,
Եւ սրբոյն Ստեփաննոսին
Եւ առաջին մարտիրոսին,
Եւ սրբոյ Լուսաւորչին
Հայաստանեայց Հայրապետին.
Եւ սրբոց Առաքելոց
Եւ համօրէն Մարտիրոսաց. Ողորմ.

Վասն պաշտօնի:

Ի վերին Երուսաղէմ 39

Ահեղ խորհուրդ քահանային
Բազկատարած կայ ի բեմին,
Առաջի սուրբ Սեղանոյն
Հուր շիջանի խաւար մերժի,
Տրըտմեալ հոգիքն ուրախանան
Զի թողութիւն մեղաց լինի. Ողորմ.

Ի ծնեալ Ս. Էջմիածնի։

Շինող էիցս համայնից
Արարածոց ի յանգոյից,
Նոյն շինեցեր զեկեղեցի
Վէմդ ի վերայ վիմին բանի.
Ընդ եղեալ հիմունսն ի նոր Սիովն
Ըզմեզ յօդեա՛ շինմամբ ի նոյն. Ողորմ.

ԵՐԳ

Ըստ Եղանակի Նորաստեղծեալի

Զոր ասեն միաբանք՝ ի տօնի սրբոյ Էջմիածնի. պլեւ ի յատկացեալ աւուրս՝ զառաջեաւ Վեհարանի.

Աստուած հըզօր Հայր գըթութեան
Աղբիւր առատ ողորմութեան,
Պատճառ Որդւոյդ անեղ ծնընդեան
Եւ Սուրբ Հոգւոյն անհաս բըղխման.
Ընդ որս մի Տէր ի մի հրաման
Հաստիչ բոլոր եղելութեան,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնդ անճառելի։

Որդիդ Աստուած Տէր և հաստիչ
Նըկարագիր Հօր Էութեան,
Որ ըզպատկեր քո Տիրական
Տեսեալ ի վիհըս կորստեան.
Զըհանդուրժեալ սէրդ անսահման
Մերժեր ըզնա ի յաւիտեան,
Ուստի և մեք փառաւորեմք
Ըզսէր անուանդ անճառելի։

Ելեր ի փայտըն մահաբեր
Յոր զփըրկական արիւնդ հեղեր,
Որով ըզմեզ ազատեցեր
Ի գերողէն և կեցուցեր.
Ի գերեզման մահու իջեր
Եւ զմահացեալսըն յարուցեր,
Ընդ որս և մեք փառաւորեմք
Զանօրէնութիւնդ անճառելի։

Երգ յաւել ոտն ղէ-ղաքէերէց աւետարանն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ՝ ի յայսմ հետէ, մինչև ի յաւիտեան։

Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև ի յաւիտեան։

Յարևելից մինչ ի մուտն արևու օրհնեալ է անուն Տեառն։

Ի յայսմ հետէ մինչև ի յաւիտեան։

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

ի յայսըմ հետէ մինչև ի յաւիտեան։

Արի՜, Տէր, օգնեա՛ մեզ, և փրկեա՛ զմեզ. վասն անուան քո։

Արի՜ և մի՛ մերժեր զմեզ իսպառ վասն անուան քո։

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Աստուած քո Սիօն յազգէ յազգ։

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր ի կենդանութեան իմոյ։

Օրթի.

Խաղաղո՛ւ-թի՛ն ամէն.

Երկիւղածութեամբ լուարուք.

Սէրն Ա-էպարանի.

Փառք քեզ Տէր Աստուած մեր.

Պրոսիսուվ.

Ասէ Աստուած.

Զկնի է-ղաբերեցի ա-էպարանին։

Փա՛ռք յարութեան քո Տէր, ո՛չ դադարեցայց Քրիստոս, օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Փառք յարութեան քո Տէր, ո՛չ դադարեցայց Յիսուս, գովել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Ես ո՛չ դադարեցայց Փրկիչ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Ի գիշերի համբարձէք ըզձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք ըզՏէր։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն ըզՏէր ի սրբութիւն և օրհնեցէք ըզՏէր։

Զապկն։

Լուսապայծառ հրեշտակն նստելով ի կենսատու գերեզմանին, և աւետէր կանանց, յարեաւ Աստուած։

Յա-ո-ը ՇԵՅԻ պահոց էխանակ փառք յարութեան.

Զամենայն աւուրս կենաց իմոց, ես ո՛չ դադարեցայց օրհնել ըզքեզ Քրիստոս Փրկիչդ աշխարհի։ (Երեց՝ կրկնեա՛ և ղյեպինն Բարձր ա-ա՛.)

Ի ՆԻ-.— Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն. և օրհնեցէք զՏէր։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր ի սրբութիւն. և օրհնեցէք զՏէր։

Օրհնո-Ն-ն ա-ա-օրհ-.

Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեա՛լ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր Սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և Սուրբ Որդի։ Տէր Աստուած Գառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմեղս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր և Հոգիդ Սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր. Ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ. Տէր և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտենից։ Արժանի արա՛, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահեա՛ զմեզ։ Օրհնեա՛լ ես Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է Անուն սուրբ քո

յաւիտեանս. Ամէն։ Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. (երիցս կրկնեա՛)։ Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես ասացեմ Տէր, ողորմեա՛ ինձ և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ։ Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ։ Տէ՛ր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել զկամս քո՝ զի դու ես Աստուած իմ։

Ի քէն է, Տէր, աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ, Տէր։

Ա՜ա՜օրհ՜ Երգ Յարու՜թեան։

Զկնի Փառք ի բարձանց։

Ա՛յ. ա՛կ. Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Յարեաւ Աստուած. և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։

Բ՛յ. Բ՛կ. Զյարութիւն զփրկչին . . . .

Զյարուցեալն զԲրիստոս օրհնեսցուք. և զյարութիւն նորա փառաւորեսցուք։

Գ՛յ. Գ՛կ. Զյարութիւն զփրկ . . . .

Որ ելն ի բարձունս, և գերեաց զգերութիւն. էառ աւար բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան։

Դ՛յ. Դ՛կ. Զյարութիւն զփրկ . . . .

Որ համբերեաց խաչի, և եդաւ ի նորափոր վի-

մի, և Աստուածային Յարութեամբն զմահացեալսն վերաբերեաց ի կեանս։

Համբարձն. Զյարութիւն զփրկ . . . .

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ. և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Խաչի. Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց ազեղան։

Որպես փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քով և լուր մեզ։

Յա՜ռ՜ Ա՛-եր՛ եց՝ Ծնունդեան և Ընդ՛ա՜ռ՜-նեան զայս ա՜ա՜.

Սուրբ Աստուած. Սուրբ և հզօր. Սուրբ և անմահ՝ որ Յայտնեցար վասն մեր՝ ողորմեա՛ մեզ։ (երիցս կրկնեա՛։)

Քա՜ռ՜ա՜ռնօրէ՜յ Գ՜ալ՜ա՜ռ՜նեան Քրիստոսի. և Մ՜ա՜ղ՜կ՜ալ՜ր՜դ՜ն.

Սուրբ Աստուած . . . որ Եկիր և գալոց ես. ողորմեա մեզ։

Ո՜-ր՜ի՜ա՜ն՜ Մ՜ա՜ռ՜ն՜-նեան Գ՜ե՜ղ՜ե՜ր՜ն։

Սուրբ Աստուած . . . որ Մատնեցար վասն մեր՝ ողորմ.

Ո՜-ր՜ի՜ա՜ն՜ Ճ՜ա՜ղ՜-ն՝ և ա՜ն՜ն՜ա՜յ՜ն՜ ա՜ա՜ն՜ն՜ց՝ Սրբոց՝ խաչ և նկ՜ե՜ղ՜ե՜ց՜-ա՜յ՜,

ա՜յ՜լ և յա՜-ա՜-ր՜ա՜ Պ՜ա՜հ՜ա՜ց։

Սուրբ Աստուած . . . որ խաչեցար վասն մեր՝ ողորմ.

Ո՜-ր՜ի՜ա՜ն՜ Երեկոյին և Շաբ՜ա՜ն՜ Գ՜ե՜ղ՜ե՜ր՜ն։

Սուրբ Աստուած . . . որ թաղեցար վասն մեր՝ ողորմ.

Զ՜ա՜ր՜կ՜ի և ա՜ն՜ն՜ա՜յ՜ն՜ Յ՜ա՜ր՜-ն՜ե՜ա՜ն՜ կ՜ի՜-ր՜ա՜կ՜ն՜ե՜ց։

Սուրբ Աստուած . . . որ Յարեար ի մեռելոց՝ ողորմ.

Համբարձմանն Քրիստոսի:

Սուրբ Աստուած . . . . որ Համբարձար փառաւք առ Հայր ողորմեա.

Գալստեան Հոգւոյն Լ՚ըն:

Սուրբ Աստուած . . . որ Եկիր և հանգեար յԱռաքեալսն. ողորմեա.

Վարդավառին:

Սուրբ Աստուած . . . որ Յայտնեցար ի Թաբոր լերինն. ողորմեա.

Փոխման սուրբ Աստուածածնին:

Սուրբ Աստուած . . . որ Եկիր ի փոխումն Մօր քոյ և կուսի. ողորմ.

Թովմայի Առաքելոյն աստուածեալ:

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի. մատո՛ ղաղաչանս մեր՝ Որդւոյ քոյ և Աստուծոյ մերոյ:

Յաւուր կի-ւակէի յարաջընթաց աւետարանին ասի Սաղմոս յայնի-:

Եղիցի՞ անուն Տեառն օրհնեալ յայսմ՚հետէ մինչև յաւիտեան:

Օրհնեցէք մանկունք զՏէր՝ և օրհնեցէք զանունն Տեառն:

Եղիցի՞ անուն Տեառն օրհնեալ՝ յայսմ՚հետէ մինչև յաւիտեան:

Յարևելից մինչև ի մուտս արևու՝ օրհնեալ է անունն Տեառն:

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր՝ և յերկինս են փառք նորա:

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ՝ և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս յերկրէ՝ և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց:

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ.

Որպէս մայր որդւովք բերկրեալ:

Ալէլուիա օրթի . . . . . Ա-էպոլոն

ԵՐԳ

Նէրսէսի Շնորհալւոյ:

Վասն առաջնոյ աւուր միաշաբաթին՝

Նորաստեղծեալ բանն յանէից
Ի սկզբանէ զերկինս երկնից՝
Եւ զերկնային զօրս անմարմնոց
Իմանալեացսն զբարթնոց՝
Եւ զգալի տարերց քառից
Հակառակաց միաբանից՝
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի:

Երեքսրբեան Մի Տէրութիւն
Միով բնութեամբ Աստուածութիւն՝
Լոյսն որ անեղ արարչական
Ասաց լինել լոյս եղական՝

Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ կիւրակէին։ Որով։

Բաբունօրէն բացատրեցուք
Զծածկեալ խորհուրդքն ծանիցուք,
Զի լոյն անտես իմանալի
Մաքուր հոգւոց տեսանելի։
Ի սոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ,
Եկայք փրկեալք ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն Յարուցելոյն։

Սէրըդ սիրով խոնարհեցար
Ի փրկութիւն մեր մարմնացար,
Նովին մարմնովքն խաչեցար
Ի գերեզման մահու եդար։
Այսօր յարեար աստուածաբար
Ի հրեշտակաց քարոզեցար։ Եկայք։

Երեւեցար խընկաբերիցն
Յաղջոյն կենաց ուրախալից,
Եւ ի լերինքն Գալիլիա
Առաքելոց մեռասանից։
Արժանացո՛ զմեզ ընդ նոսին՝
Զքեզ տեսանել յօրքն վերջին։ Եկայք։

Սիովնի որդիք զարթիք
Հարսին լուսոյ տուք աւետիք,
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ։
Դայ պսակէ ըզքեզ փառօք

Եւ ընդ առաջ պանեալ զարդուք։
Երգեա՛ երգ նոր Յարուցելոյն
Ընծեցելոց կենաց պըտղոյն։

ԵՐԳ

Տէառն Նէրսէսի Շնորհալւոյ։

Վասն երկուշաբթի աւուր։

Արարչական բանին հրաման
Ի յերկրորդումն աւուր սկըզբան,
Ըզջուրսն ի ջուրցքն բաժանեաց
Հաստատութեամբ պարունակեաց։
Որով զաշխարհս հողեղինաց
Անջրպետեաց ի հրեղինաց
Ընդ նոսին որդիք լուսոյ
Տո՛ւք օրհնութիւն երրեակ Լուսոյն։

Բազմաչեայ հոյլք Քրովբէից
Երեքսրբեանըդ Սրովբէից,
Ամենք անեղ Աստուածութեանքն
Համագոյ Երրորդութեան։
Բարեխօս լերուք առ Տէր
Վասն մանկանց Եկեղեցւոյ։ Ընդ։

Գերագոյն իշխանութիւնք
Եւ անփոփոխ միշտ Տէրութիւնք,
Անյաղթելի սուրբ Զօրութիւնք

Ի յԱրարչին փառատրութիւն.
Աղաչեցէք զՏէրն ողորմած
Անտես չառնել զգործս ձեռաց. Ընդ.

Դասք անմարմնոցըն պետութեանց
Հրեշտակապետքք բարձրութեանց,
Հոգիք հրեղէնք և սպասաւորք
Հրեշտակաց զինուորութիւնք.
Մաղթեցէք զՏէրըն տերանց
Վասըն մարդկան երկրաւորաց. Ընդ.

Երկնաւորաց դասուց վերնոց՝
Օրհնաբանից քոց զըւարթնոց,
Քաղցրասցին առ քեզ գըթած
Որ վասըն մեր ձայն մաղթանաց,
Զորս և տացես մեզ պահապան
Յայսըմ հետէ մինչ ի վախճան. Ընդ.

Զօրութեանց և Տէրութեանց
Իշխանութեանց և պետութեանց,
Եւ ամենայն անուանելոց
Որք ի յերկինս պատատանօք.
Ընկալ Քրիստոս ուրախութեամբ
Զմեզ յօր մահու և յարութեան,
Ընդ նոսին օրհնել հոգւով
Զգքեզ ընդ Հօր փառատրելով։

Եբէ+ղաբէղի։

Էական Բանն որ ընդ Հօր
Արարչակից և համազօր,

Յերրորդ աւուր զՋուրսըն զատայց՝
Ըզբոյսս և զտունկըս բըղխեցոյց,
Իսկ ի յերրորդ դարուն դարձեալ
ԶՋուրսըն հեղեալ ցամաքեցոյց.
Զնոյ տապանաւն իւր ապրեցոյց
Ըզկենդանեաց սեռս ահեցոյց,
Տուք օրհնութիւն անճառ լուսոյն
Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն։

Ընդ ծառոյ երկրի զգալեաց
Տընկեաց և զտունկս իմանալեաց,
Զհեղեղ մեղացըն ցածուցեալ
Զդասս արդարոց բազմացուցեալ.
Յորոց և մեծն ի ծնունդս կանանց
Մի՝ նորդ շնորհաց և օրինաց. Տուք.

Թագաւորին երկնից զինուոր
Արքայութեանն աւետաւոր՝
Խընդրեա՛ գընել ելս ի սրտի
Առ ի հովտէս արտամանէ.
Յուխտեալ տեղին Տէրունական
Ի խոստացեալն որդւոյ մարդկան. Տուք.

Ժառանգին Հօր սպասաւոր
Ի յարգանդէ երկրպագող՝
Կարապետ և Մկրտիչ
Ա՛նմ՝ որ մեղայ մերոյ քաւիչ.
Լեր բարեխօս առ նոյն գըթած՝
Զընչել ըզգիր մեր յանցանաց. Տուք.

Ի Հօրէ լոյս ծագեցար
Մեռեալ բնութեանս կենդանարար՝

Առաքեցեր յառաջընթաց
Սուրբ զՅովհաննէս քարոզ կենաց
Սերին հայցմամբն Ամենակալ
Ըզպաղատանքս մեր ընկալ. Տուք.

Լուսաշաւիղ յերկինս ելին
Հոգանիւթեայ սուրբ Հրեշտակին,
Արժանացո՛ ըզմեզ նորին
Նեղ և անձուկ ճանապարհին.
Զի հեռեւոյ գոլով նորին
Չօր քո վերին օթեվանին,
Եւ երգեսցուք ընդ երջանկայն
Որդւոյ լուսոյ քեզ երգ փառաց։

Զոր է՝ Զ՝ Ը՝ Ի՝։

Խաւարն անգոյ և ոկրզբնածին
Հալածեցաւ յօրն առաջին,
Լոյսն այն պայծառ յօր չորրորդին
Յարեգական նիւթ հաւաքեալ։
Լուսինն ի տիպ լուսոյ ստեղծեալ
Եւ աստեղաց պարք յօրինեալ,
Որով օրհնի ստեղծողն Էից
Ի բանաւոր պաշտօնէից։

Ծածկեալ խորհուրդքն ծանուցաւ
Զորրորդ դարուն Խսահակաւ,
Ի չորրորդ օր դարձեալ Հրեշտակն
Եւ զաւետիսքն կուսական.
Թէ Լոյսն որ ոչ բովանդակի
Ի քէն մարմնով պարուն՝ակի,

Յոր օրհնեցայք ազգ երկրածինք
Տուք օրհնութիւն Պըտղոյ Կուսին։

Կուսին նախնւոյ մօրն Եւայի
Յորմէ Ադամքն հին պարտի,
Բարձան անէծքքն տրամական
Քո սուրբ ծնընդեամբ կոյս Մարիամ.
Աղաչեա՛ զքո Միածինն՝
Թողուլ զմեզս որդւոց նոցին. Յոր.

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս
Յոր համբառնամք առ քեզ զհոգիս,
Յօր լըսելոյ քո զաւետիս
Խնդրեա՛ լինել մեզ լսելիս.
Զձայն աւետեաց քո Միածնին՝
Եթէ եկայք օրհնեալք Հօր իմ. Յոր.

Զայնիւ առ քեզ Տէր պաղատիմք
Եւ առաջի քո անկանիմք,
Աղաչանօք Աստուածածնին
Շիջո՛ ի մէնջ ըզբոց հնոցին.
Տո՛ւր արտասուօք զմեզս ջընջել
Եւ վերստին զմեզ նորոգել. Յոր.

Ղեկավար հարատարապետ
Անցեր ընդ ծով կենցաղս անհետ,
Վերաբերեա՛ ընդ Պետրոսի
Զմեզ ի յալեաց մեղաց ծովէս.
Պաղատանօք գերագունին
Անապական քում Ծընողին. Յոր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ.

Ճառագայթեալ բանն ի հօրէ
Յօր հինգերորդին հրամայէ,
Բղխել ի ջրոց սեռս կայտառաց
Եւ թեւաւորս օդականաց.
Իսկ ի դարուն հինգ մրկրբաթին
Յամին և ի ծովն Իսրայէլ հին.
Տացուք հրաշից ներգործողին
Պատիւ և փառս անեղ բանին:

Մաքրապէս օրինակի
Առաքելոցն Քրիստոսի,
Որք ի ծովէն Տիբերական
Ի յերկնայինսն կոչեցան.
Անցին ընդ ծով աշխարհական
Եւ ի հոգին մրկրբաթեցան. Տացուք.

Յուրախութիւնն անզրաւական
Ի հարսանիսն անապական,
Զձեզ առաքեաց Հայրն փառաց
Հրաւիրասուք տրրամականաց.
Սուրբ Հարսանեացն այն հայցեցէք
Ընդ ձեզ լինել մեզ պարակից. Տաց.

Նորոգողք ոլեղերաց
Ի նախահօրէն յանցանաց,
Նորափեռուր զարգարեցիք
Զնկեղեցիս հեթանոսաց.
Պաղատեցէք առ նոյն գլխաւոր
Զմեզ նորոգել ի հնոյ մեղաց. Տաց.

Շինող էիցս համայնից
Արարածոց ի յանգոյից,
Նոյն շինեցեր զնկեղեցի
Վէմդ ի վերայ վիմին բանի.
Ընդ եղեալ հիմունսն ի նոր Սիովն
Ըզմեզ յօգեա՛ շինմամբ ի նոյն. Տաց.

Ուրախացաւ գնացիւք գետոց
Քաղաք ի քէն շինեալ Յիսուս,
Յորմէ վըտակք շնորհաց հոսեն
Զոգիս մարդկան ոռոգանեն.
Արբո՛ և մեզ ի ջրոյն կենաց
Հայցմամբ Հոգւոյն մատրուակաց,
Զի բանաւոր երկիրքս քո
Պտղաբերցի ի փառքս քո:

ՈՒՐԲԱԹ.

Ընհանդուրժեալ բնութեամբ Բարւոյն
Ունիլ միայն զանճառ բարին,
Այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին
Ի վեցերորդն առաւօտին.
Եւ ի յերրորդ ժամ զկողաճինն
Ի յօգնութիւն եա հողաճնին,
Զորս ի Դրախտին եդ վայելել
Բայց ի պտղոյն մահու արգել:

Պատանձեալ առ գաստղին
Յեա յանցանաց Ադամին հին,
Զկինն պատճառ եղեալ խաբման
Եւ կինն զօձն գաւառման
Որով երկիրս այս անիծաւ

Փուշ և տատասկ ի սմա բուսաւ,
Վրձիւռ մահու մարդոյն տրւաւ
Դառնալ ի հող՝ ուստի ստեղծաւ։

Զընջել փութայր Հայրըն փառաց
Ըզգիր պարտեաց մեր յանցանաց,
Որով զգեցաւ Որդին գրթած
Ի վեց դարուն զմարմին մեղաց.
Հօր հաճութեամբ ի մահ խաչին
Եկըն կամաւ ի յուրբաթին,
Դառըն զենաւ ի հին զատկին
Փոխան գառանցն օրինակին։

Ռահիւ լուսոյ պատուիրանին
Արդարութեան ճանապարհին,
Բարձրանալով քո ի խաչին
Բարձրացուցեր զմեզ ի յերկինս.
Քո անպատում խոնարհութեամբդ
Եւ կամաւոր խաչելութեամբդ
Հաշտեաց ընդ մեզ, Տէր, գրթութեամբ
Եւ թող ըզմեզս ողորմութեամբ։

Սոսկալիդ Սերովբէից
Եւ տհաւորըդ Քրովբէից,
Խոնարհեցար ի չարչարանս
Զարչարելի ընութեամբ մարդկան.
Ի խաչին զմեզս ըսպաներ
Եւ զդատակնիք մահու լուծեր,
Հաշտեաց ընդ մեզ, Տէր գրթութեամբ
Եւ թող զմեզս ողորմութեամբ։

Վեհագոյն ընութեանց էից
Եւ Արարիչըդ բոլորից,

Յորժամ ծագես զխաչիդ նշան
Ի գալատեան քո միւսանգամ.
Ջերկրպագուս այժմ հաւատով
Լուսաւորեա՛ նորին լուսով,
Զի համաձայն խաչազգեցիցն
Ըզքեզ օրհնեմք յաւիտենից։

Շաբաթ։

Տէրն յեւ ստեղծման արարածոց
Հանգեաւ յեօթն օրն ի գործոց,
Այն որ հանգիստ աշխատելոց
Եւ կամքըն գործ է եղելոց.
Ուստի և մեզ յոյս հաստատուն
Եւ հանգըստեամբըն շաբաթուն,
Թէ ատ գործել զգործս Աստուծոյ
Անդ է հանգչել ընդ Աստուծոյ։

Բաբունաբար վարդապետիմք
Յօրինակէ Տեառըն խրատիմք,
Որ ի յերկրորդ արարչութեան
Յետ կատարման տնօրէնութեան.
Յեօթներորդ օր հանգստեան
Ի՝ջեալ մարմնովն ի գերեզման,
Ի՝կապեալ հոգիսըն վերածեաց
Ջանանց հանգիստըն պատրաստեաց։

Յողդ որ ի քոյդ կողէ ցօղեալ
Բրժըշկեսցէ ըզհանգուցեալսն,
Ի՝ջցէ ի հող մահու նոցին
Եւ բուսուսցէ յօրըն վերջին.
Կենդանարար ձայնիւըդ քո

Կոչեա՛ զնոսա ի կեանքս քո,
Եւ դասեցո ընդ արդարոցն
Երգել քեզ փառս ընդ զբաղթնոցն։

Խիւծեալ զքնութիւնս կենաց ունոյ
Դարձոյց յանցանքն ի մահու հոգ,
Իսկ Անմահիդ մեռելութիւն
Շնորհեաց դարձեալ զանմահութիւն,
Զորս են ընդ քեզ թաղեալ մահուամբ
Աւազանին մկրբութեամբ,
Յարո՛ ընդ քեզ քոյին փառօք
Արեգական նըման լուսով։

Փայլին արդարքն յարքայութեան
Եւ ճրագնաւորքն ի հանդստեան,
Մարտիրոսքքն պրսակին
Եւ կուսանաց լապտերք վառին.
Դասեցո՛, Տէր, ընդ նոսին
Որ զքեզ Աստուած խոստովանին,
Արդարութեամբ մի դատեսցին
Այլ զթութեամբ քո քաւեսցին։

Քո անպատում խոնարհութեամբդ
Որ թաղեցար մեռելութեամբդ,
Եւ յարուցեր յորդւոց մարդկան
Որք հաւատով ի քեզ անկան.
Յարո՛ և զմեզ արդարութեամբ
Եւ զնընչեցեալսն ողորմութեամբ,
Զի կենդանեացքս բերանով
Տացին քեզ փառս ընդ Հօր Հոգւով։

ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԽԱՉԻ.

Բկ. Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք, և զսուրբ (Մատնոնընդ։, Խաչելոնընդ։, թաղնընդ։) մեծացուցանեմք, և զՍուրբ յարչարանդ (զոնընդ Յարոնընդ) քո փառաւորեմք։ Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։ Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ (Մատնեցար, Խաչեցար, թաղեցար, Յարեար) վասն մեր ողորմեա՛ մեզ (Երբեմն կրկնեա՛.)

Փառք Սուրբ Նայիդ՝ ալէլուիա, Սուրբ Մատնութեանդ՝ ալէլուիա, Զարչարանացդ՝ ալէլուիա, (Խաչելոյդ՝ ալէ։ Սրբոյ թաղմանդ՝ ալէ։ Սո՛ւրբ Յարո՛ն՝ ալէլո՛ւ.)

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և եռաւ արախութիւն սրտից մերոց։ ի պողոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։ Փառ։ Սո՛ւրբ Խաչդ (կրկնեա՛)։

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ ամէն։ Փառ։ սո՛ւրբ Խաչդ (միայն։ և ապա)

Խաչն կենարար որ եղև մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան զքեզ բարեբանեմք։

Որ ի Հօրէ Լուսոյ լոյս հառագայթեալ ի յերկրի։ և գաւազան զօրութեան հաւատացելոց։ սովաւ ամենեքեան զքեզ բարեբանեմք։

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցու-

ցաւ ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ ամենեքեան ղքեզ բարեբանեմք: (Լ ապա՝ պոռն ի վառն «Այժմ Լ ի՛ղոխ»)

Ելեր Տէր բևեռեցար ի խաչին, ըզմեռանիլ յանձն առեր կենդանատու մեռելոց:

Եղար Տէր, ի նորափոր ի վիմի, և մատանեաւ կընքեցար գանձըդ կենաց աշխարհի:

Յարեար Տէր, աւերեցեր ըզդժոխս, ի յերկինքս համբարձար և ընդ աջմէ Հօր նստար:

Աղաղակէր Աստուածային բարբառովն Տէր Յիսուս ի խաչին և ընդդէմ առտեղաց կընքէր հրացեալ Աստուածային Սուրբ ձեռօքն և բարկութեամբ զարթուցեալ ի վերայ խաւարատէր իշխանին:

ԵՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻՆ:

ՁԵՆԷ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ՍԱՂՄՈՍԻՆ:

Յարեւելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ և ի հարաւոյ, ամենայն ազգ և ազի՛ք, յօրհնութիւն նոր օրհնեցէք զԱրարիչն արարածոց, որ ծագեաց ըզլոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցի՛ք արդարոց, փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն. յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս՝ գովեցէ՛ք ընդ Հօր և Հոգւոյն. որ ծագեաց զլոյս գիտութեանն իւրոյ ի մեզ:

ՅՈՐԴՈՐԱԿ:

Յարեւելից յարեւմուտս մանկունք Սիոնի, օրհնեցէք միշտ անդադար զծագողն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք, բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ:

ԵՐԵՔ ԶԼԻՆԷ «ԱՂԱՂԱԿԵՑԷՔ» ՍԱՂՄՈՍԻՆ

Ճգնաւորք Աստուծոյ, և ժառանգորդք երկնից արքայութեանն, որք փոխանակեալքք զանցաւորս առիք զանանցն բարութիւնսն. բարեխօսեցէք առ Տէր, վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատակք պանծալիք, և սիրեցեալք ի յերկնաւոր Հօրէն. որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

Մարտիրոսք ցանկալիք, և օթեւանք Հոգւոյն ճշմարտութեան. որք յաղթեցիք Հոգւով կարեաց և ցանկութեան բարեխօսեցէք առ Տէր.

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոյն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօսեցէք առ.

Կամաւոր պատարագք. մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորքք ճշմարիտք, վրկեալք Քրիստոսի. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակքք կենդանիք, սիրողք Քրիստոսի. որք չարչարեցայք մարմնով վասն անուանն տեառն:

Մարտիրոսքք ցանկալիք մարդկան ըղձալիք. հայցեցէք ի Սուրբ Հոգւոյն տալ մեզ զբարիս:

Գովելիք վերնոց դասուց, պարծանք աշխարհի, խնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ։

Կամաւոր սուրբ պատարագք, հաճակաւ մանկունք. հայցեցէք լինել և մեզ՝ ձեզ պրսակակից։

Երգ ղՀնէ «Աստուած Աստուած» սաղմոսին։

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս. բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր՝ ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր ըզլոյս քո իմանալի։

Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար. անճառ ծընունդ Հօր՝ Որդի. յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ Հօր. ի ծագել լուսոյ առաւօտ։

Լոյս, ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան, Հոգիդ Սուրբ Աստուծոյ. մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս ըզքեզ բարեբանեն. ի ծագել լուսոյ։

Լոյս, երրեակ և մի անբաժանելի սուրբ Երրորդութիւն. զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքքս միշտ փառաւորեմք. ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

ՅՈՐԴՈՐԱԿ

Անեղանելիդ Աստուած, Հայր ամենակալ. ընկալ զաղաչանս մեր քոց պաշտօնէից։

Ի Հօրէ ծագումն անճառ, արեգակն արդար. ծագեա՛ ի յանձինքս մեր զլոյսդ ողորմութեան։

Ի Հօրէ բղխեալ Հոգի, աղբիւր բարութեան. լուսով քով լցո՛ ըզմեզ յայսմ առաւօտուս։

Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ Սուրբ Երրորդութիւն։

Երգ ղՀնէ «Տէր Հովուեսցէ» սաղմոսին.

Ճանապարհ, և ճշմարտութիւն և կեանք Քրիստոս. առաջնորդեա՛ Հոգւոց մերոց. յերկրէ երանել յերկինս։

Դուռըն կենաց մտից Յիսուս մոյծ և զմեզ առ Հայր քո և Հոգի. երգել միշտ ըզփառս։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճանապարհ բարի Քրիստոս և ճշմարտութիւն, առաջնորդ Հոգւոց մերոց յերկրէ՛ ի յերկինս։

Դուռըն կենաց մըտից Յիսուս. Աստուած ճշմարիտ. մոյծ և զմեզ առ Հայրըդ քո. Հոգւովըդ Սրբով։

ԺԱՄԱՄՈՒՏՔ

Հէր. Միածին Որդի և Բանդ Աստուած և անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի Սրբուհւոյ Աստուածածնէն և ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի Սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր և սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ։

Պապ. Քրիստոս յարեա՛ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, և Յարութեամբն իւրով՝ մեզ զկեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս, ամէն։

ՔԱՀ. Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց՝ քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան. և այժմ վասն սրբոյ Աստուածային քո նշանի՝ շնորհեա զերկնային զիսաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ՅԵՐԵԿՈՅԻ ԿԻԻՐԱԿԱՄՏԻՑ.

ՍՂ. ՅԷ. Խոնարհեցո՛, Տէր, զունկն քո և լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես։

Պահեա՛ զանձն իմ սուրբ, Տէր, և փրկեա՛ զծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ։

Ողորմեա՛ ինձ, Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ ուրախ արա՛ զանձն ծառայի քո, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։

Զի դու, Տէր, քաղցր և ուղիղ ես. բազումողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ։

Ունկն դիր, Տէր, աղօթից իմոց, և նայեա՛ ի ձայն խնդրուածաց իմոց։

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։

Ոչ ոք է նման քեզ յաստուածս, Տէր, և ոչ ոք է որպէս զգործս քո։

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու, Տէր, և առնես սքանչելիս, և դու միայն ես Աստուած։

Առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում և ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչիլ յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ, Տէր Աստուած իմ, բոլորով սրտիւ իմով. փառաւոր արարից զանուն քո յաւիտեան։

Մեծ եղև ի վերայ իմ ողորմութիւն քո, Տէր, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց։

Աստուա՛ծ, անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Այլ դու, Տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած երկայնամիտ՝ բազումողորմ և ճշմարիտ, նայեա՛ առիս և ողորմեա՛ ինձ։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ զորդի աղախնոյ քո, և արա՛ առիս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն զի դու, Տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՍՂ. ԾԼՌ. Ապրեցո՛ զիս, Տէր, ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս։

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ։

Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա։

Պահեա՛ զիս, Տէր, ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս։

Խորհեցան խափանել զգնացս իմ, թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ ըզշաւղօք իմովք եդին ինձ զգայթակղութիւն։

Ասացի, Տէր, Աստուած իմ ես դու, ունկն դիր, Տէր, ձայնի աղօթից իմոց։

Տէր, Տէր, զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի մատներ զիս, Տէր, ի ցանկութիւն մեղաւորաց, զոր խորհեցան վասն իմ՝ մի ընդ վայր հարկաներ զիս։

Զի մի երբէք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի կատարեսցին. վասն ճան կատարածի նոցա վասատակ շրթանց իւրեանց՝ ծածկեսցէ զնոսա։

Արկցես ի վերայ նոցա զկայծակունս հրոյ. և կործանեսցես զնոսա. ի տառապանաց մի կարասցեն կեալ։

Մարդոյ լեզուանուոյ մի յաջողեսցի ի վերայ երկրի. զայր մեղաւոր՝ չարիք իւր որսասցեն ի կորուստ։

Ծանեայ զի առնես, Տէր, դատաստան աղքատի, և իրաւունս տանանկի։

Արդարք գոհասցին զանուանէ քումմէ և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց։

ՃԿ. Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ, նայեա՛ ի ձայն աղօթից իմոց, ի կարդալ իմում առ քեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէր, համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի։

Դիր, Տէր, պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ զոր գործեն զանօրէնութիւն. և ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ՝ և յանդիմանս արասցէ իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխս իմ, այլ աղօթք իմ ի կամս նորա։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին։

Որպէս թանձրութիւն հողոյ՝ զի սփռեալ է ի վերայ երկրի, ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ, Տէր, Տէր, են աչք իմ. ի քեզ յուսացայ, մի հաներ զհոգի յինէն։

Պահեա՛ զիս յորոգայթէ որ թագուցաւ ինձ, ի գայթակղութենէ՝ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նորա մեղաւորք՝ միայն եմ ես մինչև անցից։

ՃԿԱ. Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ՝ դու, Տէր, ծանեար զշաւիղս իմ, ի ճանապարհ յոր և գնայի թագուցաւ ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ՝ և տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ, Տէր, և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկիրին կենդանեաց։

Նայեա՛, Տէր, յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս ի հալածչաց իմոց՝ զի հզօր եղեն քան զիս։

Տէր, հան ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես։

Փառք Հօր և. Այժմ և միշտ.

Ալէլուիա Ալէլուիա

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս։

Եկեալքս ի մտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյիս։ Օրհնեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ Աստուծոյ։

Եւ ամենեքեան ասեմք. Ամէն։

Արժանաւորեա՛ զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով՝ զանուն փառաց Ամենասուրբ Երրորդութեանդ. որ տաս կենդանութիւն, վանորոյ և աշխարհս զքեզ փառաւորէ։

Մէոէրէ։

Հէ-ր-ա-հ-ա-ն-ք

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց։

Զի խոնարհեցոյց զուանկն իւր առիս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Ս. Խաչ

Եռուր երկիւղածաց քոյ նշան, զի ապրեսցին յերեսաց ազեղան։

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քո և լուր մեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ,
Որպէս խունկ առաջի քո Տէր,
Համբարձումն ձեռաց իմոց,
Պատարագ երեկոյի։

Սուրբ Աստուած 47 (քո՛ պարարտէ.)

Սղ. ճէ.

Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի՞ եկեսցէ ինձ օգնութիւն։

Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։

Մի՛ տար ի սասանութիւն զոտն քո, և մի՛ նընջեսցէ պահապան քո։

Որպէս ոչ ննջէ և ո՛չ ի քուն երթայ պահապանն Իսրայէլի։

Տէր պահեսցէ զքեզ, և Տէր ընկալցի աջոյ ձեռամբ իւրով։

Արեգակն ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսին ի գիշերի։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ Տէր զանձն քո։

Տէր պահեսցէ զմուտս և զել քո՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Փառք Հօր և՝ Այժմ և միշտ.

ԺՅ. Սուրբ ես Տէր զօրութեանց՝ որ բնակեալդ ես ի յերկինս. և բարեբանիս ի սրբոց քոց։

Երկնային զօրութիւնք. Սերովբէք և Քերովբէք. անդադար օրհնեն սուրբ զԱնունդ քո։

Քահանայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք. երկրպագեսցուք Տէրութեանդ քո։

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար. և լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։

Որ զլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերսին. և զխաւարն անգիտութեան յարութեամբդ քո հալածեցեր. օրհն.

Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զբարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս. օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։

Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծ ի ծնունդս կանանց, քարոզէր յանապատի ազգ արարող բարբառովն՝ զծագումն լուսոյ Արեգականն արդարութեան։

Ճշմարիտ Մարգարէ և ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ. յառաջընթաց Կարապետ և պատմող Աստուածային օրինացն, հորդէր ճանապարհս Թագաւորին յաւիտենից։

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ. ի պարգև ի մասին խնդրէր զգլուխ Մարգարէին. շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն։

Փառք Հօր և Որդւոյ և.

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ՝ պարգևեա երկրպագուացս Ամենասուրբ Երրորդութեանդ. զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից։

Այժմ և միշտ և.

Ի ծննի Մարտիրոսաց։

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ Երրորդութեանդ. և զապաւինեալս ի խորան փառաց քոց՝ պահեա անխռով ի խաղաղութեան։

Ի ծննի Հայրապետաց և Վարդապետաց։

Որ զխորհուրդս փրկականս աստուածգիտութեան՝ շնորհեցեր մեզ ի ձեռն Քահանայապետին քո և վկային՝ նորին աղաչանօք խնայեա ի մեզ։

ԺԷ. Ի քէն հայցեմք բազումողորմ՝ ի ձեռն սրբոց քոց առաքելոցն. խնայեա՝ Տէր ի յանձինս մեր։

Զորս ընտրեցեր յառաջգիտութեամբ զարժանացելոց անձինս. տպաւորել ի նոսա զՀոգի շնորհաց քոց. որով վանեալ հերքեցին զապըստամբ թշնամին. բարեխօսութեամբ սոցա՝ խնայեա՝ Տէր՝ ի յանձինս մեր։

Որք զխաւարն անգիտութեան մերկացին յամենայն ազանց զգեստաւորեալ զհեթանոս. առաքելական կոչմամբ ի յոյս կենացն յաւիտենից. բարեխօսութեամբ սոցա խնայեա՝ Տէր՝ ի յանձինս մեր։

Վասնորոյ և մեք հաւատացեալքս՝ կատարեսցուք զյիշատակ սրբոց առաքելոցն. աղաչեմք զքեզ՝ որ

միայն գթածդ ես, առատաձեռնեա՛ ի մեզ զմեծ քո ողորմութիւնդ, Տէր, որ կեցուցանես զամենայն արարածս։

Փառք Հօր և Որդւոյ.

Արդ աղաչեա՛ Մայր Աստուծոյ, զծնեալն ի քէն վասն մեր, զի ընդ նմին պահելով սուրբ յարութեամբ Նորա նորոգեսցուք. առ նա միշտ բարեխօսեա՛ կեցուցանել զմեզ։

Այժմ և միշտ.

Եւ համբարձեալ զձայնն ցուգայի, խնդրելով ի Տեառնէ զանենչալին ամենեցուն սուրբ զխաչ. և հաւատով գոչէր, եկայք երկրպագեսցուք Աստուածային սուրբ նշանիս. մեծացուցանելով զծնեալն ի կուսէն։

Աբիսողոմեան փոխ։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ։

Ասասցէ Տեառն, ընդունող իմ ես, ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանից ի խռովութենէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն նորա։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ որ թռչի ի տուէ։

Ցիրէ որ շրջի ի խաւարի. ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և ղհատուցումն մեղաւորաց տեսցես, զի դու, Տէր, յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո։

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա, հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առիս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

ՃԿԷ. Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ի ձեռն Տեառն իւրոյ. և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր. մինչև ողորմեսցիս ի վերայ մեր։

Ողորմեա՛ մեզ Տէր ողորմեա՛ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ, և արհամարհանօք ամբարտաւանից։

ԺԳ. * Աստուած յանուան քում կեցո՛ զիս, և ի զօրութեան քում իրաւ արա՛ ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եսես ակն իմ։

Փառք Հօր Այժմ և միշտ և.

Փ-ի կէ-ղակոմպլից։

ճկբ. Ասա օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր. ո կայք ի տուն Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր։

Օրհնեսցէ զմեզ Տէր ի Սիօնէ, որ արար զերկինս և զերկիր։

ճկէ. Խոստովան եղէց քեզ Տէր՝ բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։

Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկրպագից ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց անուան քում, վասն ողորմութեան և ճշմարտութեան քո։

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո՝ յորում աւուր կարգամ առ քեզ. վաղվաղակի լուր ինձ. և բազում արասցես զօրութիւնս յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն թագաւորք երկրի՝ զի լուան զբանս բերանոյ քո. և օրհնեսցեն զճանապարհս քո։

Մեծ են փառք Տեառն՝ բարձր է Տէր. զխոնարհս տեսանէ՝ և զբարձունս ի հեռաստանէ ճանաչէ։

Թէ գնացից ես ի մէջ նեղութեանց՝ կեցուսցես զիս ի բարկութենէ թշնամւոյն։

Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և Տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան՝ զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

ճգ. * Աստուած յանուան քում կեցո՝ . . 75 և 77

ՅԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄՈՒՆ ԽԱՂԱՂԱԿԱՆԻ.

ոկ. Շնորհեա մեզ՝ Տէր՝ ի գիշերի զերկնային զխաղաղութիւն քո. և պահեա զմեզ ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի քո։

Տէր Աստուած փրկութեան իմոյ՝ ի տուէ կարդացի՝ և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո՝ Տէր՝ խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ։

Եկեսցէ առ մեզ Տէր՝ պահապան ի քէն՝ և պահեսցէ զմեզ յամենայն ժամ։

Առաքեա ի մեզ՝ Տէր՝ զզօրութիւն սրբոյ խաչին՝ որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ։

Արժանի արա՝ Տէր՝ զերեկս զայս խաղաղութեամբ՝ և առանց փորձութեան անցո՛ զմեզ։

Արժանաւորեա՛ Տէր զգիշերս զայս՝ խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով զմեզ։

Ընդ մեզ Տէր Աստուած՝ գիտասչիք հեթանոսք և պարտեցարուք՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ լուարո՛ւք զայս ի ծագաց մինչև ի ծագս երկրի՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ հզօրացեալքդ պարտեցարուք՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք՝ դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ Տէր՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ զբանն զոր խօսիք՝ մի մնասցէ առ ձեզ՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ո՛չ երկիցուք՝ և ո՛չ խռովիցուք՝ զի Աստուած։

Եւ զՏէր Աստուած մեր փառաւորարասցուք՝ և նա եղիցի մեզ յերկիւղ՝ զի Աստուած։

Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա՝ և նա եղիցի մեզ ի սրբութիւն՝ զի Աստ։

Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա՝ և նա եղիցի մեզ ի փրկութիւն՝ զի Աստ։

Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած՝ զի Աստ։

Եւ ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ ետես զլոյս մեծ՝ զի Աստուած։

Եւ որ բնակեալքդ էք ի խաւարի և ի ստուերս մահու՝ լոյս ծագեսցի առ ձեզ՝ զի Աստուած ընդ մեզ է։

Եւ քանզի Մանուկ ծնաւ՝ Որդի և տուաւ մեզ՝ զի Աստուած։

Եւ որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց՝ զի Աստուած։

Եւ որ կոչի անուն նորա Մեծի խորհրդոյ Հրեշտակ՝ զի Աստուած։

Եւ Սքանչելի խորհրդակից՝ զի Աստ։

Եւ Աստուած հզօր իշխան՝ զի Աստ։

Եւ Իշխան խաղաղութեան Հայր հանդերձելոյ յաւիտենից՝ Տէր Աստուած ընդ մեզ է։

Եւ փա՜ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից՝ Ամէն։

Տեառն Նէրսէսի Շնորհալւոյ Էջ։

Էջ

Այսեաց սիրով՝ Հայրըդ գըթած՝
Ի քս ստեղծեալ գործըս ձեռաց՝
Եւ ըզբանակըս Հրեշտակաց՝
Տո՛ւր պահպան մեզ տըկարացս։
Փրկեա՛ զանձինս ի փորձանաց՝
Ի խաւարի շրջող գիւաց։
Զի ի տուընջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի։

Եւ ինեղ անեղ անբսկըզբան
Ծընունդ անճառ Որդի և Բան՝
Որ արարեր ըզտիւ գործոյ՝
Եւ ըզգիշեր ի հանգիստ քնոյ՝
Տո՛ւր ի նընջել աչաց մարմնոյ՝
Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ։ Զի։

Բաբուն հոգւոց բանաւորաց
Աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց,
Ի փակիլ դրանց բնութեանց մարմնոց
Լոյս տուր աչաց սրբոյ մերոց,
Ի գիշերաց առ քեզ կանխել
Ընդ հրեղինացն օրհնաբանել. Զի.

Սուրբդ Սրբոյ Երրորդութիւն
Ըզմեզ մաքրեա քեզ բնակութիւն.
Շնորհեա ընդ մանկանցն առագաստի
Հանգչել ընդ քեզ ի յանկողնի.
Տուր ըզհայցուած բարեկամին
Ըղձիսս երից նրկանակին. Զի.

Երևելի լոյս ըստեղծեր
Զաւր և զգիշեր բաժանեցեր,
Ծագեա մեզ, Տէր, ի գիշերի
Ըղճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աչ քո հովանի. Զի.

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զմորհուրդ սրբոյ մեր մաքրեսցէ
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ.
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ
Զմիտս բոցով քով վառեսցէ. Զի.

Ի քեզ նայիմք Լոյսդ անմատոյց
Ի զգայական ծածկեալ լուսոյ,
Որ վասն մեր եդար ի գրի
Եւ նրնջեցեր ի տապանի.

Առ մեզ նրնջեա արթուն բնութիւն,
Հերքեա զչարին ներգործութիւն. Զի.

Իմիդ լուսոյ անբստուերի
Պաղատանօք կամք առաջի,
Որ փակեալ դրամբք երեկոյին
Երևեցար Մետասանին.
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք
Տէր և Աստուած զքեզ դաւանիմք,
Էջ և առ մեզ յերեկոյիս
Եւ տուր զողջոյն քո ի հոգիս։

Բամեալքս ըզքեզ, Տէր, աղաչեմք՝
Ընդ յոգնութիւն նայեա՝ հայեցիր,
Պահապանդ Իսրայէլի
Անձանց մերոց լեր հովանի.
Օթեա առ մեզ խաղաղարար,
Եւ նրնջեսցուք անխռովաբար,
Զի ընդ առաւօտըս կանխեսցուք
Օրհնել ըզքեզ ընդ Հօր Հոգւով։

Գոչման փողոյն Գաբրիէլի
Որ ի վերջնումն գիշերի,
Լսել արա զմեզ արժանի
Եւ աջակողմն օդեաց դասի.
Անշէջ վառեալ լոյս լապտերաց
Ըստ իմաստուն Հինգ կուսանաց,
Զի ընդ փեսայիդ ի յառագաստ
Հարսունք հոգւով մրտցուք ի փառս։

Հալածեա ի մէնջ, Տէր, նրշանաւ խաչի քո՝
զընդդիմամարտ և զաներևոյթ գազանն. և մի

տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։
Բարեխօսեա՛ վասն մեր, Աստուածածին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած, որ հովուէլոյն զիսրայէլ՝ ամենազօր և սքանչելի փառաւքն իւրովք։

գյ. Ի քէն հայցեմք, հայր զթութեանց և Աստուած մխիթարութեանց, ի տխրական գիշերային մերձեալ ժամուս, մխիթարեա՛ զմեզ ի տրտմութեանց մեղաց, և շնորհեա՛ զուրախութիւն գործովք արդարութեան, աղաչանօք սուրբ Աստուածածնին և ամենայն արդարոց։

Ըստ քաղցրագոյն Աստուածային քո հրամանի կոչման, Որդի Աստուծոյ. եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. թեթևացո՛ ի ծանրութեանց մեղաց զանձինս, և զօրացո՛ բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ պատուիրանաց. աղաչանօք.

Պաղատիմք առ քեզ հոգւով, ի հանգստեան հասեալ ժամուս, մարդասէր Հոգի Աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս երկրի, և վերստին ստանաս զոգիս մարդկան, նորափետուր զարդարեա՛ զննջեցեալսն մեր զծնեալսն ի քէն սուրբ աւազանաւն. աղաչանօք.

Զկենդանագիր անարատ ծնողի քոյ, արկանեմք առաջի անոխակալ Տէրութեանդ քոյ յորժամ գաս

փառօք հօր դասել զթշնամին խաչի քո, ներեա՛ յանցանաց մերոց՝ բարեխօսութեամբ Մօր քո և կուսի, աղաչեմք զքեզ, Տէր. պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։

Հաղորդս արա՛ և զմեզ, Տէր, ընդ սրբոց քոց Առաքելոցն, որք արժանի եղեն տեսանել զքեզ ի Յարութեան քո. արժանաւորեա՛ Տէր տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալստեանն. օրհնութիւն Առաքողին ի բարձունս։

Ի նստիլ քո յաստենի, Դատաւոր ահեղ, աղաչանօք Սուրբ Աստուածածնին՝ յիշեա՛ զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառաւք. քանզի քո են փառք յաւիտեանս. ամէն։

գյ. Արի Աստուած հարցըն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հաս յօգնութիւն ծառայից քոց
Անօգնական ազգիս Հայոց։
Տէր ողորմ. Տէր ողորմ. Տէր ողորմ։

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ Սուրբ ծընողիդ,
Յիշեա՛ զհեղումն արեան Փրկչիդ
Եվ ի խնդիր փոքու հօտիդ։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմ. Տէր ողորմ։

Զի գիտացաք մեք հաւատեաւ
Թէ չափ մեղաց մերոց լրցաւ.

Ուստի Տէրըդ մեր բարկացար
Առ ի խրատել ըզմեզ զարթեար։ Տէր ողբ։
Արդ անկանիմք առաջի քոյ
Գոչեմք մեղայ Տեառնըդ մերոյ,
Դարձո՛ ի մէնջ զյաստումբն քոյ
Վասն անբսպառ գթութեան քոյ։ Տէր ողբ։

ԵՐԳԻ, ՇԱՐԱԿԱՆԻ, ԳԻՐԻ, ԱԼԷԼՈՒՅԻ ԵՒ ՍԱՂՄՈՍԻ։

Ս. ԾՆՆԴԵԱՆ

Գէ։ Այսօր ծնանէ ծընընդեան, աւետիս։
Տեառնն մերոյ և յայտնութեան, աւետիս։
Այսօր արևն արդարութեան, աւետիս։
Երևեցաւ ի մէջ մարդկան, աւետիս։
Այսօր սուրբ Կոյսն անապական, աւետիս։
Ծնաւ երեր զանմահ արքայն, աւետիս։
Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս,
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս,
Այսօր դրժոխքն սարսեցան, աւետիս։
Գունդքք դիւաց յոյժ արամեցան, աւետիս։
Ահա՛ երեք արքայ եկին, աւետիս։
Որ երեքեանքն անուանին, աւետիս։
Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս։
Որք ի Սաբայ և յԱրաբայ, աւետիս։
Ոսկի, կնդրուկ, զմուռ նմա, աւետիս։
Ունին երեք ազնիւ ընծայ աւետիս։
Յերուսաղէմ քաղաք մտին, աւետիս։

Ի մէջ աստղին զկոյսն տեսին, աւետիս։
Ունէր ըզմեր Տէրն ի գըրկին աւետիս։
Երուսաղէմ դղզրդեցաւ, աւետիս։

Դէ։ Խորհուրդ մեծ և սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի։

Ծնաւ նոր Արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք
Զի վասն մեր մարմնացաւ։

Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ո՛չ մեկնելով ի հօրէ
Ի Սուրբ այրին բազմեցաւ։

Այսօր ցնծան երկինք ի վերուստ
Մեծապայծառ աւետեօք,
Եւ արարածք ամենայն
Զգեցան հանդերձ փրկութեան։

Այսօր յայրին ընծայեցաւ
Քրիստոս Որդին Աստուծոյ,
Եւ հրեղինաց բազմութիւնքն
Յերկնից յերկիր վայր իջեալ։

Այսօր հովուացն տեսեալ
Զարդարութեան Արեգակն,

Եւ ընդ հրեշտակս երգէին
փառք ի բարձունս Աստուծոյ։

Գ Ո՞վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ։
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Զառնոյր Կարապետն ըզմկրտիչն ի յանձն։

Յորդանան լուեալ փախստական դառնայր,
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։

Գետ մի զարհուրիր, քո Արարիչն եմ ես,
Եկեալ մկրտիմ և լուանամ ըզմեղս։

Յիսուս յառաջեաց աստուածութեամբ ի ջուրն,
Հանգերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ։

Երկինք պատառեալ, ձայն ի յերկնից իջեալ,
Զայն Հօր ի բարձանց Որդւոյն իւր վրկայեալ։

Դա է իմ Որդի ընդ որ հաճեցայ, ասէր,
Դրմա՛ լուարուք, որդիք մարդկան, ձայնէր։

Սուրբ Հոգին իջեալ, աղաւնակերպ տեսլեամբ,
Յայտնեալ ցուցանէր Հօր փառակից զՈրդին։

Արդ օրհնեալ է Հայր և համագոյ Որդին
Հոգւոյն ճշմարտի փառք յաւիտեանս, ամէն։

Դ։ Այսօր ձայնըն Հայրական, յերկնից իջեալ հաճոյական,
Սիրեցելոյ Որդւոյ վկայ, ա՜յ յորդորէ, գետ յորդորէ գետ
Յորդանան.

Յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յովհաննէս։

Այսօր երկիրս երկինք եղեն, երևելով Աստուածորդւոյն,
սիրով եկեալ ի մկրտիլ։ ա՜յ յորդորէ։

Այսօր վերին դասք հրեշտակաց, ուրախացան ընդ սուրբ
գալուստ Աստուածորդւոյն ի Յորդանան։ ա՜յ յորդորէ։

Այսօր եկեալ Աստուածորդին ի Յորդանան խոնարհու-
թեամբ, ջրով մկրտիլ ի Յովհաննէ։ ա՜յ յորդորէ։

Այսօր Մկրտիչն Յովհաննէս ի մկրտիլն հրաժարէր,
թէ ինձ պարտ է ի քէն մկրտել։ ա՜յ յորդորէ։

Այսօր գոչէր քաղցրը ձայնիւ, Աստուածորդին կարապե-
տին, պարտ է զօրէնսըն կատարել։ ա՜յ յորդորէ։

Այսօր բացեալ փակեալ երկինք, զոր յանցանօք փա-
կեաց Ադամ։ Եւ Հայր Որդի զնա կարդալով։ ա՜յ յորդորէ։

Այսօր Հոգին աղաւնակերպ, իջեալ յերկնից ի Յորդա-
նան, իւր փառակցին վրկայելով։ ա՜յ յորդորէ։

Պօղոսի առաքելոյն ի Տիտոսի ԱղՕրն է ընթերցուածս։

Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ՝ փրկիչ ամենայն
մարդկան։

Որ խրատէն զմեզ, զի ուրացուք զամբարշտութիւն և
զաշխարհական ցանկութիւն։ զգաստութեամբ և արդարու-
թեամբ և աստուածպաշտութեամբ կեցցո՛ւք յաշխարհի։

Եւ ակն կալցուք երանելի յուսոյն և յայտնութեան փա-
ռաց մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ յամենայն անօ-

բէնութենէ և սրբեսցէ իւր ժողովուրդ՝ սեպհական, նախանձաւոր գործոց բարութեան։

Զայդ խօսեա՛ և մխիթարեա՛ և յանդիմանեա՛ ամենայն սատիւք, զի մի՛ ոք իցէ որ զքեզ արհամարհիցէ։

ՅԵՐԷԿ ՃՐԱՊԵՑԻ. Սղ. Ալէլո՛-է՛ ալէլո՛-է՛. Հոգին Տեր-ը Եկեսցէ է +եղ և զբոլո՛-ին Բաբելացոյն հովանի լինի է վերայ +ս։

ՅՈՎՍԵՓ ՃՐԱՊԵՑԻ. Ալէ. Այսօր ծնա՛ Տէր է Հօրէ յաւա՛ջ +ան զյա՛-էպեանս Որդին, որ է օծեալ Տէր է +ապա+է Դա՛-ին, է վայելը՛-ին Տէրոյ +ոց՝ յարքանդրէ յաւա՛ջ +ան զբոլո՛-ոնէակ ծնայ զ+էզ։

Ս. ՅԱՐՈ՛-ՒԵԱՆ։

ԱՅ. Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խընդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա՛ ի ձայն ցընծութեան զԱստուած քո Սիոն։

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունսն քո. լուսաւորեա՛ Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա՛ ի ձայն ցընծութեան զԱստուած քո Սիոն։

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երբեակ լուսովն. և քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա՛ ի ձայն ցընծ.

Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի արասցուք ոճն ցընծութեամբ, նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Այսօր հրեշտակքն լուսափայլ ի յերնից իջեալ զարհուրեցոյց ըզպահապանսն, և սուրբ կանանցքն քարոզէր ասելով՝ Քրիստոս։

Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս. ազատեալք արեամբ Գառին Աստուծոյ, պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

ՍՈՂ. Քէզ վայելէ Աստո՛-ած օրհնո՛-ին է Սէ՛-ռն և +եղ պատ-ցին ողորմ+ յեր-ա՛-ապէմ։

Գողոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին Թղթոյն է ընթերցուած։

ՅԵՐԷԿ ՃՐԳՅԷ. Ցուցանեմ ձեզ եղբարք իմ զաւետարանն իմ՝ զոր աւետարանեցի ձեզ. զոր և ընկալարուք՝ յոր և հաստատեալքդ էք։

Որով ապրեցայքն, որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ թէ ունիցիք, բայց եթէ ի զուր ինչ հաւատացիք։

Զի ես ձեզ նախ զայն աւանդեցի՝ զոր և ես ընկալայ. թէև Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց։

Եւ զի թաղեցաւ, թէև յարեաւ յաւուրն երրորդի ըստ գրոց։

Եւ թէ երևեցաւ Կեփայի՝ և ապա մեծամասնիցն։

Ապա երևեցաւ աւելի և ս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն, յորոց բազումք կան մինչև ցայժմ և ոմանք ննջեցին։

Եւ ապա՝ երևեցաւ Յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն։

Հուսկ յետոյ քան զամենեսին՝ իբրև անարգի միոջ երևեցաւ և ինձ։

Զի ես իսկ եմ արուսն առաքելոց, որ չեմ իսկ արժանի՝ թէ կոչեցայց առաքեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ։

Այլ շնորհօքն Աստուծոյ եմ՝ զինչ և իցեմ՝ և շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն, այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցայ՝ և ոչ եթէ ես՝ այլ շնորհն Աստուծոյ՝ որ ընդ իս։

Արդ՝ եթէ ես՝ և եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք՝ և դուք այսպէս հաւատացիք։

Սաղ. Ալէ՝ Յարեա՝ Աստուած և ցու՝էցան ամենայն ընչաց՝ նորա՝ փախեան ապէլի՝ նորա յերեսաց նորա։

Սաղ. Երանելի է այր՝ որ ո՛չ գնաց է խորհուրդս ամբարշտաց է ճանապարհի մեղաւորաց նա՝ ո՛չ էկաց՝ և յաթոռս ժանդիցն ո՛չ նստաւ։

Ընթերցուածս ի Գործոց առաքելոց։

Յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն՝ ասէ՝ Եւ էր ամբոխ բազմութիւն անուանց հարիւր և քսանից։

Արք եղբարք՝ պարտ է կատարել գրոյն՝ զոր յառաջագոյն ասաց Հոգին սուրբ ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի՝ որ եղև առաջնորդ ունելեացն Յիսուսի։

Զի ի թիւս մեր էր՝ ընդ մեզ՝ և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։

Սա ստացաւ գեօղ ի վարձուց անիրաւութեան՝ և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր նորա։

Եւ յայտնի եղև ամենեցուն՝ որք բնակեալ են Յերուսաղէմ՝ մինչև գոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց ակեղդամայ՝ այսինքն՝ գեօղ արեան։

Զի գրեալ է ի գիրս սաղմոսաց՝ եղիցի բնակութիւն նոցա աւերակ՝ և մի որ իցէ՝ որ բնակիցի ի նմա։ և զկարգ նորա առցէ այլ։

Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի՝ յորում եմուտ և ել առ մեզ Տէր Յիսուս։

Սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչև յօրն՝ յորում վերացաւ ի մէնջ՝ վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ։

Եւ կացուցին երկուս՝ զՅովսէփ՝ որում Բարսաբայն կոչէին՝ որ անուանեցաւն Յուստոս և զՄատաթիա։

Եւ կացեալ յաղօթս ասեն՝ դու՝ Տէր՝ սրտագէտ ամենայնի՝ յայտնեա՛ զմի որ՝ զոր ընտրեցեր ի սոցանէ յերկոցունց։

Առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ՝ և զառաքելութեան՝ յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ ի տեղի իւր։

Եւ ետուն վիճակս նոցա· և ել վիճակն Մատաթեայ· և համարեցաւ ընդ մեռասան առաքեալսն։

Սաղ· Ամէ· Ամէ· Գովեա՛ Երուսաղէմ զՏէր։

Եւ օրհնեա՛ զԱստուած քո Սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց,
Եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ։
Ո՞ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն,
Պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր,
Վազվազ ընթանան պատգամք նորա։
Դնէ զձիւն որպէս զասր,
Եւ զմէգ որպէս փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս,
Առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա,
Շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր Յակոբայ,
Զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։
Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր։
Եւ զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա։
Ամէ· Օրթի·

Յքնիեռնոլ զբո գլուխ առեպարանաց, յառաւօտն՝ զՂ.ուկան.
ի ծաղոն՝ զՅովհաննն. յերեկոյին՝ զՄատթէոսն և յաբչակմանն՝
զՄարկոսն, ապն սաղմոս՝ ինոր կի-ասկէ ցՀամբարձումն
քոպ այոմ.

..... Յառաւօտու առեպարանի· (Ղ.ուկ.)

Յդ· Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ։

Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, և դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո։

Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո՛ զբարկութիւնս քո ի մէնջ։

Մի յաւիտեան բարկանար մեզ Տէր, և մի ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչև յազգ։

Աստուած դու դարձեալ կեցուսցես զմեզ, և ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ։

Յոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ։

Լուայք զի՞նչ խօսի Տէր Աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ՝ որք դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն՝ մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակիլ փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն
յերկնից երևեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն, և երկիր մեր տացէ
զպտուղ իւր։ արդարութիւն առաջի նորա գնասցէ։
Դիցէ ի ճանապարհի զգնացս իւր։
Ալէ։ Օրթի։

Յերեկոյի աւուրն ա-էսպրանի (Մաքր։)

ՃԾԸ։ Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն
նմա յեկեղեցիս սրբոց։

Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր։ որդիք Սիօնի
ցնծասցեն ի թագաւորն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ, սաղմո-
սիւք և օրհնութեամբ սաղմոս երգեսցեն նմա։

Հաճի Տէր ընդ ժողովուրդ իւր սուրբ, և բարձր
առնէ զհեզս ի փրկութեան։

Պարծեսցին սուրբքն փառաւք, և ցնծասցեն ի հան-
գիստ իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բե-
բանաւք իւրեանց։

Սուր երկայրի ետ ի ձեռս նոցա, առնուլ զհա-
տուցումն ի հեթանոսաց, և ի յանդիմանութիւն ամե-
նայն ժողովրդոց։

Ի կապել զթագաւորս նոցա կապանաւք, զզօրավարս
նոցա ձեռնակապաւք երկաթեաւք։

Առնել նոցա դատաստանս ըստ գրոց։ և փառք
այս են ամենայն սրբոց նորա։

Ցարյակման ա-էսպրանի (Մաքի։)

ՃՁ։ Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա, օրհնե-
նեցէք զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա
ի բազում մեծութեան նորա։

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա
սաղմոսիւք և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովեցէք զնա ու-
րախութեամբ։

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր, գովեցէք զնա
ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան։ ամենայն հո-
գիք օրհնեցէք զՏէր։

Յի-ըտ-ան-ի-ը Շաբաթի ա-ո-ը սաղմ-ս երեկոյի աւուրն ա-էսպրանի
(Մաքր։)

ԿԶ։ Աստուած ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ երևեցո՛
զերեսս քո ի մեզ և ողորմեա՛ մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո։ յազգինս ամե-
նայն զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած։
խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազգինք։ զի դու դա-
տես զժողովուրդս ուղղութեամբ, և ազգաց երկրի
դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած։
գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր։ և օրհնեաց զմեզ Աս-
տուած՝ Աստուած մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ։

Եւ ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

Եւ յայնմանէ սուրբերն նոյն սրտով (Մաղ.)

Զ. Յնծացէք առ Աստուած օգնական է մեր, աղաղակեցէք առ Աստուած Յակոբայ։

Առէք սաղմոս և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա ի ձայն քաջալերութեան։

Փող հարէք ի գլուխս ամսոյ. յաւուր նշանաւորի տաղտկանաց մերոց։

Հրաման է այս Իսրայէլի. և իրաւունք են Աստուծոյ Յակոբայ։

Վկայութիւն Յովսէփու դոր եդ ընդ նմա, որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց. լեզու զոր ոչ գիտէր լուաւ։

Ի բաց արար ի բեռանց զթիկունս նորա և զձեռս նորա յորթ և ի թիի ծառայելոյ։

Ի նեղութեան կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ ի գաղտնութենէ մրրկին. և փորձեցի զքեզ ի վերայ Ջուրցն Հակառակութեան։

Լուր ժողովուրդ իմ՝ և վկայեմ քեզ՝ և Իսրայէլ թէ լուիցես ինձ։

Մի՝ կա՛ս եղիցին քեզ աստուածք առ ժամայնք. և մի երկիրպագանիցես դու Աստուծոյ օտարի։

Ես եմ Տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց. բաց զբերան քո՝ և լցիս զդա։

Ժողովուրդ իմ՝ ոչ լուաւ ձայնի իմում. և Իսրայէլ յիս՝ ինչ՝ ոչ նայեցաւ։

Բարձի թողի զնոսա երթալ զհետս կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց։

Զի թէ ժողովրդեան իմոյ լսեալ էր ինձ՝ կամ Իսրայէլի զմանապարհս իմ գնացեալ էր։

Որպէս զոչինչ թշնամիս նոցա արարեալ էր իմ զթշնամիս նորա. և ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ։

Թշնամիք Տեառն ստեցին նմա. և եղիցին ժամանակք նոցա յաշխարհի։

Կերակրեաց զնոսա ի պարարտութենէ ցորենոյ. և ի վիմէ մեղր յագեցոյց նոցա։

Ի Համբարձմանէ ցՀոգեգալուստ սաղմոս տուտ՝ և երգեցէք սուրբն սէրոբեանց (Ղ.-է. Մաթն.)

ԽԶ. Համբարձաւ Աստուած օրհնութեամբ. և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Ծափս հարէք ամենայն հեթանոսք՝ աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։

Զի Տէր բարձրեալ և ահարկու՝ թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

Հնազանդ արար զժողովուրդս մեզ. և զհեթանոսս ի ներքոյ ոտից մերոց։

Ընտրեաց զմեզ իւր ի ժառանգութիւն՝ զգեղեցկութիւն Յակոբայ զոր և սիրեաց։

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ. և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում՝ սաղմոս ասացէք թագաւորին մերում՝ սաղմոս ասացէք։

Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է՝ սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ։

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց. Աստուած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ։

Իշխանք ժողովրդոյ ժողովեցան առ Աստուած Աբրահամու.

Զի Աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան։

Ե- յերէկոյ յաջոյմն ա-էպաբանէ՝ (Մարկ)

ԻԳ· Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր՝ համբարձցին դրունք յաւիտենից՝ և մտցէ թագաւոր փառաց։

Տեառն է երկիր լրիւ իւրով՝ աշխարհ և ամենայն բնակիչք նորա։

Նա ինքն ի վերայ ծովու հիմունս էարկ նմա՝ ի վերայ գետոց պատրաստեաց զնա։

Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն՝ կամ ո՞վ կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա։

Որ սուրբ է ձեռօք և անբիծ սրտիւ՝ որ ոչ էառ զնանրութիւն յանձն իւր՝ և ոչ երդուաւ ընդ ընկերի իւրում նենգութեամբ։

Սա առցէ զօգնութիւն ի Տեառնէ՝ զողորմութիւն յԱստուծոյ Փրկչէ իւրմէ։

Այս ազգ է որ խնդրէ զՏէր՝ խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յակոբայ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց։

Ո՞վ է սա թագաւոր փառաց՝ Տէր հզօր զօրութեամբ իւրով՝ Տէր հզօր ի պատերազմի։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր՝ համբարձցին դրունք յաւիտենից՝ և մտցէ թագաւոր փառաց։

Ո՞վ է սա թագաւոր փառաց Տէր զօրութեանց։

Սա ինքն է թագաւոր փառաց։

Ի ԾՆՆԴԵԱՆ ԵՒ Ի ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԳԱԼՈՒՑԻ.

(Մին ընդ-ն-)

ԸՆԹԵՐՑՈՒԱ՞ԾՍ Ի ԴԱՆԻԷԼԷ՞ ՄԱՐԳԱ՞ՐԷ՞Է։

Յամի՞ն ութուտասաներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի՝ արար պատկեր ոսկի՝ բարձրութիւն նորա վաթսուն կանգուն՝ և լայնութիւն նորա կանգուն վեց՝ և կանգնեաց զնա ի դաշտին Դուրայ յաշխարհին Բաբիլացւոց։

Եւ արձակեաց ժողովել զզօրավարս՝ զզօրագլուխս և զկուսակալս՝ զպետս և զբռնաւորս և զգործակալս և զամենայն իշխանս աշխարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։

Եւ ժողովեցան կուսակալքն՝ զօրավարքն և զօրագլուխքն՝ պետքն և բռնաւորքն՝ մեծամեծքն և գործակալքն և ամենայն իշխանք աշխարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր՝ և կային առաջի պատկերին՝ զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր։

Եւ քարոզ կարդայր զօրութեամբ՝ և ասէր՝ ձեզ ասի ազգ և ազինք՝ եւ լեզուք։

Յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրնգի՝ թմբկի և քնարի՝ և տաւղի և զերգոց միաբանութեան՝ և զամենայն ազգաց արուեստականաց՝ անկանիջիք՝ և երկիր պագանիջիք պատկերին՝ զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր արքայ։

Եւ որ ոչ անկեալ երկիր պագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։

Եւ եղև իբրև լուան ազգքն զձայն փողոյն, զսրնգին, զտաւղի և զնուագարանաց, և զամենայն ազգաց արուեստականաց՝ անկանէին ամենայն ազգքն և ազինք և լեզուք, և երկիր պագանէին պատկերին ոսկւոյ, զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր։

Յայնժամ մատեան արք քաղդէացիք և եղեն չարախօսք զհրէից առ Նաբուգոդոնոսոր։ և ասեն. արքայ, յաւիտեան կեաց։

Դու հրաման եատուր ամենայն մարդոյ՝ որ լսիցէ զձայն փողոյ, զսրնգի, և զքնարի, և զտաւղի և զնուագարանաց. և զամենայն ազգաց արուեստականաց. և որ ոչն անկեալ երկիր պագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։

Արդ՝ են ասա արք հրեայք, զորս կացուցեր ի վերայ գործոց աշխարհիս Բաբիլացւոց՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որք ոչ հնազանդեցան հրամանի քում արքայ, և զդիս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ, զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն։

Յայնժամ Նաբուգոդոնոսոր սրամտութեամբ և բարկութեամբ հրամայեաց ածել զՍեդրաք, զՄիսաք և զԱբեդնագով, և ածին առաջի թագաւորին։

Պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր և ասէ ցնոսա. թէ արդարեւ՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, զդիս իմ ոչ պաշտիցէք, և պատկերին ոսկւոյ, զոր կանգնեցի՝ երկիր ոչ պագանիցէք։

Բայց արդ՝ եթէ պատրաստ լինիցիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի և թըմբկի և քնարի և զմիաբանութիւն ամենայն ազգաց արուեստականաց, անկանիցիք և երկիր պագանիցէք պատկերին, զոր արարի։ Այս թէ ոչ պագանիցէք, երկիր՝ ի նմին ժամու անկանիցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ է Աստուած՝ որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոց։

Պատասխանի ետուն Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, և ասեն ցարքայ Նաբուգոդոնոսոր։

(ԵՐԵՔ ԸՆԴԵՐՑՅԷՆ)

Ոչի՛նչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի։

Զի է մեր Աստուած յերկինս՝ զոր մեքն պաշտեմք՝ կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ՝ և ի ձեռաց քոց արքայ՝ ապրեցուցանել զմեզ։

Այս թէ ոչ՝ այս ինչ յայտնի լեցի քեզ արքայ՝ զդիս քո մեք ոչ պաշտեմք՝ և պատկերիդ ոսկւոյդ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք։

(Դարձեալ ոչն ընդերցցն)

Յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղև սրբտամբտութեամբ, և զոյն երեսաց նորա շրջեցաւ ի վերայ Սեդրաքայ, Միսաքայ և Աբեդնագովի. և ասէ. Ջեռուցէք զհնոցն եօթնապատիկ, զի մինչև ի վախճան այրեսցի՛ն:

Եւ արք հինգ զօրաւորք զօրութեամբ՝ կապեսցեն զՍեդրաք, զՄիսաք և զԱբեդնագով արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ:

Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք և վարտեօք, արտախուրակօք և զանկապանօք իւրեանց, և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ:

Զի հրաման թագաւորին սաստկանայր, և հնոցն բորբոքէր եօթնապատիկ առաւել յոյժ:

Եւ երեքեան նոքա Սեդրաք, Միսաք և Աբեդնագով անկան ի մէջ հնոցին կապեալք. և գնային ի մէջ ջրոյն, օրհնէին և գովէին զտէր Աստուած:

Յարեաւ Ազարիա, և եկաց յաղօթս այսպէս, երաց զբերան իւր ի մէջ հրոյն, եւ ասէ:

(Դարձեալ երեն ընդերցցն)

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեան:

Զի արդար ես յամենայնի զոր ածեր ի վերայ մեր և ամենայն գործք քո ճշմարիտ են և ուղիղ են ճանապարհք քո և ամենայն դատաստանք քո ճշմարտութիւն:

Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր ըստ ամենայնի զոր արարեր մեզ և քաղաքին սրբոյ հարցն մերոց Երուսաղեմի զի ճշմարտութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն մեղաց մերոց:

Զի մեղաք և անօրինեցաք յապստամբ լինիլ ի քէն և առաւել մեղաք յամենայնի:

Եւ պատուիրանաց քոց ո՛չ անսացաք ո՛չ պահեցաք և ո՛չ արարաք՝ որպէս պատուիրեցեր մեզ զի բարի լինիցի մեզ:

Եւ զամենայն՝ զոր ածեր ի վերայ մեր և զամենայն զոր արարեր մեզ արդար դատաստանաւ արարեր:

Եւ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց անօրինաց խստաց և ապստամբողաց և թագաւորի անիրաւի և չարի քան զամենայն երկիր:

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց և պաշտօնէից:

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քոյ և մի՛ ցրեր զուխտ քո՝ և մի՛ ի բացեայ

առներ զողորմութիւնս քո ի մէնջ, վասն Աբրահամու սիրելւոյ քոյ, և վասն Իսահակայ ծառայի քոյ, և վասն Իսրայելի սրբոյ քոյ:

Որոց խոստացար բազմացուցանել զզաւակ նոցա՝ իբրև զաստեղս երկնից, և զաւազ առափին ծովու:

Եւ արդ՝ Տէր, նուազեցաք քան զամենայն ազգս՝ և եմք տառապեալք յամենայն երկրի այսօր վասն մեղաց մերոց:

Եւ ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան, Մարգարէ և առաջնորդ, ոչ ողջակէզք և ոչ զոհք, և ոչ պատարագք, և ոչ խունկք, և ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քոյ, և գտանել զողորմութիւն ի քէն:

Այլ անձամբ բեկելովք և հոգւովք տառապանաց ընդունելի լեցուք, իբրև զողջակէզս խոյոց և զուարակաց, և իբրև զբիւրաւորս գառանց պարարտից՝ այնպէս եղեցի պատարագս մեր այսօր առաջի քո, լինել կատարեալ զկնիք քո, զի չեմք ամօթ յուսացելոցս ի քեզ:

Եւ արդ՝ զամբ զհետ քո ամենայն սրտիւք մերովք, և երկնչիմք, ի քէն, և խնդրեմք զերեսս քո, մի՛ յամօթ առներ զմեզ՝ այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում, և ըստ բազում ողորմութեան քում:

Եւ փրկեա՛ զմեզ վասն սքանչելեաց քոց, և տո՛ւր փառս անուանն քում Տէր:

Եւ յամօթ լեցին ամենեքեան, որք ցուցանեն չարիս ծառայից քոց, և ամաչեսցեն յամենայն բռնութեան իւրեանց, և զօրութիւն նոցա խորտակեսցի:

Եւ ծանիցեն, զի դու ես Տէր Աստուած միայն, և փառաւորեալ ի վերայ ամենայն տիեզերաց:

(Դարձեալ ՅԻՆ ԸՆԹԵՐՑՍԷ)

Եւ ոչ դադարէին որք արկին զնռաս՝ սպասաւորք թագաւորին՝ ի զհնոցն բորբոքելոյ նաւթիւ և ճիթով և վշով և որթով:

Եւ ելանէր դիզանայր բոցն ի վերոյ քան զհնոցն ի քառասուն և յի՛ն կանգուն. և շրջէր, պատէր շուրջ զհնոցաւն, և այրէր զորս գտանէր ի քաղդէացւոց անտի:

Եւ հրեշտակ Աստուծոյ էջ, եկաց ընդ Ազարիանս ի հնոցի անդ, և թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի:

Եւ արար ի մէջ հնոցին իբրև զհողմ, որ ցօղագին շնչեցէ. և ոչ մերձենայր ամենևին հուրն ի նոսա, ոչ արամեցուցանէր, և ոչ նեղէր ընդնոսա:

Յայնժամ երեքեան իբրև ի միոջէ բերանոյ օրհնէին, գովէին և փառաւոր առնէին զԱստուած և ասէին:

(ԵՐԵԿՈՅ ԸՆԹԵՐՑՔԻՆ)

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և առաւել յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քոյ, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քոյ գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես որ հայիս յանդունդս, և նստիս ի քրովբէս, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես որ նստիս ի հաստատութեան երկնից, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զտէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք հրեշտակք Տեառն զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

(Դպիր՝) Օրհնեցէք, գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք ամենայն զօրութիւնք Տեառն զՏ-

տէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք որդիք մարդկան զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք Քահանայք զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

(Դպիր՝) Օրհնեցէք, գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք ծառայք Տեառն զտէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք Անանիա, Ազարիա և Միսայէլ զտէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

(Դպիր՝) Օրհնեցէք, գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Զի փրկեաց զմեզ ի դժոխոց, և ի ձեռաց մահու ապրեցոյց զմեզ, և փրկեաց զմեզ ի հնոցէս, և ի միջոյ բորբոքեալ բոցոյս, ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ:

Գոհացարուք զտեառնէ, զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Օրհնեցէք ամենայն պաշտօնեայք Տեառն, զԱստուածն աստուածոց, օրհնեցէք և գոհացարուք, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ի ժամ Ս. Հաղորդութեան։

ԷՅ. Որ կազմեցեր Սեղան խորհրդոյ, և արբուցեր յանմահական բաժակէն սրբոյ քոյ Առաքելոցն այսօր ի Սուրբ Վերնատունն, ողորմեա։

Մաքրեա ըզմիտս և ըզխորհուրդս, զի և մեք հաղորդեսցուք սրբութեամբ ընդ սրբոյ քոյ Առաքելոց այսօր ի սուրբ Վերնատունն. ողորմեա։

Որ վասն մեր յերկրի երևեալ, զամենայնն կատարեցեր ըստ օրինացն, այսօր կատարումն ըստուերական ոչնչին. Որդի Աստուծոյ ողորմեա։

Այսօր անհառ լուսոյն ծագումն 13.

Զոփ. Ով ան մա հ հայ կե նա ց,
Բ ՝ալ՝ալ՝ալ

Զի տացես հանապազ
Մեզ զանճառ քո բարիսդ։

Եւ քեզ փառս երգեսցուք
Այժմ ընդ հօր յաւիտեան,
Համագոյ Սուրբ Հոգւոյն
Այժմ և միշտ յաւիտեան։

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

(Յառաջ քան պղտորացն ի ծաղս ջուրոյն)։

Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ. ամէն։

ՍԱՂՄՈՍ Ծ.

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթեսցես ի դատել քում։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Յողեա՛ զիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա՛ ինձ, Տէր, զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս, Աստուա՛ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում։

Մի ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց, և զՀոգի քո Սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ փրկութեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դո՛ւ ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զՀոգի խոնարհ՝ Աստուա՛ծ ոչ արհամարհէ։

Բարի արա՛, Տէր, կամօք քովք Սիօնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր և. Այժմ և միշտ.

Ներսէսի Շնորհալւոյ երգ։

Աւրհնեմք ըզքեզ, Հայր անըսկիզբն
Էից էակ ի յանգոյից,
Բարձեր ձեռօք նիւթ ի հողոյ,
Եւ ստեղծեր մարդ ի պատկեր քո.
Գլուխն ոտից խոնարհեցաւ,
Զի զպատուիրան քո մոռացաւ,
Դարձեալ ասեմք ըստ անառակին
Թէ Հա՛յր, մեղայ քեզ ի յերկինս։

Երկնաւորաց անքննելի
Եղեր մարդկան տեսանելի,
Զգեցար պատկեր հողեղինի,
Պատկերդ Հօր անփոխելի,
Էլեր յերրորդ ժամ ի խաչին
Վասն Ադամայ նախաստեղծին.
Ընդ աւազակին քում խաչակցին
Արժանացո՛ զմեզ դրախտին։

Թագաւոր թագաւորաց
Առատաբուղխ Հոգի շնորհաց.
Ժողովելոցն ի վերնատան
Առաքելոցն երկոտասան,
Ի հրոյ լեզուս երևեցար
Յոգիս նոցա վերանստար.
Լո՛ւր յանուն քո ժողովելոցս,
Է՛լ և առ մեզ յերրորդ ժամուս։

Մ՝ողն. Յամենայն ժամու աղաչանք իմ այս են և այն ը՝ն ի՝ երկին.
և յ՝ արդ՝ն երկեսցեն զգերեն՝ չխարհուրդ խորին։

Ծան. Աւրնեմք—Օրհնեմք։

Ի ԶԳԵՍՏԱՒՈՐԵԼՆ ՔԱՀԱՆԱՅԻ։

Դպ.— Խորհուրդ խորին անհաս անսկիզբն,
Որ զարգարեցեր զվերին պետութիւնդ,
Ի յառաջագոյն անմատոյց լուսոյն,
Գերապանծ փառօք զդասքս հրեղինաց։

Անճառահրաշ զօրութեամբ
Ստեղծեր զԱդամ պատկեր տիրական,
Եւ նաղելի փառօք զգեստաւորեցեր
Ի դրախտն ադենի տեղի բերկրանաց։

Զարտարանօք քո սուրբ Միածնիդ
Նորոգեցան արարածք ամենայն,
Եւ վերըստին մարդն անմահացաւ
Զարդարեալ ի զգեստ անկողոպտելի։

Անձրևաձին բաժակ հրահոսան,
Որ հեղար յառաքելոն ի սուրբ Վերնատանն,
Հեղ և ի մեզ Հոգիդ Սուրբ Աստուած
Ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն։

Տան քում վայելէ սրբութիւն,
Որ զգեցար զվայելչութիւն,
Սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ
Պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ։

Որ զարարչագործ բաղուկըս քո
Տարածեցեր ընդդէմ աստեղաց,
Հաստատեա զբաղուկս մեր կարողութեամբ
Համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ։

Իւրմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս
և զըզգայարանս,

Խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարովնի,
Ծաղկեալ յոսկեթել ի զարդ խորանին։

Բամբիւռ բոլորիւ տիրապէս աստուածպատական,
Նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր
Քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր։

Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի քո անշարժ պահեա,
Եւ զերկրպագուս անուանդ քում
Պահեա ի խաղաղութեան։

Պապարագող տահանայն Էլեալ յԱ-ռանդապանէ՝ գայ յԱպեան և ը-ացեալ զյեռ՝ ասէ.

Ռհ.— Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով Տէր։

Սէկ.— Դատ արա՛ ինձ, Տէր, զի ես յամբծութեան իմում գնացի, ի Տէր յուսացայ՝ զի մի՛ եղէց հիւանդ։

Ռհ.— Փորձեա՛ զիս, Տէր, և քննեա՛ զիս, փորձեա՛ զերիկամունս իմ և զսիրտ իմ։

Սէկ.— Ողորմութիւն քո, Տէր, առաջի աչաց իմոց. և հաճոյ եղէց ճշմարտութեան քում։

Ռհ.— Ո՛չ նստայց ես յաթոռս նանրաց, և ընդ անօրէնս ես ո՛չ մը-տից։

Սէկ.— Ատեցի ես զժողովս չարաց, և ընդ ամբարիշտս ես ո՛չ նըս-տայց։

Քհ.—Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով Տէր։

Սէր.—Լսել ինձ զձայն օրհնութեան քո. և պատմել զամենայն սքանչելիս քո։

Քհ.—Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։

Սէր.—Մի կորուսաներ ընդ ամբարիշաս զանձն իմ, և մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ։

Քհ.—Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են և աջք նոցա լի է կաշառօք։

Սէր.—Ես յանբծութեան իմում գնացի, փրկեա զիս Տէր, և ողորմեա ինձ։

Քհ.—Ոտն իմ կացցէ յուղղութեան.

Սէր.—Եկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

Փառք Հօր և. Այժմ և միշտ և.

Քհ.—Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնի։

Սէր.—Սուրբ զԱստուածածինն՝ և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա։

Քհ.—Ընկալ Տէր զաղաչանս մեր։ Ապա ասէ, Խոստովանիմ առաջի Աստուծոյ. Սերիոկոյ տոհանայն ասէ. Ողորմեսցի քեզ։ Պատարագողն, Ազատեսցէ և զձեզ մար։

Սէր.—Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ։

Քհ.—Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ։

Ընդ. Դ.թ. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանիրուք զի նա է Տէր Աստուած մեր։

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք, մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկս նորա։

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։

Փառք Հօր և. Այժմ և միշտ.

Սէր.—Սուրբ Եկեղեցեաս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա։

Քհ.—Ի մէջ տաճարիս և առաջի. ԵՒ ընդ դրան տաճարն ասելով՝ ելանէն ի ոեղանն. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Սէր.—Դատ արա՛ ինձ, Աստուած, և իրաւ արա՛ ինձ ի դատաստանի իմում։

Քհ.—Ցաղգէ՝ որ ո՛չ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս։

Սէր.—Դու, Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր արտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Քհ.—Առաքեա՛ Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Սէր.—Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Ք.Հ.—Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ՝ Աստուած Աստուած իմ։

Սրբ.—Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս։ յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք Հօր և. Այժմ և միշտ.

Սրբ.—Օրհնեսցո՛ւք զԱմենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգևորս։ Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա՛։

Ք.Հ.—Ի յարկի սրբութեան և . . . .

Ե՛ռ՝ ապ՛ յԳԷՆ ղՎԼՐԱԳՈՅՆ ԵՒ ԴՊԷԲՔՆ ԷՂԱՆԱԿԷՆ ՌԵՂԷԴՆ՝ ԸՆԴ ՈՒ-ՈՒ-ՐՆ ՊԱՊԱՂԱԾՆ, ԵՒ Ի ԲԱՌՆԱԼ ՎԼՐԱԳՈՒՆ ԵՐԳԵՑՈՒՆ.

Դպ.—Բարեխօսութեամբ Մօր քո և կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս։ Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զՆկեղեցի արեամբ քո Քրիստոս, և ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս Առաքելոց և Մարգարէից սուրբ Վարդապետաց։ Այսօր ժողովեալ գասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ։ Ընկալ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զՆոյի և զԱբրահամու։ Բարեխօսութեամբ վերին քո դօրացդ, միշտ անշարժ պահեա՛ զԱթոռ Հայկազնեայս։

Սրբ.—Օրհնեա՛ Տէր։

Ք.Հ.—Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և . . . .

Սրբ.—Եւ ևս խաղաղութեան զՏէր։ Օրհնեա՛ Տէր։

Ք.Հ.—Օրհնութիւն և փառք։ Խաղաղութիւն։

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրբ.—Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ.—Առաջի քո Տէր։

Ք.Հ.—Տէր Աստուած մեր որոյ կարողու։

Դպ.—Ճաշա՛ փոխն ԵՒ ՀԱՐԿԱՆՆ ԸՆԴ ՊԱՊԱՂԱԾՆ։

ՃՇ. ՈՒ. ՀԱՊԿԷ։

Դ՝ Գովեա՛ Երուսաղէմ զՏէր.

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց՝ ալէլուիա.

Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն ալէլուիա.

Փառք Հօր։

Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա.

Որ զաշխարհս լուսաւորեաց ալէլուիա։

Սրբ.—Օրհնեա՛ տէր։

Ք.Հ.—Զի քո է կարողութիւն և զօրու։

Սրբ.—Պռօսխումէ։

Դպ.—Սուրբ Աստուած՝ սուրբ և հզօր՝ սուրբ և անմահ՝ որ յարեար ի մեռելոց ողորմեա՛ մեզ։ (Կրկնէ՛ Երեց։) 47

Սրբ.—Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրէ։—Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։

Դպ։—Տէր ողորմեա։

Սրէ։—Վասն Հայրապետին մերոյ Տեառն (այս անուն) կենաց՝ և փրկութեան հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք։

Դպ։—Տէր ողորմեա։

Սրէ։—Վասն վարդապետաց, քահանայից սարկաւագաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք։

Դպ։—Տէր ողորմեա։

Սրէ։—Վասն բարեպաշտ թագաւորաց՝ և աստուածասէր իշխանաց զօրավարաց և զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք։

Դպ։—Տէր ողորմեա։

Սրէ։—Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք։

Դպ։—Յիշեա Տէր և ողորմեա։

Սրէ։—Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զտէր աղաչեսցուք։

Դպ։—Տէր ողորմեա։

Սրէ։—Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք։

Դպ։—Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրէ։—Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Դպ։—Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրէ։—Օրհնեա՛ տէր։

Քհ։—Զի ողորմած և մարդասէր ես։

ՐՆԴԷՆՈՒԼ ՔԷՐԴ. ՍԼԷԼՈՒՆ ԸՍՊ ՊԱՊԱՀՈՒՆ, ԻՆՔ ՅԱՐՈՒՆ ՊԵՏՔ ՊԱՀՈՑ «ԱՂԱՂԱԿԵՂԷՔ» ՅԵՐԷՍ 116

Սրէ։—Ալէլուիա օրթի։

Քհ.—Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ։—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրէ։—Երկիւղածութեամբ լուարուք։

Դպ։—Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սրէ։—Պատսխուսմէ։

Դպ։—Ասէ Աստուած։

Ա-ԷՊՍԱԼՄԱՆ ԸՍՊ ՊԱՊԱՀՈՒՆ։

Դպ։—Փառք քեզ Տէր Աստուած մեր։

ՀԱՆԳԱՌԱԿ ՆԻՒՆԻԱԿԱՆ։

Սրէ։—Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ՝ յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։
Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։
Նոյն ինքն ի ընութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։
Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով։

Որով էառ մարմին հոգի և միտք՝ և զամենայն որ ինչ է ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Զարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ՝ ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս՝ որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի Սուրբ Հոգին՝ յանեղն և ի կատարեալն. որ խօսեցաւ յՕրէնս և ի Մարգարէս և յԱւետարանս։

Որ էջն ի Յորդանան՝ քարոզեաց զառաքեալն՝ և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի միմիայն Ընդհարական և Առաքելական սուրբ Եկեղեցի։

Ի մի Մկրտութիւն՝ յԱպաշխարութիւն՝ ի Քաւութիւն և ի Թողութիւն մեղաց։

Ի յարութիւնն մեռելոց՝ ի Դատաստանն յաւիտենից. Հոգւոց և մարմնոց՝ յԱրքայութիւնն երկնից՝ և ի Կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին. կամ՝ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին. կամ թէ՝ յոչէից եղեն՝ կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ և Առաքելական սուրբ Եկեղեցի։

Սրբ.— Օրհնեա՛ տէր։

Քհ.—Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս՝ երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և Միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և։

Սրբ.— Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Դպ.— Տէր ողորմեա։

Սրբ.—Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ և ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշ-

տաման և աղօթից. զի արժանի ընդունելութեան արասցէ։ Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց՝ Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց՝ թողցէ զյանցանս մեր. ողորմեսցի ի վերայ մեր։ Աղօթք մեր և խնդրուածք յաժենայն ժամ մոցեն առաջի մեծի Տէրութեան նորա. և նա տացէ մեզ միաբան միով հաւատով և արդարութեամբ վաստակիլ ի գործս բարեաց։ Զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր՝ Տէրն ամենակալ. կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ.— Կեցո՛ Տէր։

Սրբ.—Զժամ սուրբ Պատարագիս և զառաջակայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։

Դպ.— Շնորհեա՛ Տէր։

Սրբ.—Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդր։

Դպ.— Շնորհեա՛ Տէր։

Սրբ.—Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդր։

Դպ.— Շնորհեա՛ Տէր։

Սրբ.—Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդր։

Դպ.— Շնորհեա՛ Տէր։

Սրբ.—Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք։

Դպ.— Տէր ողորմեա։

Սրբ.— Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Դպ.— Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ.—Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասացուք ամենեքեան միաբանութեամբ։

Դպ.—Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Սրկ.—Օրհնեա՛ տէր։

Քհ.—Որպէս զի արժանաւոր։ Խաղաղութիւն

Դպ.—Եւ ընդ Հոգւոյդ քում։

Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ.—Առաջի քո Տէր։

Քհ.—Խաղաղութեամբ քով Քրիստո։

Սրկ.—Օրհնեա՛ տէր։

Քհ.—Տէր Աստուած օրհնեսցէ զամե։

Սրկ.—Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից, և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից, մերձեսցի յԱստուածային խորհուրդս։

Դպ.—Մարմին տէրունական, և Արիւն փրկչական կայ առաջի։ երկնային զօրութիւնքն յաներևոյթս երգեն և ասեն։ անհանգիստ բարբառով։ Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց։

Սրկ.—Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս։

ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ ԸՍՏ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՒՈՒՐՆ։

Մննդեան, Ա-էպէս, Վարդավառ և Ասպա-ածածին։

Դպ.—Բազմութիւնք հրեշտակաց։ և զօրաց երկնաւորաց, իջեալ ի յերկնից ընդ միածին թագաւորին։ Որք

(խմբովն) երգէին և ասէին՝ Սա է Որդին Աստուծոյ։ ամենեքեան ասասցուք։ ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմունք աշխարհի։ Զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երևեցաւ։ և ընդ մարդկան շրջեցաւ։ զի կեցուսցէ զանձինս մեր։

Մեծի Հինգշաբթի։

Որ վերայ նստիս ի կառս հրանիւթս քառակերպեանս։ անճառելի Բանդ Աստուած։ Այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քո արարածոյն։ յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն։ Եւ Սերովբէքն և Քերովբէքն հիացեալ զարմանային։ և պետութիւնք վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին ասելով։ Սուրբ, Սուրբ, Սուրբ։ Տէր զօրութեանց։

Ցինանց և Խաչի։

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր՝ խաչեցաւ վասն մեր։ թաղեցաւ և յարեաւ։ (խմբովն) հաւատարիմ եղև յաշխարհի և համբարձաւ փառաւք։ Եկայք ժողովուրդք։ զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նմա ասելով։ Սուրբ, Սուրբ, Սուրբ ես Տէր Աստուած մեր։

Դէ-բակէն, Եկեղեց-ոյ, Մ-ղկ-ալ-ալ և Հրեշտակաց։

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած, զքո հրեշտակաւորքն զեկեղեցի։ Հազարք (խմբովն) հազարաց հրեշտակաւորքն զեկեղեցի։ Հազարք (խմբովն) հազարաց հրեշտակք պաշպեսք կան առաջի քո։ Եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր, և ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն։ Զայնիւ խորհրդականաւ։ Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց։

Պահոց. ՆՆՋԵՑԵԼՈՅ։

Վասն յիշատակի հանգուցելոյն, ընկալ Հայր սուրբ մարդասէր զպատարագս։ Եւ (ԽՄԲՈՎԼԷՆ) համարեա զհոգիս նոցա, ի թիւ սրբոց քոց յարքայութեանդ երկնից։ Մանաւանդ՝ զի հաւատով մատուցցուք զպատարագս, հաշտեսցի Աստուածութիւնդ. և հանգուսցէ զհոգիս նոցա։

Մաղթանաց։

Սրբութիւն սրբոց մեծ ես և հաւուր։ Եւ զինուորութիւնք հրեշտակացն (ԽՄԲՈՎԼԷՆ) օրհնեն զքեզ և ասեն։ Փառք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն։

Մաղթական Ա-ա-ֆելոյ և Հայրապետաց։

Ամենակալ ես Տէր զօրութեանդ, որ թագաւորդ ես յաւիտենից, Որ նստիս յերկնից ի յերկինս և լոյս ծագեա յարարածս քո։ (ԽՄԲՈՎԼԷՆ)։ Որ խոնարհութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք։ Եւ սուրբ զանունդ քո փառաւորեմք. Տէր՝ որ պսակիչդ ես քոց սրբոց (այս անուն)։ Վասն այն սոքա են մեզ բարեխօս, Տէր ամենակալ, ի քում յարքայութեանդ։

Սրէ.—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրէ.—Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոց սեղանոյս Աստուծոյ ահիւ։ Մի խղճիւ և գայթակղութեամբ. մի նենգութեամբ, խորամանկութեամբ, մի պատրանօք և խաբէութեամբ։ Մի երկմտութեամբ և մի թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով։ Լցեալ սիրով, լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան, կացցուք յաղօթս առաջի

սրբոյ սեղանոյս Աստուծոյ։ և գտցուք զողորմութեան զշնորհս։ Ցաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ.—Կեցո՛ Տէր և ողորմեա։

Սրէ.—Օրհնեա՛ Տէր։

Քհ.—Շնորհօք և մարդա.։ Խաղաղութիւն։

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրէ.—Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ.—Աւաղի՛ քո Տէր։

Սրէ.—Ողջո՛յն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. և որք ո՛չ էք կարողք հաղորդիլ Աստուածային խորհրդոյս՝ առ դրունս ելէք և աղօթեցէք։

Դպ.—Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.
Որ լինն Աստուած ասա բազմեցաւ։
Խաղաղութեան ձայն հընչեցաւ,
Սուրբ սկզբունի հրաման տուաւ։
Եկեղեցիս մի անձն եղև,
Համբոյրքս յոդ լրման տուաւ։
Թշնամութիւնքն հեռացաւ.
Սէրն յընդհանուրքս սփռեցաւ։
Արդ՝ պաշտօնեայք բարձեալ զձայն,
Տո՛ւք օրհնութիւն ի մի բերան
Միասնական Աստուածութեան,
Որում սրովբէքն են երբասան։

Սրէ.—Ահիւ կացցո՛ւք, երկիւղիւ կացցո՛ւք, բարեաց կացցո՛ւք և նայեցարուք զգուշութեամբ։

Դպ.—Առ քեզ Աստուած։

Սրկ.—Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ։

Դպ.—Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան։

Սրկ.—Օրհնեա տէր։

Քհ.—Շնորհք՝ սէր և Աստուածային սրբա..

Դպ.—Ամէն. և ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Ըզգրուեսս զգրուեսս ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ։ Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր Աստուածային երկիւղիւ։

Սրկ.—Ունիմք առ քեզ՝ Տէր ամենակալ։

Սրկ.—Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ։

Դպ.—Արժան և իրաւ։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Եւ ընդ Սերովբէան և ընդ Քերով..

Դպ.—Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց։ Լի են երկինք և երկիր փառաւք քո։ Օրհնութիւն ի բարձունս՝ օրհնեալ որ եկիր և գալոյդ ես անուամբ Տեառն։ Ովսաննա ի բարձունս։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Առէք, կերէք։ այս է Մարմին իմ։ որ..

Դպ.—Ամէն։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Արբէք ի սմանէ ամենեքեան։ այս է...

Դպ.—Ամէն։ Հայր երկնաւոր՝ որ զՈրդիդ քո եռուբ ի մահ վասն մեր՝ պարտապան պարտեաց մերոց։ Հեղմամբ Արեան Նորա ազատեմք զքեզ՝ ողորմեա՛ քո բանաւոր հօտի։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Եւ զքոյս ի քոյոց՝ քեզ մատուցանեմք..

Դպ.—Յամենայնի օրհնեալ ես՝ Տէր՝ օրհնեմք զքեզ։ գովեմք զքեզ՝ գոհանամք զքէն։ աղաչեմք զքեզ՝ Տէր Աստուած մեր։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ.—Առաքի քո Տէր։ Որդի Աստուծոյ՝ որ պատարագեալ հօր ի հաշտութիւն հայց կենաց բաշխիս ի մեզ։ հեղմամբ արեան քո սուրբ՝ ազատեմք զքեզ՝ ողորմեա՛ Արեամբ քով փրկեալ հօտի։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Որպէս զի՝ եղիցի սա ամենեցուն..

Դպ.—Հոգի Աստուծոյ՝ որ զփառակցի քո զխորհուրդ՝ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր հեղմամբ Արեան Սորա՝ ազատեմք զքեզ՝ հանգո՛ զհոգիս մեր Նընջեցելոցն։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Քհ.—Ընդ որս և մեզ այց արասցես քա.·

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Քհ.—Աստուածածնին սրբոյ կուսին Մա ·

Դպ. – Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Սարկա–ագն յաջակողմն անլանոյն Յեռանամաշ սաաոոյէ։

Սրկ.—Առաքելոց սրբոց՝ մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց՝ և ամենայն հայրապետաց սրբոց՝ առաքելագործ եպիսկոպոսաց՝ երիցանց՝ ուղղափառ սարկաւագաց՝ և ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս՝ աղաչեմք։

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Ի Յարո–ՌԷան կէ–բակէս ղայս սաաս.

Սրկ.—Օրհնեալ՝ գովեալ և փառաւորեալ հրաշալի և աստուածազարդ Յարութեանն Քրիստոսի երկիրպագանեմք։

Դպ.—Փառք Յարութեան (կամ Տերութեան) քո Տէր։

Ի գոնէ սրբոցն ղայս սաաս.

Սրկ.—Սուրբ և Աստուածահաճոյ (մարգարէին՝ հայրապետին՝ առաքելոյն՝ մարտիրոսին այս անուն)՝ որոյ այսօր զյիշատակն կատարեցաք՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Սրկ.—Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն՝ և Գրիգորի Լուսաւորչին. Արիստակէսի՝ Վրթանէսի՝ Յուսկանն՝ Գրիգորիսի՝ Ներսիսի՝ Սահակայ՝ Դանիէլի և Խադայ. Մեսրոպայ վարդապետին՝ և Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն՝ Յոհաննու Որոտնեցւոյն՝ և Գրիգորի և Մովսիսի Տաթեւացեացն՝

և սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց՝ հովուաց և հովուապետացն Հայաստանեայց՝ եղիցի յիշատակ։

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Սրկ.—Միանձնացելոց սրբոց՝ առաքինասէր և աստուածասոյզ կրօնաւորացն՝ Պողոսի՝ Անտոնի՝ Պողայ՝ Մակարայ՝ Ռոտիրիոսի՝ Աբրայ Մարկոսի՝ Սրապիոնի՝ Նեղոսի՝ Արսէնի՝ Եւագրի՝ Պարսամայ՝ Յոհաննիսեանց և Սիմէոնեանց՝ սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց՝ և ամենայն սրբոց՝ հարց և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատ.·

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Սրկ.—Թագաւորաց հաւատացելոց սրբոց՝ Աբգարու՝ Կոստանդիանոսի՝ Տրդատայ և Թէոդոսի՝ և ամենայն սուրբ և բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց եղիցի յիշատակ։

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Սրկ.—Ընդհանո՛ւր ամենայն հաւատացելոց՝ արանց և կանանց՝ ծերոց և տղայոց՝ և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոց՝ եղիցի յիշատակ։

Դպ.—Ցիշեա՛ Տէր և ողորմեա։

Սրկ.—Օրհնեա՛ Տէր։

Քհ.—Եւս առաւել զԵպիսկոպոսապետն.

Սրկ.—Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ՝ Տէր Աստուած մեր՝ վասն սուրբ և անմահ պատարագիս՝ որ ի վերայ սրբոյ սեղանոյս՝ զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցէ՝ Սովաւ շնորհեա՛ զսէր՝ զհաստատութիւն և զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի՝ սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց՝ Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական Հայրապետին ամենայն Հայոց՝ Տեառնն (այս անուն) Սրբազնագոյն Կաթուղիկոսին և Քահանայն (այս անուն)

յիս որ զպատարագս մատուցանէ։ Եւ վասն զօրութեանց և յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց։ Եւս առաւել վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց, և շինողաց սրբոյ Եկեղեցւոյս, և որք ընդ հովանեաւ սոքին են հանգուցեալ։ Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, և շնորհ առաջիկայ ժողովրդեանս։ Հանգիստ հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն եղիցի յիշատակ։

Դպ.—Ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ.—Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստ.։

Դպ.—Ամէն. և ընդ հոգւոյդ քում։

Սրկ—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք, ևս առաւելապէս զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Վասն մատուցեալ սուրբ և Աստուածային անմահ Պատարագիս՝ որ ի վերայ սրբոյ Սեղանոյս, զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ երկնային և յիմանալի իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս Հոգւոյն սրբոյ. զՏէր աղաչ։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Ընկալ, կեցո՛ և ողորմեա. և պահեա զմեզ, Տէր, քոյին շնորհիւդ։

Դպ.—Կեցո՛ Տէր և ողորմեա։

Սրկ.—Զամենասրբուհի զԱստուածածին զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ.—Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք։

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ.—Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Դպ.—Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ.—Օրհնեա Տէր։

Սրկ.—Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն.։

Դպ.—Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ։

Սրկ—Օրհնեա՛ Տէր։

Քհ.—Զի քո է արքայութիւն. Խաղաղութիւն.։

Դպ.—Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ.—Առաջի քո Տէր։

Սրէ։ — Օրհնեա՛ Տէր։

Քհ։ — Քրիստոսիւ, Յիսուսիւ տերամբ։

Սրէ։ — Պռօսխումէ։

Քհ։ — Ի Սրբութիւն սրբոց։

Դպ։ — Միայն Սուրբ, միայն Տէր։ (Ի՛մբ՝ուվ՛ին) Յիսուս Քրիստոս։ ի փառս Աստուծոյ Հօր։ ամէն։

Սրէ։ — Օրհնեա՛ Տէր։

Քհ։ — Օրհնեալ Հայր սուրբ, Աստուած ճշմարիտ։

Դպ։ — Ամէն։

Սրէ։ — Օրհնեա՛ տէր։

Քհ։ — Օրհնեալ Որդիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ։

Դպ։ — Ամէն։

Սրէ։ — Օրհնեա՛ Տէր։

Քհ։ — Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ։

Դպ — Ամէն։

Սրէ։ — Օրհնեա՛ տէր։

Քհ։ — Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ։։

Դպ։ — Ամէն։ Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ։ (Ի՛մբ՝ուվ՛ին) Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն։ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Սրէ։ — Օրհնեա՛ տէր։

Քհ։ — Ի Սուրբ, ի Սուրբ, պատուական մարմ։։ (Պատ՝ուական մարմնոյ Քրիստոսի և սիրելի խաչին է վերայ նոցա։ և պատուական է սուրբ սեղանն Քրիստոսին շնորհաբերն և երբեմն «Տէր ողորմեա»։)

Սրէ։ — Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Դպ։ — Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Հ-ՆԴՑ. ՀՆՉ.

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութիւն։
Եւ հիւանդաց բժշկութիւն
Եւ նեղելոց ազատութիւն։
Կամ (ՆՇՉԵՑԵԼՈՑ ՍՐԲՈՅՆ-ՆԻ-Ն)

ՅՈՒ.

Քրիստոս յարեալ ի մեռելոց,
Լոյս ծագեցար արարածոց։
Սուրբ յարութեամբ քով կենարար
Յարն և զմեզ ի կեանս անմահ։

ԾՆՆ. ԵՒ ԱՃՆԻ.

Բանին կենաց բարձոյ եղեր,
ԶԱստուած մարմնով պարագրեցեր։
Առ Բանն Աստուած բարեխօս լեր
Ի փարձանաց զմեզ փրկէ։

ՏՃ. ՊՀՑ ՀԻ-ԷՒ.

Մեք ի յայն փայտն եմք յուսացեալ,
Զոր Տէր Յիսուս բեւեռեցաւ։
Եւ խոնարհեալ երկրպագեմք,
Աստուածընկալ սուրբ նշանիս։

Մշտ. Որի Աստուած յերկս.... 83

Սրկ.—Սուրբ և անմահ պատարագիս միջնորդութեամբ։

Դպ.—Ընկալ Տէր և ողորմեա։

Սրկ.—Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ՝ գպիրք՝ ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս։ Զի սմա վայելէն սաղմոսք՝ և օրհնութիւնք՝ ալէլուք և երգք հոգևորք։ Պաշտօնեայք՝ հանդերձ երգովք սաղմոս ասացէք և զՏէր յերկինս օրհնեցէք։

Դպ.—Օրհնեալ է Աստուած։ Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում՝ ալէլուիա։

Զմարմին իւր տայ մեզ կերակուր՝ և սուրբ զԱրիւն իւր ցողէ ի մեզ՝ ալէլուիա։

Մատիք առ Տէր և առէք զլոյս՝ ալէլուիա։

Ճաշակեցէք և տեսէք՝ զի քաղցր է Տէր՝ ալէլուիա։

Օրհնեցէք զՏէր յերկինս՝ ալէլուիա։

Օրհնեցէք զնա ի բարձունս՝ ալէլուիա։

Օրհնեցէք զնա՝ ամենայն հրեշտակք նորա՝ ալէլուիա։

Օրհնեցէք զնա՝ ամենայն զօրութիւնք նորա՝ ալէ...

Բացէն զվարագոյրն։

Սրկ.—Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք։

Եկիր էն արքանաւորք հաղորդո-ընեան՝ ասասցէ Սարկաւագն։

Սրկ.—Հաւատամք Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ՝ հաւատամք Որդիդ Սուրբ Աստուած ճշմարիտ՝ հաւատամք Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ՝ խոստովանիմք և հաւատամք՝ զի Սա է ճշմարիտ՝ կենդանի և կենդանարար պատուական Մարմին և Արիւն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

Դպ.—Որ կազմեցեր 108

Այսօր անճառ 13

Ով անմահ հայր 108

Յետ հաղորդելոյ զարքանաւորն։

Դպ.—Աստուած մեր և Տէր մեր՝ երևեցաւ մեզ՝ օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Քհ.—Կեցո՛ Տէր՝ զժողովուրդս քո՝ և օրհնեա՝..

Դարձեալ ծանձկեցեն զվարագոյրն։

Դպ.—Լցայք ի բարութեանց քոյ՝ Տէր՝ ճաշակելով զՄարմին քո և զԱրիւն՝ փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ։ Որ հանապազ կերակրես զմեզ՝ առաքեա՛ ի մեզ զհոգևոր քո զօրհնութիւն՝ փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ։

Սրկ.—Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դպ.—Տէր ողորմեա։

Սրկ.—Եւ ևս հաւատով ընկալեալք յԱստուածային՝ սուրբ՝ երկնային՝ անմահ՝ անարատ և անապական Խորհրդոյս՝ զՏեառնէ գոհացարուք։

Դպ.—Գոհանամք զքէն՝ Տէր՝ որ կերակրեցեր զմեզ յանմահական Սեղանոյ քո։ Բաշխելով զՄարմինդ և զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի՝ և կեանք անձանց մերոց։

Բացէն զվարագոյրն։

Սրկ.—Օրհնեա՛ տէր։

Քհ.—Որ օրհնես զայնոսիկ՝ ոյք։

Դպ.— Օրհնեալ է Աստուած։

Քհ.—Կեցո՛ զժողովուրդս քո··

Դպ.—Ամէն։

Քհ.—Սրբեա՛ զսոսա··

Դպ. Ամէն։

Քհ.—Զխաղաղութիւն··

Դպ.—Ամէն։

Քհ.—Զի ամենայն տուրք·· (էջեր է ոչնչ.)

Դպ.— Ամէն. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան (կրկնէ՛) և եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան։

Քհ.—Կատարումն օրինաց և մարգարէից··

Սրկ.—Օրթի։

Քհ.—Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ.— Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ.—Երկիւղածութեամբ լուարուք։

Քհ.—Սրբոյ Աւետարանիս· որ ըստ.

Դպ.— Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սրկ.—Պռօսխումէ։

Դպ.—Ասէ Աստուած։

Յետ ընթերցման ս. Ա.-Եւաքարանի.

Սրկ.—Սուրբ Խաչիս աղաչեսցուք զՏէր· զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ· ամենակալ Տէր Աստուած մեր· կեցո՛ և ողորմեա։

Քհ.—Պահպանիչ և յոյս հաւատ··

Սրկ.—Օրհնեցից զՏէր յամենայն ժամ· յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

Քհ.—Օրհնալք եղերուք··

ԾՐԱԳԻՐ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԳԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ·

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ·

— ԵՐԵՔ ԾՆՆԴԵԱՆ ՏԷՐՆ ՀԵՂՈՅ ՅԻՍՈՒՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ·

ԳԶ· Այսօր ասն է· 84

ԿԱՆԱՆ ԱՌՈՒՈՅԾԱՅԱՅՊԱՆՈՒԵԱՆ·

ԴԿ·— Խարտուրդ մեծ և սքանչելի· . . . 85

ԿԱՆԱՆ ՀԵԾԻ ՀԵՆԳԼԵՍՄԻ·

ԱԿ·—Ա· Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի թոզութիւն մեզաց մերոյ·

Բ· Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտաց և պատուիրէր զայս ասելով·

Գ· Մի ոմն ի ձէնջ, ասէ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ և որոշի յաշակերտացդ·

Դ· Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս, հարցանել թէ ո՞վ էցէ·

Է· Բանին զոր ասաց Յիսուս, տրամեցոյց զիւր զաշակերտսն և խռովեցան ամենեքեան·

Կանոն Դեղի Ո-ԸԲԱԼՈ-.

ԲՁ.—ա. Ի գիշերին յորում մատնէր Փրկիչն մեր ի մահ խաչին, եւ ի լեառն Զիթենեաց՝ աղօթելով զայս ասէր. Հայր, անցո՛ յինէն զբաժակս։

բ. Իսկ անօրէն աշակերտին թողեալ զգութ սիրոյ Նորա՝ փութայր առ Քահանայապետն և ասէր. Ինձ զի՞նչ կամիք տալ, զի մատնեցից զվարդապետն։

գ. Ժողովեալ հրէիցն՝ կշռեցին արծաթ բազում։ Առեալ տարան առ Պիղատոս ասեն ի խաչ հան, ի խաչ, զի հայհոյիչ է օրինաց։

Կանոն Ա. Զատիկ.

ԱՁ.—Յարեաւ Քրիստոս.	. . . .	119
ԺԴ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց	. . .	65

Կանոն Վէրացման Ա Խաչի.

ԲԿ.—Խաչի քո Քրիստոս.	. . . .	61

Երգ՝ յաղ. Ա. Պապարագի.

Սուրբ Աստուած	. . . .	119
Փառք քեզ տէր Աստուած մեր	. .	121
Իսկ մեք փառաւորեսցուք	. .	122
Յամենայնի	. . . . .	129
Ցիշեա՛ տէր	. . . . .	
Հայր մեր	. . . . .	133
Միայն սուրբ	. . . . .	134
Ամէն Հայր սուրբ	. . . . .	134

Տէր ողորմեա—Արի Աստուած	. .	83
Աստուած մեր և Տէր մեր	. .	137
Եղիցի անուն տեառն	. . .	138

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Կանոն Ղազարու յարութեան.

ԱՁ.—ա. Կենդանութեանց բաշխող Քրիստոս
ի Բեթանիա եկաւորեալ այսօր
Բարեկամին Ղազարու
խնդրէ զկենդանութիւն։

բ. Ցնորինաբար արտասուելով
ընդ Մարիամու և ընդ Մարթայի
Ողբակցէր և որպէս մարդ հարցանէր՝
Ո՞ւր եդիք զՂազարոս։

գ. Եւ որպէս զԱստուած բարբառով
Յարուցանէ ի մեռելոց զչորեքօրեայն
Եւ զուգընթաց ձայնին մեռեալն
Եկն արտաքս անապական։

Կանոն Դեղի Երէ+ՂԷՄՐ.

ԲԿ.—ա. Իմաստուն կուսանքն
Պատրաստեալ իւղ լապտերաց՝
Ելին ընդ առաջ
Երկնաւոր փեսային։

բ. Իսկ յիմարաց կուսիցն
Ուշացեալ ի յիւղոյն՝

Անպատրաստ գտան գալստեան փեսային
Շիջեալ լապտերօք։

գ. Վասն որոյ և մեք
Պատրաստեսցուք իւղ հոգևոր
Չի մոցուք ի յառագաստ անմահ փեսային
Վառեալ լապտերօք։

Կանոն Դեղի Զորէ։ղաքեանի։

ԳԶ.—ա. Նոր ոքանչելիք տեսանեմք այսօր յաշխարհի ի մէջ
Հողեղինաց։ արարածք Արարչին սպանութեան խորհին զխորհուրդ։

բ. Որ բանիւն իւրով զերկինս և զերկիրս հաստատեայ յոչընչէ գոյացուցեալ վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ։

գ. Ո՞վ Յուդաս արտասուելի։ Երկնաւոր Վարդապետին սպանութեան խորհի զխորհուրդ։ մատնելով անօրինաց զի խաչեսցի ի մէջ երկրի։

Կանոն Դեղի Ութեանն։

ԲԶ.—ա. Արծաթասիրութեամբն մոլեալ Յուդա զիւր զմեծ
Զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր։

բ. Ընդ որում ես համբուրեցից ասէ։ զնա կալարուք։
Ո՞վ համբոյր նենգութեան նշան և առիթ մահու։

գ. Երկացաւ յինքենէ զԱստուածային Սուրբ Հոգին
և զգեցաւ զսատանայ որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ։

Կանոն Դեղի Շաբաթոյ։

ԴԶ.—ա. Յովսէփ ճշմարիտ և արդար հայցէր ի Պիղատոսէ
զհասարակաց զպարգևատուն։ որ տուաւ մեզ զանձ անկողոպտելի։

բ. Պատեալ ուրբ կտաւովք զմարմինն Տէրունական
զարկողն զոյս որպէս զօթոյ որ զգեցոյց մեզ ըզգեստ անկողոպտելի։

գ. Եդաւ ի նորափոր ի վիմի և մատանեաւ կնքեցաւ
որ զնախատեղծն կենդանացոյց և զմարդկան կապանս մահու ելոյծ։

Կանոն Դեղի Զատկի։

ԲԿ.—ա. Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանանցն ի
գերեզմանն ասելով։ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

բ. Եւ առ նոսա ասէր հրեշտակն։ զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս։ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

գ. Փութացարուք ո՞վ սուրբ կանայք և պատմեցէք
աշակերտացն ասելով։ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Կանոն Հոգեգալստեան։

ԲԿ.—ա. Այսօր երկնայինքն ուրախացան
Ընդ երկրաւորացս նորոգումն,
Քանզի նորոգոյն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն։

Որով նորոգեցան գասք առաքելոց։

Բ. Այսօր հողանիւթեայ բնութիւն ցնծայ
ընդ հօր հաշտութեան,
Քանզի որ եբարձ զհոգին ի մարդկանէ զմարմին
եղելոց։
Դարձեալ վերստին զնոյն պարգևէ։

Գ. Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ
Զգալուստ Սուրբ Հոգւոյն,
Որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս և գե-
բապայծառս
Երգեն ընդ սրովբէս զերեքսրբենին։

Շարական Ս. Աստուածածնի.

ԲՁ.—ա. Անկանիմք առաջի քո Աստուածածնին և աղաչեմք
զանարատ զԿոյսդ։

Բ. Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ ըզ-
Միածին Որդիդ։

Գ. Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտան-
գից մերոց։

Կանոն Ս. Աստուածածնի.

ԱԿ. Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք և բարձր աշ-
տարակք, ոսկեղէն բաժակք և ժիր մատռուակք Հա-
յաստանեայցս Հարք Հոգևորք Բարդուղիմէոս և Թա-
դէոս, բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց։

Կանոն Ս. Լուսաւորչի (Տաղն է վերապոլ.)

ԴԿ.—ա. Այսօր զիմանալի լուսոյն ծագողն
ի խաւարի նստելոցս,

ԶԳրիգորիոս Սուրբ Հայրապետն
Եկայք վերապատուեսցուք։

Բ. Այսօր զանապական Հոգւոյն պարգևս
Բաշխող որդւոց Թորգոմայ
Յորդիս լուսոյ նովաւ ծնեալք,
Եկայք վերապատուեսցուք։

Գ. Այսօր զԱստուածային բանին պատմող
Ի Հայաստան աշխարհի
Աշակերտեալ նմա մանկունք
Եկայք վերապատուեսցուք։

Դ. Այսօր երգէ եկեղեցի որդովք իւրովք
Ընդ հրեշտակս
Յիշատակի Լուսաւորչին
Փառք ի բարձունս Աստուծոյ։

Կանոն Շողակաղի.

ԴԿ.—ա. Լուսիածինն ի հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա
Զայնք հնչեցին
Սանդարամետք անդնդոց։

Բ. Տեսեալ զլոյս
Մեծ Հայրապետին Գրիգորի
Պատմէր ցնծութեամբ
Հաւատացեալ արքային։

Գ. Եկայք շինեսցուք
Սուրբ զիսորանն լուսոյ

Բանդի ի սմա ծագեաց մեղ լոյս
Ի Հայաստան աշխարհի։

Եղբեց. Ս. Պապարագի.

Փառաւորեալ և օրհնեալ . . . 48
Թագաւոր երկնաւոր . . . 115
Բարեխօսութեամբ վերին քո . . 118
Հաւատամք ի մի Աստուած . . 121
Մարմին տէրունական . . 124
Քրիստոս ի մէջ մեր յայտ. . 127
Սուրբ. Սուրբ 128
Գոհանամք զքէն 137

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆՄՈՒՆՔ.

Գկ. Փառք ի բարձունս (ՠ-ՠՉԻՆ ԿԷՈ) . . 45

Տաղ Զբօրհնէաց.

Դզ. Ո՞վ զարմանալի 86
Դզ. Այսօր ձայնն Հայրական . . . 86

Տաղ Տէրունական.

Դկ.—ՠ. Քրիստոս փառաց թագաւոր,
Այսօր եկեալ յընծայումն
Կատարելով Նա զօրէնս
Բառանձրեայ գալստեամբն։

Բ. Զոր մարգարէն Եսայի
Յառաջագոյն գուշակեաց
Երուսաղէմ քաղաքին
Սիմէօնի ծերունւոյն։

Կանոն Ծաղկազարդի։

Դզ.—ՠ. Յորժամ եկն Յիսուս Յերուսաղէմ ի քաղաքն,
ընդ առաջ ելին ծերք ոստովք ձիթենեօք և զԱստուածորդին փառաւորէին։

Բ. Ի լեռնէ Ձիթենեաց տարածանէին մանկունք ըզ-
հանդերձս իւրեանց, և ոստս ի ծառոց բերեալ մա-
տուցանէին, Աստուածորդւոյն՝ սուրբ թագաւորին։

Գ. Ոստովք և տերևեալ ձիթենեօք, երբայեցւոց
մանկունքն օրհնէին, ուրախ լեր Երուսաղէմ քա-
ղաք և ցնծա՛ Սիօն՝ մայր եկեղեցի։

Կանոն Դեղի Ո-ԲԲՈՐՈ։

Դզ.—ՠ. Ո՞վ սքանչելի և տեսիլ ահաւոր, զԱրարիչն երկնի
և երկրի այսօր տեսանի ի խաչին։

Բ. Տեսեալ զՏէրն ի խաչին խաւարեցաւ Արեգակն
և վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր։

Գ. Անարգաբար խաչեցաւ Տէրն ի մէջ անօրինաց.
զի լցցի գիրն որ ասէր, թէ ընդ անօրէնս համա-
րեցաւ։

Կանոն Դեղի Շաբաթի։

Բզ Պարգևատուն ամենեցուն
Այսօր խնդրի պարգևս ի Պիղատոսէ

Եւ արկողն զլոյս որպէս զօթոյ
Հաւանի պատիլ ի Յովսէփայ։

Կանոն Հայրբարձման Քրիստոսի։

Դշ.—ա. Համբարձաւ Տէրն մեր յերկինս՝
Ասելով աշակերտացն.
Նստարուք ի քաղաքիդ Յերուսաղէմ՝
Մինչև զգենուցուք զզօրութիւն ի բարձանց։

Բ. Միաբանեալ սուրբ առաքեալքն
Միախորհ և միակրօն
Միաբան նստէին ի սուրբ Վերնատանն
Եւ ակն ունէին գալստեան Սուրբ Հոգւոյն։

Գ. Յանկարծակի եհաս
Ի նմանութիւն լուսոյ փայլման,
Եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ Առաքեալսն
Մինչդեռ նստէին ի սուրբ Վերնատան։

Կանոն Հոգեգալստեան։

Դշ.—ա. Առաքելոյ աղաւնոյ
Իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց
Ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց զանկի-
ղելի զաշակերտսն
Մինչդեռ նստէին ի Սուրբ Վերնատան։

Բ. Ոնոիւթական աղաւնի
Անքննելի որ քննէ զիտրս Աստուծոյ
Զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և զմիւսանգամ գալուստն
Զոր քարոզեցին համագոյական։

Գ. Օրհնութիւն ի բարձունս
Ելոյին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ
Որով Առաքեալքն արբեցան յանմահական բաժակաւն
Եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։

Կանոն Վերացման Խաչի։

Բշ.—ա. Ոպաւինեցաք ի խաչ քո
Արարիչ յաւիտենից,
Որ ետուր մեզ պահպան
Յաղթող ընդդէմ թշնամւոյն.
Աղաչեմք սովաւ փրկիչ
Պահպանեա զանձինս մեր։

Բ. Բարձրեալ թագաւոր
Որ վասն մեր ելեր ի խաչ,
Եւ բարձեր սովաւ զյանցանս
Նախաստեղծին Ադամայ։ Աղաչեմք.

Գ. Գլուխ սուրբ հաւատոյ
Եւ փայտ կենաց մարդկան յայտնեալ
Զոր տեսեալ այսոյն պըղծոյ
Կործանեցաւ ոնկանգնելի։ Աղաչեմք.

Կանոն Սրբոյ Ղազարոսի։

Դշ.—Որ զգիտութիւն քո զերկնային և զհոգևոր զիմաստութիւն առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռն սրբոյ թարգմանչաց, աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած։

Կանոն Սրբոյն Սանդիպոս։

Դկ։ — ա։ Քև պարծի այսօր սուրբ եկեղեցի
Ո՛վ վկայուհի սուրբ Սանդուխտ,
Որ զՀայրականն քո թողեր զպաշտօն
Վասն Քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ։

Բ։ Աշակերտեցար առաքելոյն Թադէի
Եւ ի հաւատս ճշմարիտ հաստատեցար,
Ո՛չ խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնս
Արժանի եղեր վերանալ առ Հայր։

Կանոն Սրբոյն Իոահաչայ Հայոց Հայրապետի։

Դկ։ — ա։ Որ յարմատոց հարցըն սրբոց մեզ գաւազան
բղխեցեր, ըզխահակ սուրբ Հայրապետ հովուել
զհօտ քո Քրիստոս։

Բ։ Որ զխաւարն անգիտութեան Հայաստանեայցըս
լուծեր, զիմաստութեան ծագեալ զլոյս սովաւ
որդւոց Թորգոմայ։

Գ։ Որ զհանդերձեալ խորհուրդ քո Տէր, տեսլեամբ
Սրբոյն Ծանուցեր, յիշատակի սորա ընկալ ըզտօ-
նողաց աղաչանս։

Կանոն Ս. Ղևոնդեանց։

Դզ։ — ա։ Որք եկեալ հասեալ լինէին սեւագունդ զօրքն
Պարսից, զի յափշտակեսցեն զառաջնորդսըն Հա-
յաստանեայց. ո՜վ սուրբ Ղևոնդեանք։

Բ։ Որք չուեալ գնացեալ լինէին ի պալատն անօ-
րէն Թագաւորին, զի վկայեսցեն ճշմարիտ Սուրբ
Երրորդութեան։

Կանոն Ս. Ղևոնդեանց։

Դկ։ Լուսաւորիչն ամենեցուն
Ղևոնդիէ սուրբ վարդապետն,
Խոհական մեծ խորհրդով
Խրատեալ լցոյց զաշակերտեալսն.
Ծաւալեալ զլոյս գիտութեան
Յոգիս արանց կատարելոց,
Կամաւոր յօժարութեամբ
Կատարեցան սիրով փրկչին։

Կանոն Սուրբ Լուսաւորչի (մոտն է վերոպն։)

Դկ։ — ա։ Հայաստանեայց Հայր հաւատոյ հեղինակ ընտ-
րեալ
Ճգնողական վարուք, Տէր Գրիգորիոս,
Ի կոճեղս ոլորեալ, հոսեալ յարենէ սրունք սրբաս-
նեալ մարմնոյդ
Հաստատելով զմեզ ի վէմն հաւատոյ։

Բ։ Պարակից հոգեղինաց երկնային զօրացն
Սրբանեալ զդեստուք, Տէր Գրիգորիոս,
Ի խորվիրապին իջեր ի աղմին ի մէջ դառնաշունչ
օձիցն
Զի փրկեսցես զմեզ ի չար վիշապէն։

Գ։ Տանն Աստուծոյ տեսանող բարի
Արժանացեալ շնորհիւ, Տէր Գրիգորիոս,

Կործանիչ բազնեաց, քակտիչ մեհենեաց զօրութեամբ խաչին
Քահանայապետ ընտրեալ Աստուածային յայտնութեամբն։

Կանոն Շողակաթին։

Գշ.— Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով և զարդարեաց զամուրսս քո, սքանչելի փառօքն իւրովք։

ՉՈՐՐՈՐԴ ԲԺՇԿՆՄՈՒՆՔ։

Կանոն Ս. Զատկի։

Ա.Զ.— Այսօր յարեաւ ի մեռելոց

Կանոն Վարդավառի։

Դկ.— Սաղ. — ա. Օրհնեցէք մանկունք ընդ երկնայնոցն՝ զՀայրն երկնաւոր, որ մարմնացեալ բանին վկայեաց յերկնից, այսօր ի Թափոր լերինն։

բ. Գովեցէք ընդ սերովբէսն զՈրդին Միածին, որ փայլեաց մարմնով զլոյս Աստուածութեանն. այսօր ի Թափոր լերինն։

գ. Բարեբանեցէք ընդ քերովբէսն զՀոգին Ճշմարիտ, որ լուսափայլ ամպով Էակցին հովանացեալ, այսօր ի Թափոր լերինն։

Կանոն Վերացման Ս. Խաչի։

Դշ.— ա. Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

բ. Քանզի ի սմա բարձրացար Աստուած, և ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ. Սա պահեսցէ.

գ. Եւ զքո միւսանգամ զգալուստդ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա պահեսցէ։

Տաղ Խաչի։

ա. Հաւիկ մի պայծառ տեսի աննման
Ի յայն խաչափայտին վերայ աննման.
Աննմանիդ ո՞վ աննման դու նման։

բ. Զթևս արծաթափայլս ունէիր աննման
Արեգական շողոյն նման աննման։

գ. Զաչերս արտասուօք լցնոյր աննման
Առաւօտեան ցողոյն նման աննման։

դ. Զայնիկս ողորմուկ յածէր աննման
Գաբրիելեան փողոյն նման աննման։

Կանոն Ս. Էջմածնի։

Ա.Կ.— Որ երկրաշարժքդ սուրբ Լուսաւորչաց տան քս Թորգոմայ հաստատեցեր զեկեղեցի Հայաստանեայց զլոյս իմաստից ի մեզ ծագելով. մարթանօք սուրբ Քրիստոս խընայեա ի մեզ։

Շաբաթն Աղքատաց Վարդանանց։

Դէ։ — Նորահրաշ պլսակաւոր և զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու։
Վարդա՜ն քաջ նահատակ որ վանեցեր ըղձշնամին,
Վարդագո՛յն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի։

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհակա՜ն իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս,
Խորէ՜ն խորհրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վրկայ եղեալ հեղմամբ արեան պլսակեցաւ։

Բեննակա՜ն լուսով լցեալ արիացեալ քաջքն Արտակ,
Թաթաւեա՜լ ի կարմրութիւն բոսորային բըղխեալ աղբերն։
Ըզփրրկականն ըմպեալ դբաժակ և մկրտեալ արեամբն իւրով,
Դասակցեա՜լ ընդ անմարմնոց Երրորդութեան երգել ըզփառս։

Սրբափա՜յլ զգեստուք պճնեալք ի յերկնաւոր հանդիսադրին,
Երրորդութեամբքն զօրացեալ վանեալ զամուրս բանսարկուին։
Հրմայեա՜ն հօր ընծայեալ որդւոյ գողով չարչարակից,
Հոգւովն յաղթեալ պատերազմին և չարասէր թագաւորին։

Կանոն Աղքատաց Հռիփսիմեանց։

Դէ։—ա։ Անձինք նուիրեալքք սիրոյն Քրիստոսի,
Երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք,
Ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ
Մայր Սիօն դատերօքն իւրովք։

Բ։ Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց,
Եւ տըկար կանայքն վառեցան զինու,
Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք,
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր։

Գ։ Մերժեցին ըզկարիս մարմնական կենցաղոյս,
Չի ծանեան եթէ երազ է և սուտ պատուճանք,
Ո՛չ հեշտացան ի գըրգանս փափկութեան, իմացան
Եթէ սնոտի է անցաւոր մեծութիւն։

Դ։ Վասըն ձեր երանեալ նահատակք զօրք հրեշտակաց,
Անմարմին զբարթնոցն ի յերկնից ի յերկիր հեղան։
Եւ մարդիկ խառնեցան ի գունդըս զինուորաց
Քրիստոսի Աստուծոյ։

Կանոն Ս. Գրիգորի Լուսաւորչին։

Դզ։—ա։ Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ
յառաջ գիտութեամբ ըզփրկութիւն Հայաստանեայց
ըսկզբնաւորեալ ի պարթևական մեղապարտ ազգէն
Լուսաւորիչ մեզ շնորհեցեր։ վասն որոյ բարեխո-
սութեամբ սորա փրկիչ կեցո ըզմեզ այժմ և ի քո
յահաւոր գալըստեանդ։

Բ։ Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր
զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ և երեք
հընգօք ամօք ի մէջ թունաւորացըն բնակեր ան-
դընդային տանջանօք ի վիրապի։ վասն որոյ։

Գ։ Հրաշագործ քո բանիւդ և մեծ ողորմութեամբ
ելեալ բըժըշկեր զհարուածեալսն ի դիւաբաշխ սատ-
տիցն երկրպագուս առնելով զամենեսեան սուրբ
Երրորդութեանդ։ վասն որոյ։

Կանոն Աղքատաց և Ընտանեաց Ս. Լուսաւորչի։

Դկ —ա։ Աստուածային հաւատոյ հարցըն սրբոց դաւա-
նումն ծագեցաւ քեզ ընդհանուր լոյս Հայաստա-

Նեայց սուրբ Ռըստակէս· անդադար բարեխօսեա՛
վասն անձանց մերոյ։

Է· Բանաւոր հօտին Քրիստոսի ընտրեալ հովիւ քաջ,
ի Հօրէն լուսոյ բըղխեալ շառաւիղ բարի տէր Վըր-
թանէս· անդադար բարե·

Գ· Գովեալդ ի վկայս Հօրըն մեծի համանման, քա-
ջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկեր տէր
սուրբ Յուսիկ· բարեխօսեա·

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ·

Կանոն Ա· Յարութեան։

Դկ·—ա· Փառըք Քրիստոսի ամենազօր յարութեան։

Է· Քրիստոսի ամենազօր յարութեան երկրրպագեն
քերովբէք, և վեցթևեան սերովբէքն հոգևորա-
կան հնչմամբ երգեն ասելով· Փառըք Քրիստ·

Գ· Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանային սուրբ
կանայքն տեսանելով ըզհրեշտակն արեգակնակերպ
փայլմամբ ի վերայ վիմին գոչէր ասելով· Փառըք·

Դ· Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն, և
վերստին նորոգմամբ յաւիտենական կենացն եզաք
ժառանգորդք· Փառըք Քրիստոսի·

Շարական Ա· Վարդանանց։

Դկ· - Լակա՛ն բարւոյն գիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ,
Տարագնաց ելիւք յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն·

Տաճա՛ռ զարմանալի տաճար եղեալ Երրորդութեանն,
Տէրունեա՛ն սուրբ խորհրդոյն տուն և տեղի արժանա-
ցեալ։

Սատացեա՛լ ըզհաւատոյ վահան յուսոյն զրահիւք ծած-
կեալ,
Ըզփըրկականըն սաղաւարտ ի գլուխ եդեալ զնրշան խա-
չին

Վահա՛ն վեհ երևեալ որ մանկութեամբ նահատակեալ՝,
Խաչելո՛ն վրկայ եղեալ պսակեցաւ արեամբն իւրով։

Ի հոտ անո՛յշ ողջակիզեալ մատուցանէր զինքըն նըւէր,
Բանաւո՛ր պատարագաւ ընծայելով Հօր ի յերկինս·
Արսէ՛նըն ցանկալի արդարութեամբըն ճոխացեալ,
Իմաստութեամբ պայծառացեալ յեօթնարփեա՛ն շնոր-
հաց Հոգւոյն։

Երկոքո՛ւմբք հարազատովք ընտրելագոյն նահատակօք,
Յառաջեա՛լ յամենեցունց գլուխ և աւարտ մարտիրոսաց·
Նախաշաւիղ գոլով բարեաց յառաջադէմըն Գարեգին,
Ընկալեա՛լ ըզբարբիոնըն յաղթանակ նահատակացն։

Բամկակա՛ն խումբ հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից
Որք ընդ նոսին նահատակեալ արիաբար պատերազմաւ·
Եւ հեգի՛ն զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ,
Ընդ նոսի՛ն պըսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն։

Գոհութեա՛մբ փառաբանութիւն երրորդութեանըն նըւա-
գեմք,
Բազմութեա՛մբ պըսակելոցս ըզմեօք մածեալ առաքի-
նեացս·

Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան·
Ունելո՛վ միշտ բարեխօս ըզծգնութիւն մարտի սոցա։

Կանոն Սրբոյն Հռիփսիմեանց։

Գկ.—ա. Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի,
Ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս.
Եղեր օրինակ սրբութեան կուսանաց,
Վարդապետութիւն արանց արդարոց։

Բ. Ճըշմարիտ Որդւոյն Քրիստոսի շառաւիղք,
Եւ ողկոյզք ճըմլելք երկնաւոր մշակին։
Կոխեցայք ճրգնութութեամբ ի հընձանըս ձեր,
Զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն։

Գ. Ով ըղձաստութեան իմաստուն կուսանացն,
Որոց ոչ յաղթեաց հեղգութիւն և քուն.
Այլ արթունք և պատրաստք մնալով երկնաւոր
Հարսանեացն, զի մըտցեն ի յառագաստ անմահ փեսային։

Դ. Փառայ ի փառս բարձրացեալ պարծին ի պատիւ
և ի փառս
Երեսուն և հօթեանքն քանզի այս է թիւ երանեալ
Կուսանացն, որք անթառամ պսակեցան յանվախճան յաւիտեան։

Շաբաթն Տէրտէրայ Խաչ-օրն։

Դզ.—ա. Որ գերագոյն քան ըզբնութիւնս հրաշագործեցեր Որդի Աստուծոյ առ թագաւորըն Հայաստանեայց գաւազանաւ քո բարկութեան զյիմարութիւն յիմաստ փոխարկեալ. վասնորոյ մնկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն ըզքեզ Տէր։

Բ. Որ համանրման Բաբելացւոցըն բռնաւորին ի յանբանից փոխեալ կերպարան յանբանական բռնութենէն նուաճելով զարքայն մեծ Տրդատ. վասն որոյ մանկ.

Գ. Որ ի ձեռըն մաղթանաց սրբոյն Գրիգորի ի մարդկային բնութիւն դարձուցեր յանասնեղէն ի բնութենէն նորաստեղծեալ զարքայն մեծ Տրդատ. վասնորոյ մանկ.

Կանոն Ա. Լուսաւորչի։

Գկ.—ա. Լերինք ամենայն այսօր ցընծացէք ընդ մեծապայծառ փառսըն Սեպուհւոյ գերազանց լերինն, քանզի ի նմա բնակեցաւ սուրբըն Գրիգորիոս, սիւն լուսոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, որով ցընծան ի փառս վերնոյն Սիովնի։

Բ. Խորհուրդ խաչելոյն գերահրաշ տեղւոյն Գողգոթայ ծածկապէս ի սմին լերին տեսանի, զէնն արքայական սպանմանն գործի կենաց, արքային ի կենաց գործիս նուիրեալ, որով փրկեսցէ ըզմեզ յաւիտենից մահուանէն։

Գ. Հովուին հըսկողի ճըշմարիտ և քաջ հովուին պատկերի հովիւքն եղեն հեռաւոր, զոր ամիսոփեցին զմարմինըն մաքուր մերձ ի յայրըն Մանեայ մեզ դեղ ախտից մաքրութեան, որով սրբիմըք հոգւով ի թունից վիշապին։

ՁԱՐԱԿԱՆՔ ՀԱՆԴԱՍԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ՝

ՀՆԳ. Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն, որ յարութիւնդ ես ձայնիւ յաւիտենից ընդունելոց. Թագաւոր և իշխան վերօրհնեմք ըզքեզ։

Ի միւսանգամ գալստեանդն քո Քրիստոս փառաց Թագաւոր, ի ձայն փողոյ նորոգին հոգիք ընդունելոցն՝ և յառնեն ի մեռելոց անապական մարմնով։

Վասնորոյ և մեք ըզքեզ աղաչեմք Հայր երկնաւոր, դասաւորեա՛ ըզնընդունելեալսն մեր ի վերինդ քո երուսաղէմ, ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս։

 Տ. Յանճառ փառաց խոնարհեցար ի մեր բընութիւնս, բանդ Աստուած և մարմնացար ի Սրբոյ կուսէն։

Եւ ծնար ի Սուրբ կուսէ՝ անապական մարմնով, ըզքեզ անդադար բարեբանեալ, մեծացուցանեմք։

Այսօր զեկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան, միաբանութեամբ ամենեքեան, մեծացուցանեմք։

ԵՂԷ. Սուրբ խաչն օգնական հաւատացելոց, կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։

Արարիչն Աստուած բարձրացաւ ի խաչին. և զմե-

ռեալս մեղօք փայտին ճաշակմամբն· ի սմա նորոգեալ կենդանացոյց։

Փառք Հօր· Ի միւսանգամ գալստեան Աստուածորդւոյն, սուրբ խաչն երևի և լուսաւորէ, զի նա է յոյս հաւատացելոց։

Սղմ. Ալէ· ալէ· Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա՛ ինձ Տէր զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձրն իմ զի խռովեցան ոսկերք իմ։

Ա-էպոքան Յ-վհ· և ապա՝

Փառաց ի փառս· Քահանայք և ժողովուրդք· 36

Երգ· Նստեալ կանանցն 33

ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄ·

Հնգ. Զեռքք քո արարին և ստեղծին զիս ի հողոյ, ի յօրհնել ըզքեզ Աստուած յաւիտեան։

Իսկ պատրանօք բանսարկուին խափանեցայ յանճառ լուսոյն· և դարձայ անդրէն ի հող յորմէ ստեղծայ։

Մխիթարիչ Սուրբ Հոգի՝ լուսաւորեա՛ զմեր ընկալեցեալսն և հանգո զհոգիս նոցա ընդ սուրբսն քո։

Տ. Ուրախ լեր Աստուածածին, տաճար անխախտելի, ըզքեզ մեծացուցանեմք։

Ցըղացար անարատաբար, և զԱստուած վայելչապէս ծընար, ուրախ լեր Աստ.

Երգէ մարգարէն սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ· և դուռն երկնային· ուրախ·

Էլէ. Սեղան քո Տէր զօրութեանց, հաւատով կանգնեցաւ ի խորանի քում, եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։

Վէմ պատուական, ի խորանի քում հիմնեցաւ այսօր· եկայք·

Փառք Հօր· Ի սմա մատուցաւ ճշմարիտ պատարագ և զենումն անապական· եկայք·

Սղմ. Ալէ· ալէ· Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս, և ոչ ուրախ տարարեր զթշնամին իմ յիս։ Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ՝ և բժշկեցեր զիս, Տէր հաներ ի դժոխոց։

Ա-էպ· Ղ-կ· և ապա՝

Պարակցեալ անմարմնականքն· Զհաւորեալ նշան· 34

Երգ· Թագաւոր փառաց Քրիստոս· . . 38

ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ։

Հնգ. Հրեշտակային ձայնիւ օրհնեսցուք զԱմենասուրբ զերրորդութիւնն, փառաւորելով զէայր, որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն։

Երգեցէք Տեառն երգ նոր եկեղեցիք սրբեցելոց, Քրիստոսի երկրպագելով, որ վերակոչեաց զամենս։

Սրբասաց ձայնիւն օրհնեսցուք, հոգևորական հընչմամբ գովեսցուք· սուրբ զէոգին փառաւորելով որ վերահանգոյց զամենս·

Տ. Սուրբ և Աստուածածին Մարիամ, ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան· մայր և աղախին մեծացուցանեմք։

Անկէզ մորենի և տաճար ընդհանուր լուսոյն. անարատ և անխախտելի կուսութիւն. մայր և.

Խորհուրդ կենաց և մայր կենդանութեան. և առագաստ հրափայլ ծագմամբ. մայր և.

ԷՂԷ Ապաւինեցաք ի խաչ քո Արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահպան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։

Բարձրեալ թագաւոր որ վասն մեր ելեր ի խաչ. և բարձեր սովաւ զյանցանս նախաստեղծին Ադամայ. աղաչեմք.

Փառք Հօր. Զլուխս սուրբ հաւատոյ և փայտ կենաց մարդկան յայտնեալ, զոր տեսեալ այսոյն պղծոյ կործանեցաւ անկանգնելի. աղաչեմք.

ՍՂՄ. Ալէ ալէ. Աստուած յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։ Աստուած լուր աղօթիս իմոյ, ունկնդիր բանից բերանոյ իմոյ։

Ա-էջ. Մարգ. ԵՒ ապա՝

Զայնեցեր առ Զաքարիա. Զօղեալ սարսեայ. 32

Եր գ. Յորժամ գրեալքն. . . . 40

ԱՒԱԴ ԿՈՂՄ.

ՍՂՂ Յամենայն ժամ աղաչանք իմ այս են ի մեզաց իմոյց սուրբ արա զիս Տէր։

Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ, աղաչեմ ըզքեզ թող ինձ Տէր։

Արտասուաց իմոց մի լըռեր Տէր. զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի։

Ֆ. Ըզքեզ Աստուածածին որ վերօրհնիս ի զօրաց հրեշտակաց. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք։

Ըզքեզ բնակ հրեղէն Աստուածութեանն, յիմանալի զօրացն երանեալ ազգ մարդկան.

Ըզքեզ մայր Լիմանուէլի, մարգարէին յառաջ գուշակեալ ազգ մարդկան.

ԷՂԷ. Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո սուրբ զեկեղեցի, ըզսա պահեա ի խաղաղութեան։

Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանս հրեշտակաց և մարդկան քաւարան. տուր սմա զանշարժ քո զխաղաղութիւն։

Փառք Հօր. Ի տաճարի փառաց սրբութեան քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա զառատ քո զողորմութիւն։

ՍՂՄ. Ալէ. ալէ Աստուած ողորմեա՛ մեզ և օրհնեա զմեզ. երևեցո զերեսս քո ի մեզ և ողորմեա՛ մեզ։ Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգինս ամենայն զփրկութիւնքս քո։

Ա-էջ. Մարգ. ԵՒ ապա՝

Ըստ օրինացն. Թագաւորդ հրեղինաց. . 30

Եր գ. Արարիչ և մարգարէք. . . . 40

ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆ·

ՀՆԳ. Ի ձայն մեծի զուարթնոյն և ի հնչումն հրաշալի փողոյն· ուր հողացեալ մարմինք մարդկան նորոգին· յայնմ աւուր ահեղին յիշեա՛ Տէր և զմեր զնընչեցեալսն· և հանգո՛ ընդ սուրբս քո։

Յորժամ նշան տէրունական ճառագայթիւք փայլի՝ և թագաւորդ թագաւորաց փառօք տեսանիս· յայնմ աւուր ահեղ·

Յորժամ ատեան դատաստանին զընի· և զըպրութիւնքք հրաշիցքն բանին· յայնմ աւուր·

Ֆ. Աստուածածին երկնային դուռն Աստուածային ձայնիւն աւետարանէր հրեշտակն· ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։

Ի Քերովբէս բազմեալ ընդ Հօր՝ անապականաբար բնակիլ հաճեցաւ ի քում յորովայնի· ուրախ լեր·

Որ բոցեղէն սրովբէիւք շրջափակեալ պահիւր· այսօր ի մէջ մարդկան ի գիրկըս հողեղինի յայանեալ· ուրախ·

ԻԷ. Փայտ կենաց՝ որ փոխանակ մահացու պըտղոյն՝ ըզՔրիստոս պտղաբերեցեր· պարըսպեալ պահեա՛ զուխտըս հաւատացելոց։

Քև բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց՝ ի սրովբէափակ պահպանութենէն պարսպեալ·

Փառ+ Հօր· Քև աղատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն· և քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք· պարըսպեալ·

ՍԿՄ. Ալէ· ալէ· Հոսեցար Տէր ընդ երկիր քո՝ և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Ա-էպ· Յովհ· Լ ապ՝

Փառաց ի փառս· Քահանայք և ժող· . . 36

Երգ· Ի դնել բեմին· 41

ՎԱՌ ՁԱՅՆ·

ՀՆԳ. Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա· որ փառօք Հօր հանդերձեալ ես գալ ի դատել զերկիր· արժանաւորեա՛ և զմեր ընդ սուրբս քո։

Հօր և Հոգւոյ համագոյակից՝ ի տիեզերական ահեղ Ատենին· արժանաւորեա՛·

Երկնի և երկրի արդար դատաւոր՝ յորժամ հատուցանես ըստ գործոց իւրաքանչիւրոց· արժա·

Ֆ. Մայր և կոյս աղախին Քրիստոսի· որ բարեխօսդ ես միշտ աշխարհի· քեզ երանեն ամենայն ազինք։

Մաքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ· տաճար և աթոռ Աստուածոյ Բանին· քեզ երա·

Քև հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս· և քև մերձեցաք ի փայտըն կենաց· քեզ երա·

ԻԷ. Ո՜վ պահապան որ ծագեցար յեդեմայ· նշան յաղթութեան ընդդէմ աներևոյթ թշնամւոյն։

Դու փակելոյ դրախտին բացող և առաջնորդ աւա·

զակին՝ որ զբոցեղէն սուրբն կապեաց Անեղին հրամանաւ։

Փառք Հօր։ Քն. ցնծան ստորայինքս ամենայն ի միւսանգամ քո գալըստեան։ և յաւէժ զուարճանան դասք անմարմնոցն առ էիցս։

Սղմ. Այլ։ ալէ։ Տէր լուր աղօթից իմոց։ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ։ և մի դարձուցաներ զերեսս քո յինէն։ Ցաւուր նեղութեան իմոյ՝ խոնարհեցո առիս զունկն քո։ յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Ա-էպ։ Ղ-ղ։ և ապա՝

Պարակցեալ անմարմ։ Ջահաւորեալ նշան։ . 34

Երգ։ Ցորժամ հնչիւն։ 41

ՉՈՐՐՈՐԴ ՉԱՅՆ։

Անսկիզբն Աստուած սկիզբն արարչութեան՝ ի հողոյ ստեղծեր ըզմարդն առաջին։ գործել և պահել յանպատում ի կեանս։ իսկ ի ստունգանել հրամանի քո Տէր՝ ըզվրճիռ մահու ի վերայ եդեալ՝ հող էիր անդրէն և ի հող դարձցիս։ և այժմ աղաչեմք զքոստեղծողդ ամենից՝ ընկալ և հանգո զհրաժարեալ հոգիս՝ յեօթնատեղեան լուսեղէն խորանս։ ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան՝ հոգւով հեզութեամբ յերկնից բարութիւնն։

Ոսկի եղեալս անպիտանացայ։ գեղեցկայարմար շինուածոյս քակտումն։ իմաստունքս յիմարեցայ՝ ի յալեաց մեղաց յոր ընկրկեցայ։ և այժմ աղաչ

կոչողն եհաս վերին կոչողին։ կոչնատէրն ահեղ կոչողն ահաւոր։ դատաւորն անաչառ՝ դատաստանն արդար։ հրեշտակք անողորմ դատին զմեղաւորս։ և այժմ աղաչեմք։

Գրթա Տէր ի հոգիս մեր ննջեցելոցն և յիշեա՛ ողորմութեամբ։ քանզի գինք սուրբ արեան քո են։ ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն և կան առաջի ահաւոր քո բեմին։

Զընկրկմեալքս յահագին մեղաց ծովուս ապրեցո՛ ի գեհենոյն ըղձաւանողս սուրբ Երրորդութեանդ։ ի յորժամ հրաշալի։

Զլուսաւորեալքս ծընընդեամբ սուրբ աւազանին մի բարկութեամբ խրատեր՝ և մի սրտմտութեամբդ քո յանդիմաներ։ ի յորժամ հրաշալի։

Հնգ. Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից թագաւոր փառաց՝ ամենակալ ամենակարող։ թող զմեղս մեր նընջեցելոցն։ և հանգո՛ ի խորանի քում ի յարքայական ի հանգստեան։

Որ ի նախնումն զմարգարէն Մովսէս լուսաւորեցեր Աստուածային փառաւք տեսլեամբ Աստուածութեանդ քո։ լուսաւորեա՛ և զմեր ննջեցեալսն։ և հանգո՛ ի խորանի։

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի ծնողի և Մօր քո։ յիշեա՛ զգինս արեան քո Տէր։ և դասաւո-

րեա՛ յերանաւէտ յանթառամ և յանտրտում ի կեանսդ՝ ի յարքայական ի հանգստեան։

Ե. Ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Որ զԲանն Աստուած յարգանդի կրեցեր Սրբուհի անարատ. և անճառապէս ծնար զվերաձգողն երկնից՝ ըզքեզ օրհնու՝

Որ էիր լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի քո գիրկը՝ և արեգականն արդարութեան եղեր արևելք՝ ըզքեզ օրհ՝

Էլ՝ Զօրութիւն Սուրբ խաչի քո Քրիստոս՝ որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի՝ սա պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ։

Քանզի ի սմա բարձրացար Աստուած՝ և ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ՝ սա պահեսցէ ըզմեզ՝

Փառք Հօր՝ Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստդ նըշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի՝ սա պահեսցէ՝

Ընդ Հոգւոյն արդարոյ կատարելոյ և զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո հանգո՛ մարդասէր։

Սղ՝ Ալէ՝ ալէ՝ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր՝ ըստ բանի քում իմաստուն արա՛ զիս։ Մըտցեն աղօթք իմ առաջի քո Տէր։ և բանիւ քով փրկեա՛ զիս։

Ա-էպ՝ Մաղ՝ Լ ապա՝

Զայնեցեր առ Ղազարոս՝ Ղ.ողեալ սարսեաց՝ 32

Եր՝ Տիրական յաթոռ նստիս՝ . . . 35

ՎԵՐՋ ՁԱՅՆ՝

Հգ՝ Հայր անսկիզբն բարեխնամ մարդասէր՝ որ ստեղծիչդ ես հոգւոց և մարմնոց՝ յիշեա՛ զննջեցեալսն մեր և հանգո՛ ընդ սուրբս քո։

Որդիդ Միածին որ գթածդ ես առ ամենեսեան՝ և խաչիւ և արեամբ գնեցեր զքո ժողովուրդս՝ յիշեա՛ զգինս արեան քո Տէր՝ և հանգո՛՝

Հոգիդ ճշմարիտ որ ազբիւրդ ես անըսպառելի՝ և լցուցիչ ամենայն բարութեանց՝ յիշեա՛ զննջեցեալսն՝

Ե. Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ։

Ո՛ր քան զերկինքս բարձրագոյն Մարիամ պարծանք եկեղեցւոյ՝ Քրիստոսի մայր՝

Ո՛ր քան զարեգակն պայծառագոյն Մարիամ՝ մի դադարիր բարեխօսել վասն մեր՝ Քրիստոսի՝

Էլ՝ Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում՝ սրբոյ՝ որով դատապարտեալ պարտեցաւ թըշնամին։

Սովաւ պահպանեա՛ զժողովուրդս քո Քրիստոս՝ որով երկրպագեմք քեզ ընդ Հօր և Հոգւոյն։

Փառք Հօր՝ Ի քեզ ապաւինիմք Քրիստոս՝ որ գալոցդ [illegible]ուրդ՝ որպէս զի փրկեսցես զմեզ յայնմ աւուր [illegible]ենին։

Սղ. Ալէ· ալէ· Ի խորոց կարդացի առ քեզ Տէր՝ Տէր՝ լուր ձայնի իմում։ Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։

Ա-էպ· Է ապա՝

Ըստ օրինացն· Թագաւորդ Հրեղինաց· . 30

Երգ· Իւսին պսակը· 36

ՊԵՏ. ՀԱՆՐՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գրադարան Библиотека
ՀՍԽՀ-ՍՍՀ
Ակ. Ա Մյասնիկյանի անվան

ՅԱՆԿ·

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Դիէրային

Տէր զի բազում 1
Ցիշեսցուք ի գիշերի 6
Առաւօտ լուսոյ 8
Աշխարհ ամենայն 10
Այսօր անճառ 13
Ի կարգալ — Նշանեցաւ (Սղ·) 23
Նորոգող տիեզերաց 24
Աստուած անեղ 28
Երգք (դէռ «Աստուած անեղ·) 37
Աստուած հզօր՝ Հայր 42
Եղիցի անուն Տեառն 43
Արի Տէր 44
Փառք յարութեան 44
Զամենայն աւուրս 45
Փառք ի բարձունս 46
ԶՅարութիւն զՓրկչին (Երէ) 47
Սուրբ Աստուած (ըստ պատշաճի) . . . 48
Եղիցի անուն Տեառն (Սղ·) 49
Նորաստեղծեալ 51
Զարարչական բանին 61
Խաչի քո Քրիստոս—Խաչն կենարար

Ամբոսպալ·

. 62
Յարևելից մինչ ի մուտս 63
Ճգնաւորք Աստուծոյ

Ճգնաւորք Ճշմարիտք 63
Լոյս Արարիչ Լուսոյ 64
Անեղանելիդ Աստուած 64
Ճանապարհ և Ճշմարտութիւն 65
Ճանապարհ բարի Քրիստոս 95

Յ.ամամոնոպ.

Միածին Որդի 65
Քրիստոս յարեաւ 65
Առաջի պատուական 66

Կէ-դ.ակամոպէ.

Խոնարհեցո՛ Տէր 66
Ապրեցո՛ զիս Տէր 67
Լոյս զուարթ 70
Սիրեցի զի լուիցէ) Ռեդէ+ 70
Եթուր երկիւղածաց)
Սուրբ Աստուած 47
Համբարձի զաչս իմ 71
Սուրբ ես Տէր 72
Ի քէն հայցեմք 74
Որ բնակեալն է 73
Աստ օրհնեցէք 76

Խաղաղականէ

Շնորհեա՛ մեզ Տէր 77
Նայեաց սիրով 79
Ի քէն հայցեմք 82
Արի Աստուած Տէր ողորմեա՛. 83

ԵՐԳԻՔ, ՇԱՐԱԿԱՆՔ, ԳԻՐՔ, ԱԼԵԼՈՒՔ ԵՒ ՍԱՂՄՈՍՔ.

Ս. Ծննդեան.

Այսօր տօն է 84
Խորհուրդ մեծ 85

Ով զարմանալի 86
Այսօր ձայնն 86
Քանզի երևեցաւ 87

Ս. Յարութեան.

Այսօր յարեաւ ի մեռելոց 88
Ցուցանեմ ձեզ եղբարք 89
Եւ յաւուրսն յայնոսիկ 90
Գովեա՛ Երուսաղէմ 92
Ցոյց մեզ Տէր—Հաճեցար 93
Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն 94
Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան 94
Աստուած ողորմեա՛ մեզ 95
Ցնծացէք առ Աստուած 96

Համբարձման.

Համբարձաւ Աստ.—Ծափս հար. 97
Համբարձէք իշխ.—Տեառն է 98

Ի Ծննդեան և ի Յարութեան ճրագալոյցի.

Յամին ութուտասներորդի 99

Ի քահ. Ս. Հաղորդութեան

Որ կազմեցեր 108
Այսօր անձառ 13
Ով անմահ հաց կենաց 108

Ճաղ.

Ողորմեա՛ ինձ 111
Օրհնեմք զքեզ 113
Խորհուրդ խորին 114
ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ (-Գ-ՂԼ) . 111— 139

ՇԱՐԱԿԱՆԻ ԸՍՏ ԾՐԱԳՐՈՑ ԵԿ.—ԾԽ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ.

Ա. Այսօր կանգնեցաւ 141
Ի գիշերին յորում 142

Բ. Կենդանութեան բաշխող 143
Իմաստուն կուսանքն 143
Նոր սքանչելիք 144
Արծաթսիրութեամբն 144
Յովսէփ Ճշմարիտ 145
Ընդ արշալոյսն 145
Այսօր երկնայինքն 145
Անկանիմք առաջի քո 146
Հայրատունկ այգւոյն 146
Այսօր զիմանալի 146
Էջմիածինն ի Հօրէ 147

Գ. Քրիստոս փառաց Թագ. 148
Յորժամ եկն Յիսուս 149
Ով սքանչելի 149
Պարգևատուն 149
Համբարձաւ Տէրն մեր 150
Առաքելոյ աղաւնոյ 150
Ապաւինեցաք ի Խաչ քո 151
Որ զգիտութիւն քո 151
Քև պարծի այսօր 152
Որ յարմատոց հարցն 152
Որք եկեալ հասեալ 152
Լուսաւորիչն ամենեցուն 153
Հայաստանեայց Հայր 153
Ուրախ լեր սուրբ եկեղեցի 154

Դ. Օրհնեցէք մանկունք 154
Զօրութիւն Սուրբ Խաչի 155
Հաւիկ մի պայծառ 155
Որ երկոքումբք 155

Նորահրաշ պսակ. 156
Անձինք նուիրեալք 156
Հրաշափառ Աստուած 157
Աստուածային հաւատոյ 157

Ե. Փառք Քրիստոսի 158
Էական բարւոյն (Նորամրաշ) 158
Հռիփսիմէ մեծ 160
Որ գերագոյն քան 160
Լերինք ամենայն 161

ՇԱՐԱԿԱՆԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ.

Ա2. Քեզ վայելէ 163
Յանձառ փառաց 163
Սուրբ Խաչն օգնական 163
Ակ. Զեռըք քո արարին 164
Ուրախ լեր Աստուածածին 164
Սեղան քո Տէր. 165

Բ2. Հրեշտակային ձայնիւ 165
Սուրբ և Աստուածածին 165
Ապաւինեցաք ի Խաչ քո 166

Բկ. Յամենայն ժամ 167
Ըզքեզ Աստուածածին 167
Ի վերայ վիմի հաւատոյ 167

Գ2. Ի ձայն մեծի զուարթնոյն 168
Աստուածածին երկնային 168
Փայտ կենաց 168

Գկ. Լոյս ի լուսոյ զմեզ 169
Մայր և Կոյս աղախին 169
Ով պահապան 169

Դ2. Անսկիզբն Աստուած 170
Գթա՛ Տէր ի հոգիս 171

Քանզի զքեզ օրհնեն 171
Ըզքեզ օրհնութեամբ 172
Զօրութիւն Ս. Խաչի 172

Դդ. Հայր անսկիզբն 173
Ի քեզ եմք ապաւինեալ 173
Սուրբ զԽաչ քո 173

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
Բ. յ—ՁԲՆ.	6	աշխատութիւից	աշխատութիւնից
1	2	գիշերի	գիշերի
17	22	էկան	էական
29	2	քո	քո
29	10	գերասյն	գերագոյն
37	10	Վ. Ս.	Վերափոխ. Սուրբ
56	21	նորոգդք	նորոգողք
77	15	և 77	(—ԼՐՐԴ)
89	4	ի յերնից	ի յերկնից
106	2	(ՔՈՅ ԲՈՂՈՔ)	բարձրացեալ
141	13	ասէ	(—ԼՐՐԴ)
146	12	Աստուածածնին	Աստուածածին
157	21	գիւաբաշն	գիւաբաղխ
158	19	եղաք	եղաք

144

200 գր

Հայաստանի Ազգային գրադարան
NL0444465